ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Զարգացումը
Կարգավորումը
Վերահսկողություն

2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները 2010 թվականին 5

Ֆինանսական համակարգի վերահսկողությունը և սպառողների շահերի պաշտպանությունը 2010 թվականին 23

Կադրերի վերապատրաստումը և համագործակցությունը այլ երկրների վերահսկողների հետ 2010 թվականին 27

ՀՀ ֆինանսական համակարգը 2010 թվականին 30

Առևտրային բանկեր 31

Ընդհանուր դրույթներ 31

Բանկային համակարգի կապիտալը 34

Բանկային համակարգի պարտավորությունները 37

Բանկային համակարգի ակտիվները 41

Բանկային համակարգի ֆինանսական արդյունքները 49

Բանկային համակարգի ֆինանսական ռիսկերը 53

Վարկային կազմակերպություններ 60

ՀՀ ապահովագրական շուկա 66

Արժեթղթերի շուկայի մասնակիցներ 75

Գրավատներ 81

Արտարժույթի առք ու վաճառքի փոխանակման կետեր, արժութային դիլերներ 81

Վճարահաշվարկային կազմակերպություններ 81

Վճարահաշվարկային համակարգ 83

Վերահսկողության զարգացման հեռանկարները 95

Հավելվածներ

Հավելված 1. Ֆինանսական համակարգի վերահսկողությունը և կարգավորումը *104*

Աղյուսակներ *112*

ՆԱԽԱԲԱՆ

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից բխող մարտահրավերները 2009 և 2010 թթ. Հայաստանի ֆինանսական համակարգում էական ցնցումներ չառաջացրին: 2010 թվականին ՀՀ ֆինանսական համակարգը գրեթե վերականգնեց մինչճգնաժամային եկամտաբերության մակարդակը:

2010 թ. շարունակվեցին դեռևս նախորդ տարվա երկրորդ կիսամյակից ՀՀ Կառավարության և Կենտրոնական բանկի կողմից իրականացված վարկավորման ծրագրերը: Նշված վարկավորման ծրագրերը, 2009 թ. իրականացրած հակաճգնաժամային ընդլայնողական դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունը, դրամի արժեզրկման դրսևորումները և միջազգային շուկաներում գների աճը 2010 թ. տարեսկզբից տնտեսությունում ձևավորեցին գնաճային միջավայր: Եվ չնայած այս պայմաններում Կենտրոնական բանկը 2010 թ. տարեսկզբից խստացրեց դրամավարկային քաղաքականությունը, այնուամենայնիվ վարկավորման առաջարկի մեծացման արդյունքում տարվա ընթացքում բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրվող վարկերի տոկոսադրույքները դրսևորեցին նվազման միտումներ:

ՀՀ ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակիցը բանկային համակարգն[1] է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 91%-ը:

ՀՀ բանկային համակարգը, դիմակայելով դեռևս նախորդ տարվա ճգնաժամային մարտահրավերներին, արդեն 2010 թ. վերանայեց և ակտիվացրեց վարկավորման քաղաքականությունը: Վարկավորման ակտիվացումը զուգորդվել է տարվա ընթացքում վարկերի որակի լավացմամբ: Բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակը 2010 թվականին բավականին բարձրացել է, սակայն դեռևս զիջում է ԱՊՀ շատ երկրների նույն ցուցանիշին: Բանկային համակարգի ակտիվների աճի տեմպը գերազանցել է անվանական ՀՆԱ-ի աճի տեմպը, ինչի արդյունքում բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը 2010 թվականին ավելացել է 2.6 տոկոսային կետով՝ կազմելով 44.5%: Բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցությունն ավելացել է 3.3 տոկոսային կետով և կազմել 25.3%:

2010 թվականին ՀՀ բանկային համակարգը պահպանել է զարգացման ու աճի միտումները և համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից բխող հետևանքների ներքո դրսևորել բարձր ճկունություն: Բանկային համակարգը 2010 թ. ապահովել է ակտիվների 17.7% աճ, կապիտալի 14.6% աճ և շահութաբերության բարձր մակարդակ (շահութաբերությունն ըստ ակտիվների կազմել է 2.2%, ըստ կապիտալի՝ 10.7%):

2010 թվականին Կենտրոնական բանկը իրականացրել է բանկային, արժեթղթերի, ապահովագրության շուկաների համահունչ զարգացմանն ուղղված բարեփոխումների շարունակական աշխատանքներ՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը, բնականոն զարգացումը և կատարելագործել վճարահաշվարկային համակարգը: 2010 թ. իրականացված կարևորագույն բարեփոխումներից է Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության համակարգի ներդրումը: Ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով վնաս կրած քաղաքացիներին այսուհետև կտրվի պատշաճ փոխհատուցում: Համակարգը կխթանի նաև ընդհանուր ապահովագրական շուկայի զարգացումը՝ ընդլայնելով մատուցվող ծառայությունները, բարձրացնելով առաջարկվող ծառայությունների որակը և գործընթացների արդյունավետությունը:

[1] *Այստեղ՝ ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկերը:*

2010 թ. ընդունվեց կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող օրենքների փաթեթը, որի հիման վրա Հայաստանում 2011 թվականից կներդրվի կամավոր, իսկ 2014 թվականից՝ պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչը: Այս բարեփոխումներն ունեն մեծ սոցիալական նշանակություն և ուղղված են բնակչության պատշաճ կենսամակարդակի պահպանմանը նաև կենսաթոշակի անցնելուց հետո:

2010 թ. Կենտրոնական բանկը շարունակել է ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի արդիականացմանը, ֆինանսական համակարգի վերահսկողությանը, սպառողների շահերի պաշտպանությանն ու հասարակության տարբեր նպատակային խմբերի տնտեսագիտական և ֆինանսական կրթմանը նպատակաուղղված լայնածավալ միջոցառումների իրականացումը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2010 ԹՎԱԿԱՆԻՆ

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտը մշտապես վերանայվում և կատարելագործվում է, ինչը շարունակվել է նաև 2010 թվականին: Իրական և ֆինանսական հատվածների շարունակական զարգացումները առաջ են բերում նոր մարտահրավերներին դիմակայելու և, հետևաբար, կարգավորման դաշտի վերանայման անհրաժեշտություն:

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները

Օրենսդրական փոփոխություններ

1. 2010 թվականի 2-րդ եռամսյակում ՀՀ Ազգային ժողովն ընդունել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված՝ ***«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը և դրա ընդունմամբ պայմանավորված՝ այլ օրենքների փոփոխությունները***:

Օրենքը սահմանում է ՀՀ տարածքում ընդհանուր օգտագործման ճանապարհներով երթևեկելու համար նախատեսված ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի կամ օրինական հիմքով տիրապետող այլ անձանց կողմից երրորդ անձանց պատճառված վնասներից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պարտականությունը:

Օրենքի հիմնական նպատակը ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց շահերի պաշտպանությունն է, մասնավորապես՝ նրանց պատճառված վնասի հատուցումն ապահովող արդյունավետ մեխանիզմների սահմանման միջոցով:

Պայմանագրով ապահովագրական գումարը չպետք է պակաս լինի՝

1) անձնական վնասների համար՝ 3 մլն ՀՀ դրամից՝ ըստ յուրաքանչյուր տուժողի, և 9 մլն ՀՀ դրամից՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի.

2) գույքին պատճառված վնասների համար՝ 1.5 մլն ՀՀ դրամից՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի:

Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն կարող են իրականացնել միայն այն ապահովագրական ընկերությունները, որոնք անդամակցում են Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյին (այսուհետ՝ Բյուրո):

Բյուրոն ունի մի շարք գործառույթներ. մասնավորապես՝ ԱՊՊԱ ոլորտում իր անդամ ապահովագրական ընկերությունների գործունեության համար պատշաճ պայմաններ ստեղծելու, մասնագիտական կանոնների կիրառումը և տուժած անձանց, ապահովադիրների շահերի պաշտպանությունն ապահովելու, ինչպես նաև ԱՊՊԱ համակարգի զարգացմանն աջակցելու նպատակով ընդունում է կանոններ և վերահսկում է իր անդամների կողմից այդ կանոնների պահպանումը: Բյուրոյի կանոնները գրանցվում են ԿԲ-ում:

Պատճառված վնասի չափը և դրանում անձի մեղավորությունը հաստատելու են Բյուրոյի կողմից որակավորված փորձագետները կամ այլ իրավասու մարմիններ (բուժական հաստատություններ, դատարան և այլն):

2. 2010 թվականի 2-րդ եռամսյակում ՀՀ Ազգային ժողովն ընդունել է ***««Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը***, որով երաշխավորված ավանդի չափերն ավելացվել են՝ դրամային ավանդի դեպքում դարձել են 4 միլիոն ՀՀ դրամ, իսկ արտարժութային ավանդի դեպքում՝ 2 միլիոն ՀՀ դրամ: Միևնույն ժամանակ, Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվել որպես միակ հիմնադիր, Հիմնադրամում կատարել մինչև հինգ միլիարդ ՀՀ դրամի ներդրում: Ընդունվել է նաև «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսվում է, որ եթե հատուցման դեպք առաջանալու պահին կարող է վտանգվել Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունությունը (իրացվելիությունը և/կամ վճարունակությունը), ապա Կենտրոնական բանկը իրավունք ունի Հիմնադրամին տրամադրելու բյուջետային երաշխիքով ապահովված վարկեր: Նշված օրենքների հետ մեկտեղ ընդունված ««Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքով սահմանվել է նաև, որ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին բյուջետային երաշխիք տրամադրվում է Կառավարության որոշմամբ՝ առանց ապահովման միջոցի:

3. 2010 թվականի 2-րդ եռամսյակում ՀՀ Ազգային ժողովն ընդունել է ***««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և ««Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքները:*** Օրենքների ընդունման նպատակը բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկերին ընտրության հնարավորության ընձեռումն է՝ իրենց մասնակիցների ռեեստրի վարումը հանձնել կամ Կենտրոնական դեպոզիտարիային, կամ մասնակիցների ռեեստրի վարման իրավասություն ունեցող՝ իրենց հետ չփոխկապակցված այլ մասնագիտացված կազմակերպությանը (պահառուներին): Միաժամանակ հստակեցվել է գործող օրենքի այն դրույթը, որի համաձայն՝ բաժնետիրական ընկերություն հանդիսացող ներդրումային ծառայություն մատուցող անձինք չեն կարող անձամբ վարել իրենց մասնակիցների ռեեստրը, ինչպես նաև դրա վարումը հանձնել իրենց հետ փոխկապակցված պահառուներին:

4. 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված ***«Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքը և դրա ընդունմամբ պայմանավորված՝ այլ օրենքների նախագծերը***:

- Օրենքով նախատեսվել են միջազգային պրակտիկայում տարածված գրեթե բոլոր մոդելները, որը շուկային կտա ընտրության լայն հնարավորություններ և հասկանալի կլինի օտարերկրյա մասնակիցների համար: Մասնավորապես, նախատեսվում է ստանդարտ և մասնագիտացված ֆոնդերի ստեղծման հնարավորություն, որոնք միմյանցից տարբերվում են ներդրումային քաղաքականությամբ, ինչպես նաև բաց, միջակայքային և փակ ֆոնդեր՝ կապված նրանց կողմից թողարկված արժեթղթերի հետգնման հնարավորության և պարբերականության հետ:

- Որպես ֆոնդի առանձին տեսակ՝ նախատեսվում են կենսաթոշակային ֆոնդերը, որոնց առանձնահատկությունները կսահմանվեն «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով.
- Իրավաբանական անձ չհանդիսացող պայմանագրային ֆոնդի ստեղծման համար նախատեսված է ֆոնդի կանոնների գրանցման, իսկ իրավաբանական անձի կարգավիճակով կորպորատիվ ֆոնդի համար՝ ֆոնդի գրանցման կարգ: Ընդ որում, գրանցման ժամանակ ներկայացվող կանոններին (կանոնադրությանը) ներկայացվում են առանձնահատուկ պահանջներ՝ ուղղված ֆոնդի մասնակիցների իրավունքների պաշտպանությանը:
- Առանձնահատուկ կարգավորման են ենթարկվում բաց ֆոնդերը, որոնց արժեթղթերը թողարկվում են շարունակական ձևով, չունեն հաստատագրված արժեք ու քանակ և ցանկացած պահի կարող են ներկայացվել հետգնման:
- Ֆոնդի արժեթղթերի թողարկման և հետգնման գինը պետք է համապատասխանի դրա հաշվարկային արժեքին, որը ենթակա է որոշման բաց ֆոնդի դեպքում՝ յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում, իսկ փակ և միջակայքային ֆոնդերի դեպքում՝ առնվազն ամիսը մեկ անգամ:
- Ակտիվների ներդրման կարևորագույն սկզբունքի համաձայն, ըստ որի՝ ֆոնդի ներդրումները պետք է բավարար չափով բազմազանեցված լինեն՝ ռիսկերի արդյունավետ բաշխման նպատակով, նախատեսվում են այն ակտիվները, որոնցում կարող են ներդրվել ֆոնդի ակտիվները և այդ ակտիվներում ռիսկերի բաշխման պահանջները՝ հաշվի առնելով ֆոնդի տարբեր տեսակների առանձնահատկությունները, ընդ որում, առավել խիստ պահանջներ են ներկայացվում ստանդարտ ֆոնդերին:
- Ֆոնդի ակտիվների կառավարումը պետք է հանձնվի ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցված և լիցենզավորված ներդրումային ֆոնդի կառավարչին, որն իրավասու է իրականացնելու միայն ֆոնդի կառավարման գործունեություն, իսկ համապատասխան թույլտվություն ստանալու դեպքում՝ նաև մատուցելու Օրենքով նախատեսված ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ: Ընդ որում, կենսաթոշակային ֆոնդի կառավարման գործունեության իրականացման համար կառավարիչը, բացի ֆոնդի կառավարման գործունեության լիցենզիայից, պետք է համապատասխանաբար ստանա նաև կամավոր կամ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվություն:
- Ներդրումային ֆոնդի ակտիվների պահառությունը պետք է հանձնվի ներդրումային ֆոնդի կառավարչի հետ չփոխկապակցված՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով արժեթղթերի պահառության ծառայություն մատուցող առևտրային բանկին, որին, ի լրումն նշված օրենքով արժեթղթերի պահառուի համար սահմանված պարտականությունների, ներկայացվում են լրացուցիչ պահանջներ և պարտականություններ:

5. 2010 թվականի հոկտեմբերին ՀՀ Ազգային ժողովի կողմից 1-ին ընթերցմամբ ընդունվել են ***«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները***:

- Այդ փոփոխությունների նպատակը վճարահաշվարկային կազմակերպությունների նկատմամբ լիցենզավորման և վերահսկողության պահանջների խստացման միջոցով այդ կազմակերպությունների և ֆինանսական համակարգի կայունության ամրապնդումն է և հուսալիության բարձրացումը:
- Վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվ՝ 100 միլիոն դրամի չափով: Ընդ որում՝ նշված դրույթն ուժի մեջ կմտնի 2012 թվականի հոկտեմբերի 1-ից: Իսկ մինչ այդ՝ գործող կազմակերպությունները ընդհանուր կապիտալի

չափը համալրելու են աստիճանաբար՝ 2011 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2012 թվականի ապրիլի 1-ը՝ 30 միլիոն դրամով, 2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2012 թվականի հոկտեմբերի 1-ը՝ 70 միլիոն դրամով:

- Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում վճարահաշվարկային կազմակերպությունների վճարունակությունն ապահովելու նպատակով սահմանել իրացվելիության նորմատիվ:
- Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց համար սահմանվել են լրացուցիչ պահանջներ:
- Հստակեցվել են վճարահաշվարկային ծառայությունների տեսակները, դրանց սահմանումները հնարավորինս համապատասխանեցվել են Եվրոմիության օրենսդրության պահանջներին:
- Կանոնակարգվել են վճարահաշվարկային կազմակերպություններին պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև այդ կազմակերպությունների ծառայությունների պատվիրակման հետ կապված հարցերը:

6. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների հետ միասին ՀՀ ԱԺ կողմից 1-ին ընթերցմամբ ընդունվել են նաև ***«Արժեթղթերի շուկայի մասին» և «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների փոփոխությունները:***

Փոփոխությունների նպատակը ներդրումային ընկերությունների և վարկային կազմակերպությունների գործունեության տարանջատումն է, քանի որ նման տարանջատման բացակայության պայմաններում այդ կազմակերպությունները, ըստ էության, նույնանում են: Առաջարկվող փոփոխությունների համաձայն՝ վարկային կազմակերպությունները չեն մատուցի ներդրումային ծառայություններ, բացառությամբ իրենց հաշվին և իրենց անունից արժեթղթերով գործարքներ կատարելուց (քանի որ միայն նշված գործառնություններն են կապված վարկային կազմակերպության գործունեության հետ), իսկ ներդրումային ընկերությունները չեն իրականացնի վարկային կազմակերպության գործունեություն:

7. 2010 թվականի հոկտեմբերին ՀՀ Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ ընդունել է ***«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագիծը և դրա ընդունմամբ պայմանավորված՝ այլ օրենքների փոփոխությունների նախագծերը***: Նախագծերի ներկայացման նպատակն է Հայաստանի Հանրապետության օրենսդրության որոշ խոչընդոտող նորմերի փոփոխության արդյունքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձանց հնարավորություն ընձեռել ներգրավելու ստորադաս փոխառություններ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստորադաս փոխառությունները լրացուցիչ կապիտալ ներգրավելու առավել արդյունավետ և արագ ճանապարհ են, քան, օրինակ, կանոնադրական կապիտալի ավելացումը:

8. 2010 թվականի դեկտեմբերին ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ Կառավարություն է ներկայացրել ***«Սնանկության մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքների փոփոխությունների նախագծերը***: Փոփոխությունների նպատակը գրավով, երաշխավորությամբ և երաշխիքով ապահովված պահանջներ ունեցող պարտատերերի պահանջների բավարարումն է սնանկության գործի ժամանակ՝ առանց մորատորիումի գործողության: Դա նշանակում է, որ ֆինանսական կազմակերպությունը կամ ցանկացած այլ

անձ իրավունք ունի, առանց սպասելու սնանկության գործընթացների ավարտին, ստանալու իր պահանջների բավարարում գրավադրված գույքից, երաշխիք կամ երաշխավորություն տված անձի միջոցներից:

Միևնույն ժամանակ, սնանկության գործընթացում գտնվող պարտապանի մյուս պարտատերերի շահերի պաշտպանության նպատակով սահմանվել է 2 հնարավոր տարբերակ.

- եթե անձը օգտվում է գրավադրված գույքից վաղաժամկետ բավարարում ստանալու իրավունքից (առանց սպասելու մորատորիումի գործողության ավարտին), ապա նա իրավունք չունի (այդ թվում՝ հետագայում) գրավի առարկայի արժեքը գերազանցող պահանջի բավարարում ստանալու պարտապանի այլ գույքից.
- եթե պարտատերը չի օգտվում վերը նշված իր իրավունքից, ապա նա իր պահանջների բավարարումը ստանում է մորատորիումից հետո, բայց ինչպես գրավադրված, այնպես էլ պարտապանի այլ գույքից:

9. 2010 թվականի չորրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ Կառավարություն է ներկայացրել ***«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների նախագծերը***: Այդ նախագծերի ներկայացման նպատակն է լուծել գրավի առարկա գույքի բռնագանձման ժամանակ առաջացող հարկային խնդիրները: Նախագծերով սահմանվել են, որ գրավի առարկա գույքի արտադատական կարգով իրացման այն դեպքերում, երբ գրավի առարկան ի սեփականություն է անցնում բանկին կամ վարկային կազմակերպությանը, իրացման հետևանքով ծագող եկամտահարկի վճարման պարտավորությունը հետաձգվում է մինչև բանկի կամ վարկային կազմակերպության կողմից երրորդ անձին այդ գույքի իրացումը, բայց ոչ ուշ, քան վեց ամիս ժամկետով: Ընդ որում, եկամտահարկի հաշվարկման նպատակով գրավատուի՝ գույքն օտարելուց ստացված եկամուտ է համարվում գրավ դրված գույքի իրացման գնի և վարկային պարտավորության դրական տարբերությունը:

Ենթաօրենսդրական փոփոխություններ

2010 թվականի ընթացքում Կենտրոնական բանկի կողմից մշակվել և փոփոխվել են բանկային գործունեությանն առնչվող հետևյալ իրավական ակտերը.

- Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում սահմանվել են օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի լիցենզավորման հետևյալ պայմանները.
  - օտարերկրյա բանկի վարկանիշն առնվազն պետք է լինի ԱԱ-(Aa3),
  - օտարերկրյա բանկի գրանցման վայրի երկրի բանկային վերահսկողությունը բավարարում է Բազելյան կոմիտեի կողմից մշակված «Արդյունավետ բանկային վերահսկողության հիմնարար սկզբունքները»,
  - օտարերկրյա բանկի գրանցման վայրի երկիրը համարվում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իմաստով համագործակցող երկիր, և տվյալ երկրի համար ՖԱԹՖ-ի կամ նմանատիպ այլ միջազգային կառույցի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հակակարգի անհամապատասխանության վերաբերյալ չի հրապարակվել որևէ հայտարարություն,

- ՀՀ կենտրոնական բանկի և օտարերկրյա բանկի գրանցման երկրի վերահսկող մարմնի միջև առկա է համաձայնագիր (փոխըմբռնման հուշագիր) բանկային վերահսկողության ոլորտում համագործակցության վերաբերյալ,
- առկա է օտարերկրյա բանկի կողմից տրված պարտավորագիր (երաշխավորագիր)՝ ՀՀ տարածքում օտարերկրյա բանկի մասնաճյուղի կողմից իր գործունեությունից բխող պարտավորությունները չկատարելու դեպքում դրանք օտարերկրյա բանկի կողմից առանց որևէ պայմանի (նախապայմանի) անհապաղ կատարելու վերաբերյալ,
- օտարերկրյա բանկը չպետք է խախտած լինի տնտեսական նորմատիվների պահանջները լիցենզավորման դիմումը ԿԲ ներկայացնելու օրվան նախորդող երկու տարվա ընթացքում,
- օտարերկրյա բանկը ԿԲ-ում կամ որևէ առևտրային բանկում պետք է բացած լինի ավանդ՝ առնվազն 200 միլիոն ՀՀ դրամի կամ համարժեք արտարժույթի չափով, ընդ որում՝ ավանդը ենթակա է հետվերադարձման բացառապես Կենտրոնական բանկի նախնական համաձայնության դեպքում:

Այս փոփոխությունները հնարավորություն կտան ապահովելու առողջ և ֆինանսապես կայուն օտարերկրյա բանկերի մուտքը ՀՀ ֆինանսական համակարգ՝ միաժամանակ երկրում ապահովելով ֆինանսական համակարգի կայունությունն ու ավանդատուների շահերի պաշտպանվածությունը:

- Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում կատարվել են փոփոխություններ ու լրացումներ:
  - Երկու փուլով փոփոխություններ են իրականացվել բանկերի կողմից ներգրավված միջոցների դիմաց իրականացվող պարտադիր պահուստավորման կարգում: Առաջին փուլով սահմանվել է, որ բանկերի կողմից արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում իրականացվող պարտադիր պահուստավորման (որը կազմում է ներգրավված միջոցների առնվազն 12 տոկոսը) 3%-ը պետք է իրականացվի ՀՀ դրամով, իսկ 9%-ը՝ համապատասխան արտարժույթով: Երկրորդ փուլով սահմանվել է, որ բանկերի կողմից արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում իրականացվող պարտադիր պահուստավորման (որի նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 12 տոկոսի չափով) 6%-ը պետք է իրականացվի ՀՀ դրամով և 6%-ը՝ արտարժույթով, ընդ որում՝ արտարժույթով ներգրավված միջոցների դրամային պահուստավորումը պետք է իրականացվի ըստ դրամով ներգրավված միջոցների պահուստավորման օրացույցի:
  - Բանկերի համար շարունակվել է արտարժույթի տնօրինման նորմատիվի հաշվարկումը, ընդ որում՝ սահմանվել է հաշվարկման տարբերակված մեթոդաբանություն: Մինչև 2010 թվականի օգոստոսի 1-ը նորմատիվն իրենից ներկայացրել է բոլոր արտարժույթների երկար դիրքերի հանրագումարի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը (10%), իսկ 2010 թվականի օգոստոսի 1-ից նորմատիվն իրենից ներկայացրել է բանկի արտարժութային համախառն դիրքի և ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը (10%): Նմանապես, մինչև 2010 թվականի օգոստոսի 31-ը բանկերը հաշվարկել են ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի երկար դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն

հարաբերակցությունը (7%), իսկ 2010 թվականի սեպտեմբերի 1-ից՝ ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի բաց դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի առավելագույն հարաբերակցությունը (7%):

- Սահմանափակվել է բանկի չբաշխված շահույթի տեսակարար կշիռը բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում: Բանկի չբաշխված շահույթը բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում պետք է ներառվի բանկի կանոնադրական կապիտալի առավելագույնը 150 տոկոսի չափով:
- Սահմանվել է, որ բանկի հիմնական կապիտալից պետք է նվազեցվեն նաև ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների կապիտալներում կատարված ներդրումները, եթե դրանք գերազանցում են սահմանված սահմանաչափերը:
- Սահմանվել է, որ բանկի Ն3 նորմատիվը չի հաշվարկվելու Կառավարության նկատմամբ:
- Կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկում արտարժութային ակտիվների համար սահմանվել են 50%-ով ավելի խիստ ռիսկի կշիռներ, քան նմանատիպ դրամային ակտիվների համար (մասնավորապես՝ դրամային ակտիվների համար սահմանված 50, 75, 100 և 150% ռիսկի կշիռները արտարժութային ակտիվների համար սահմանվել են, համապատասխանաբար, 75, 110, 150 և 225%):
- Սահմանվել է, որ «Օ-էմ-էքս Արմենիա» ԲԲԸ-ում վարկային ռեսուրսների շուկայում կնքված աշխատանքային մեկօրյա (օվերնայթ) վարկային պայմանագրերով տրամադրված միջոցները կանոնակարգ 2-ի իմաստով համարվում են բարձր իրացվելի ակտիվներ:
- Հստակեցվել է, որ արտարժույթի տնօրինման նորմատիվը չի կիրառվում բանկերի համախմբված հաշվետվությունների նկատմամբ:
- Սահմանվել է, որ 2010 թվականի օգոստոսի 1-ից առանց ածանցյալ գործիքների արտարժութային դիրքի հաշվարկում ներառվում են բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կառավարությունների, կենտրոնական բանկերի և օտարերկրյա բանկերի հետ կնքված ածանցյալ գործիքները:

Փոփոխությունը նպատակ է ունեցել կարգավորել Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիք հանդիսացող պարտադիր պահուստավորումը՝ նպաստելու համար բանկային համակարգում դրամայնացման մակարդակի բարձրացմանը: Միևնույն ժամանակ, փոփոխության միջոցով քայլեր են ձեռնարկվել բանկերի արտարժութային ռիսկերը զսպելու ուղղությամբ, ինչպես նաև հստակեցվել են բանկի կապիտալի հաշվարկում մտնող տարրերը՝ նպատակ ունենալով բարելավել բանկերի կողմից նորմատիվների հաշվարկման մեթոդաբանությունը:

- Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ փոփոխություններ են կատարվել «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերում և դրանց լրացման ցուցումներում» և «Վարկային կազմակերպությունների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերում և դրանց լրացման ցուցումներում»՝ ֆինանսական հաշվետվությունների կարգերի պահանջները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:
- Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգում»: Մասնավորապես՝

- Արտարժույթով տրամադրված խնդրահարույց ակտիվների պահուստավորման չափն ավելացվել է 20%-ով:
- Մեղմացվել է ժամկետանց ակտիվների դասակարգման պահանջը, և սահմանվել է, որ ժամկետանց լինելու հետևանքով չաշխատող համարվող ակտիվների դասակարգումն իրականացվում է՝ հիմք ընդունելով դասակարգման օրվա դրությամբ ակտիվի գծով առկա առավելագույն ժամկետանց օրերի քանակը՝ չաշխատող ընդհանուր օրերի քանակի փոխարեն:
- Հստակեցվել է ակտիվների վերաանայման, ԿԲ կողմից սուբյեկտիվ դասակարգման, ինչպես նաև ակտիվների մասնակի մարման դեպքերում ակտիվների հետագա դասակարգման կարգը:
- Սահմանվել է իրավասություն՝ պարտավորեցնել բանկին որոշակի գումարով պահուստ ձևավորել ակտիվների առանձին խմբի համար՝ առանց ակտիվի (ակտիվների) դասը փոխելու՝ ԿԲ կողմից սահմանված կարգի համաձայն:
- Սահմանվել է, որ բանկային ակտիվները տրման պահին չեն դասակարգվում, բայց դրանց գծով ձևավորվում է պահուստ՝ ակտիվի չապահովված մասով: Այս դրույթի կիրառման շնորհիվ իրենց վարկային պատմությունն այլևս չեն վատթարացնի այն վարկառուները, ովքեր բանկից կամ վարկային կազմակերպությունից բլանկային վարկ կստանան:
- Սահմանվել է, որ միայն իրավաբանական անձի երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված ակտիվների դասակարգման ժամանակ հիմք է ընդունվելու այդ իրավաբանական անձի և փոխառուի դասերից խստագույնը:
- Սահմանվել է, որ կարգի դրույթները չեն տարածվելու 1000 դրամը չգերազանցող ակտիվների վրա, որը հնարավորություն կտա բանկին և վարկային կազմակերպությանը չդասակարգելու այն վարկառուներին, որոնց նկատմամբ առկա են փոքր գումարի պահանջներ:
- Սահմանվել է, որ բանկը և վարկային կազմակերպությունը կարող են խստացնել ակտիվի դասը՝ վարկը վարկառուի կողմից ոչ նպատակային օգտագործելու դեպքում:
- Հստակեցվել է արտահաշվեկշռում հաշվառվող ակտիվների դուրսգրման և հարկման կարգը:

- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Երաշխիքային վճարները հաշվարկելու և բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին երաշխիքային վճարները հաշվարկելու, ավանդատուների թվի և հատուցման ենթակա գումարի վերաբերյալ հաշվետվության ներկայացման կարգում» և «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման կարգում», մասնավորապես.
  - Փոփոխվել են երաշխավորված ավանդների չափերը՝ դրամային ավանդի դեպքում սահմանվել է 4 մլն ՀՀ դրամ, արտարժութային ավանդի դեպքում՝ 2 մլն ՀՀ դրամ: Այս փոփոխությունը պայմանավորված է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով:

- Կրճատվել են հաշվետվությունների՝ բանկերի կողմից ԿԲ, ԿԲ կողմից Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ և Հիմնադրամի կողմից ԿԲ ներկայացման ժամկետները:
- Հստակեցվել է օրենքով սահմանված հատուցման դեպք տեղի ունենալու ժամանակ Կենտրոնական բանկի կողմից Հիմնադրամին անվճարունակ բանկի ավանդների և ավանդատուների վերաբերյալ տվյալների բազաների տրամադրման կարգը:

- Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններում» կատարվել են փոփոխություններ ու լրացումներ:
  - Սահմանվել են արտարժութային ռիսկի կառավարմանը վերաբերող դրույթներ:
  - Ամրագրվել են իրացվելիության ռիսկի կառավարման նոր պահանջներ, մասնավորապես՝ սահմանվել է իրացվելիության ճգնաժամի (չնախատեսված իրավիճակների) պայմաններում գործողությունների ծրագրի առկայության և այն պարբերաբար վերանայելու պահանջ:
  - Սահմանվել են երկրի ռիսկի կառավարմանը վերաբերող դրույթներ:
  - Սահմանվել են պատշաճ գործարար վարվելակերպի դրույթներ, մասնավորապես՝ բանկի կողմից մատուցվող ծառայությունները, շահերի բախումների կանխարգելումը և կարգավորումը, բողոքների քննման գործընթացները, բանկի կողմից հաճախորդների սպասարկման քաղաքականությունը նկարագրող ներքին իրավական ակտերի նկատմամբ նվազագույն պահանջներ:

Նշված փոփոխությունների նպատակն է բարելավել բանկերում ներքին հսկողության համակարգերը, մասնավորապես՝ արտարժութային և իրացվելիության ռիսկերի կառավարման մասով, իսկ գործարար վարվելակերպի դրույթների սահմանումը բանկի հաճախորդների շահերի պաշտպանության բավարար մակարդակ ապահովելու նպատակ է հետապնդում:

- Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ «ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող համախմբված հաշվետվությունների կազմման կարգում» կատարվել են փոփոխություններ, ըստ որոնց՝ համախմբված հաշվետվությունների ձևերն ու բովանդակությունը համապատասխանեցվել են գործող «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ով պահանջվող հաշվետվություններին, ինչպես նաև հաշվային պլանի հաշիվներին:

- Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից ընդհանուր ժողովի որոշմամբ բանկի լուծարման նախնական համաձայնություն և լուծարման թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերի ցանկը», որի նպատակն է սահմանել ընդհանուր ժողովի որոշմամբ առևտրային բանկերի լուծարման դեպքում Կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը:

- Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ հավանության է արժանացել ֆինանսական կազմակերպություններում «Գործարար գործընթացների անընդհատության կառավարման ձեռնարկը», որը խորհրդատվական բնույթ ունի: Ձեռնարկում սահմանվել են գործարար գործընթացների անընդհատության կառավարման համակարգի ներդրման համար անհրաժեշտ միջոցառումների և փուլերի նկարագրությունը, դրանց իրականացման կարգը և սկզբունքները: Ձեռնարկը նպատակ ունի աջակցելու ֆինանսական կազմակերպություններում գործարար գործընթացների անընդհատության կառավարման համակարգի ներդրմանը և հետագա կատարելագործմանը, ինչպես նաև բարձրացնելու այդ գործընթացի կազմակերպման արդյունավետության մակարդակը:

Ապահովագրական համակարգի գործունեության կարգավորման դաշտում 2010 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- Ապահովագրական շուկայի կարգավորման դաշտում «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական դաշտի ձևավորման նպատակով 2010 թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից կատարվել են մի շարք միջոցառումներ:
  - ՀՀ ԿԲ նախագահի 28.06.2010թ. թիվ 1/669 Լ որոշմամբ հաստատվել են «Երաշխավորման ֆոնդի կանոնները», որով սահմանվել են Երաշխավորման ֆոնդի միջոցների ձևավորման, դրանց կառավարման կանոնները, ինչպես նաև Երաշխավորման ֆոնդի միջոցների անբավարարության չափանիշները և այդ մասին որոշման կայացման կարգը:
  - ՀՀ ԿԲ խորհրդի 29.06.2010թ. թիվ 150-Ն որոշմամբ հաստատվել է ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգն ու ժամկետները», որի նպատակն է Բյուրոյի գործունեության թափանցիկության ապահովումը, ինչպես նաև վերահսկողական, վերլուծական և վիճակագրական նպատակներով օգտագործվող տեղեկատվության ստացումը:
  - ՀՀ ԿԲ խորհուրդը 2010 թ. դեկտեմբերի 21-ին ընդունել է ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության երաշխավորման ֆոնդի միջոցների տեղաբաշխման անվտանգության և իրացվելիության չափանիշները սահմանելու մասին» թիվ 344-Ն որոշումը: Որոշմամբ սահմանվել է Երաշխավորման ֆոնդի միջոցների տեղաբաշխման ուղղությունների սահմանաչափերը՝ ապահովելով Երաշխավորման ֆոնդի միջոցների անվտանգությունը:
- «Ապահովագրական բրոքերների հաշվետվությունների ձևը, տեղեկատվության կազմը և ներկայացման կարգն ու ժամկետները» հաստատելու մասին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 197-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական բրոքերների հաշվետվությունների ձևը, տեղեկատվության կազմը և ներկայացման կարգն ու ժամկետները» հավելվածում կատարվել են որոշ փոփոխություններ և լրացումներ, որոնց արդյունքում հիմնականում փոփոխվել է ապահովագրական բրոքերների կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկատվության կազմը: Նշված փոփոխություններն ու լրացումները ուղղված են ապահովագրական բրոքերների գործունեության վերլուծության և հեռակա վերահսկողության իրականացման արդյունավետության բարձրացմանը:
- ՀՀ ԿԲ խորհրդի 29.06.2010թ. թիվ 151-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 3/02-ում, որոնց նպատակն է ապահովագրական ընկերությունների գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների համակարգը դարձնել առավել ճկուն՝ ապահովագրական ընկերությունների ռիսկայնության իրական մակարդակը արտացոլելու և առավել արդյունավետ՝ ապահովագրական ընկերությունների գործունեության ռիսկայնությունը զսպելու տեսանկյունից: Կանոնակարգ 3/02-ում կատարվել են հետևյալ հիմնական փոփոխությունները.

- Վճարունակության նորմատիվի փոխարեն սահմանվել է կապիտալի համարժեքության նորմատիվ: Այն ներառում է գործող կանոնակարգով սահմանված վճարունակության նորմատիվը, որը զսպում է ապահովագրական ռիսկը, և ռիսկով կշռված ակտիվների բաղադրիչը, որը զսպում է ապահովագրական ընկերությունների վարկային, արտարժութային և գործառնական ռիսկերը: Հստակեցվել է ընդհանուր կապիտալի մեծության հաշվարկը՝ հաշվի առնելով վերահսկողության ընթացքում ի հայտ եկած ռիսկերը:
- Որոշ փոփոխություններ են կատարվել նաև Ն2, Ն3, Ն4 և Ն5 նորմատիվների հաշվարկման մեթոդաբանությունում, որոնք հիմնականում նպատակաուղղված են նշված նորմատիվները ռիսկերի արտացոլման տեսանկյունից առավել ճկուն դարձնելուն:
- Ն3 նորմատիվի հաշվարկից հնարավորություն է տրվել նվազեցնելու BBB վարկանիշ ունեցող վերաապահովագրողի մասնակցության չափը՝ հաշվի առնելով ապահովագրական ընկերության և BBB վարկանիշ ունեցող վերաապահովագրողի համագործակցության պատմությունը: Կատարված փոփոխություններով բարենպաստ պայմաններ են ստեղծվել ՀՀ ապահովագրական ընկերությունների և BBB վարկանիշ ունեցող վերաապահովագրական ընկերությունների համագործակցության հետագա զարգացման համար՝ չվտանգելով ՀՀ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունությունը:

- «Տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 3/03-ում կատարվել են փոփոխություններ, որոնց հիմնական նպատակը տեխնիկական պահուստներում ապահովագրության պայմանագրերից բխող պոտենցիալ պարտավորությունների առավել ճշգրիտ արտացոլումն է:
- ՀՀ ԿԲ խորհրդի 29.11.2010թ. թիվ 316-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ներկայացման ձևը, կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ում: Փոփոխությունների արդյունքում հստակեցվել են ապահովագրական գործակալների (իրավաբանական անձ, ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր) հաշվառման համար պահանջվող փաստաթղթերը, ապահովագրական գործակալների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ստացման նպատակով սահմանվել են լրացուցիչ տեղեկատվության տրամադրման պահանջներ, ինչպես նաև շտկվել են կանոնակարգում ի հայտ եկած թերությունները:

- ՀՀ ԿԲ խորհրդի 29.11.2010թ. թիվ 315-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով պատվիրակման ենթակա գործառույթները, ապահովագրական գործառույթների պատվիրակման նախնական թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, դրանց բովանդակությունը, ներկայացման կարգն ու ձևը և նախնական թույլտվություն ստանալու կարգը և պայմանները» կանոնակարգ 3/07-ում, որոնց համաձայն՝ ապահովագրական ընկերությունների կողմից պատվիրակվող գործառույթների մեջ ներառվել է նաև ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննությունը:
- ՀՀ ԿԲ խորհրդի 07.12.2010թ. թիվ 327-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ում: Կատարված փոփոխությունները պայմանավորված են մի շարք նորմատիվ իրավական ակտերի փոփոխություններով, վերահսկողական, վերլուծական և վիճակագրական նպատակներով օգտագործվող տեղեկատվության նոր կազմի սահմանումով, ինչպես նաև վերլուծական նպատակներով որոշ հաշվետվական ձևեր առավել կիրառելի դարձնելու անհրաժեշտությամբ:
- ՀՀ ԿԲ խորհրդի 09.11.2010թ. թիվ 298-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը» հաստատելու մասին» ՀՀ ԿԲ խորհրդի 02.10.2007թ. թիվ 314-Ն որոշման մեջ: Ըստ փոփոխությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունները հաշվապահական հաշվառումը պետք է իրականացնեն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն: Կատարված փոփոխությունների նպատակն է ապահովագրական ընկերությունների համար վերը նշված ստանդարտների պահանջներին համապատասխանող հաշվային պլանի ապահովումը:

Արժեթղթերի շուկայի կարգավորման դաշտում 2010 թվականին Կենտրոնական բանկի կողմից մշակվել և կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- Հաստատվել է «Արժեթղթերը հանձնելու առաջարկի հայտարարագրի կազմը, առաջարկի և դրա պայմանների փոփոխությունների հրապարակման կարգը, առաջարկի շուկայական գնի հաշվարկման կարգը, արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկի իրականացման կարգը արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրի թույլտվության դադարեցման դեպքում, արժեթղթերը հանձնելու առաջարկն ընդունելու կամ մերժելու մասին ցանկացած հրապարակային առաջարկության կամ խորհրդի կատարման կարգը» կանոնակարգ 4/10-ը, որի նպատակն է ունենալ արժեթղթերը հանձնելու առաջարկը կարգավորող այնպիսի կանոններ, որոնք լավագույնս կպաշտպանեն տվյալ արժեթղթերի սեփականատերերի շահերը և հնարավորինս կհամապատասխանեն Եվրոմիության չափանիշներին:

- Հաստատվել է «Ներդրումային ընկերություններում ստուգումների իրականացման ձեռնարկը», որը հնարավորություն կընձեռի ապահովելու ներդրումային ընկերություններում ամբողջական և համակողմանի ստուգումների իրականացումը, վերահսկողների կողմից ներդրումային ընկերություններում կատարված ստուգումների ընթացքում անհրաժեշտ նվազագույն գործընթացների իրականացումը, տարբեր վերահսկողների կողմից ստուգումների իրականացման, ստուգման արդյունքների ամփոփման, ստուգման արդյունքների փաստաթղթավորման միասնական մոտեցումների կիրառումը: Բացի այդ, սույն ձեռնարկի նպատակն է ներդնել ներդրումային ընկերությունում ստուգման արդյունքների գնահատման արդյունավետ համակարգ՝ ըստ ստուգման առանձին բաժինների, որը հնարավորություն կտա մեկ աղյուսակում ներառված գնահատականների միջոցով ամբողջական պատկերացում կազմելու, թե ներդրումային ընկերության որ բնագավառներն են առավել ռիսկային, որ ոլորտներում խնդիրներ և թերություններ կան և ըստ այդմ նախատեսել ռիսկերի կանխարգելմանը, խնդիրների և թերությունների վերացմանը ուղղված վերահսկողական միջոցառումներ:
- Լրացումներ են կատարվել «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ում: Նշված լրացումների նպատակն է հնարավորինս հստակեցնել արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայություն մատուցող անձանց կողմից փաթեթի կառավարման արդյունավետությունը գնահատելու նպատակով հաճախորդներին առաջարկվող իմաստալից հենանիշի առանձնահատկությունները:
- Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ում, որի նպատակն է հաշվետու թողարկող հանդիսացող բանկերի համար բացառել բանկային ոլորտը և արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությունների կրկնակի կամ հակասական պահանջների առկայությունը:
- Հաստատվել է «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հաճախորդների միջոցների պաշտպանության կանոնները» կանոնակարգ 4/12-ը: Կանոնակարգի նպատակն է սահմանել ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հաճախորդների միջոցների պաշտպանության սկզբունքներ, որոնք կապահովեն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից հաճախորդների միջոցների տարանջատված հաշվառումը, կբացառեն դրանց չթույլատրված օգտագործումը և, ըստ այդմ, կապահովեն երաշխիքներ դրանց ժամանակին վերադարձելիության համար:
- Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ում: Կանոնակարգում փոփոխությունների և լրացումների կատարման նպատակը հետևյալն է.
  - Ներդրումային ընկերությունների համար սահմանվել է կապիտալի համարժեքության նոր նորմատիվի սահմանաչափ և հաշվարկման կարգ, որով պայմանավորված՝ ներդրումային ընկերությունների կողմից ԿԲ ներկայացվող հաշվետվությունները համալրվել են կապիտալի համարժեքության նորմատիվի վերաբերյալ նոր հաշվետվական աղյուսակով:
  - Արժեթղթերի հանձնաժողովի միջազգային կազմակերպության (IOSCO-ի) սկզբունքներին հնարավորինս համապատասխանեցնելու համար սահմանվել է դրույթ, համաձայն որի՝ ներդրումային

ընկերությունները կտեղեկացնեն ԿԲ-ին իրենց նորմատիվային ընդհանուր կապիտալի՝ որոշակի սահմանաչափից նվազման վերաբերյալ:

- Կանոնակարգ 4/03-ով նախկինում սահմանված հաշվետվական ձևերի համաձայն՝ ԿԲ էին ներկայացվում միայն ածանցյալ գործիքներով նոր կնքված գործարքների վերաբերյալ տեղեկությունները, այսինքն՝ նախկինում գործող հաշվետվական ձևերը հնարավորություն չէին տալիս տեղեկություններ ստանալու ածանցյալ գործիքներով նախկինում կնքված գործարքների էական պայմանների փոփոխությունների վերաբերյալ: Ուստի, նշված սահմանափակումը հնարավորություն չէր տալիս ածանցյալ գործիքներով չմարված գործարքների վերաբերյալ ճշգրիտ ամփոփ տեղեկատվություն ստանալու պահի դրությամբ: Այս խնդրի լուծման նպատակով Կանոնակարգ 4/03-ում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որոնց համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձինք պարտավոր են Կենտրոնական բանկ ներկայացնել տեղեկություններ նաև ածանցյալ գործիքներով նախկինում կնքված գործարքների պայմաններում փոփոխությունների վերաբերյալ:
- Կանոնակարգ 4/03-ի համաձայն՝ ներդրումային ընկերությունները ԿԲ էին ներկայացնում Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի օգտին վճարված պարտադիր վճարների վերաբերյալ հաշվետվություն: Նշված հաշվետվության ներկայացման անհրաժեշտություն չկա, քանի որ Կենտրոնական բանկի ներքին հաշվետվության միջոցով այդ տեղեկությունները կարելի է ստանալ: Ուստի, Կանոնակարգ 4/03-ում կատարվել են փոփոխություններ, որոնց համաձայն՝ ներդրումային ընկերությունները այսուհետ չեն ներկայացնի հաշտարարի գրասենյակի օգտին վճարված պարտադիր վճարների վերաբերյալ հաշվետվությունը:

- Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ում: Կանոնակարգում փոփոխությունների և լրացումների կատարման նպատակը հետևյալն է.
  - Կանոնակարգ 5/03-ում կարգավորվող շուկայի օպերատորի եկամուտների և ծախսերի վերաբերյալ հաշվետվական ձևը հնարավորություն չէր տալիս պարզորոշ պատկերացում կազմելու Օպերատորի եկամուտների և ծախսերի մասին, մասնավորապես՝ հաշվետվությունը հնարավորություն չէր ընձեռում տարանջատելու ֆոնդային բորսայի անդամ հանդիսացող և այլ կարգավորվող շուկաների մասնակիցներից ստացված անդամավճարները, միջնորդավճարները և այլն: Փոփոխությունների արդյունքում հավելյալ տվյալներ կստացվեն Օպերատորի եկամուտների և ծախսերի գոյացման աղբյուրները, հնարավոր ռիսկերը առավել ճշգրիտ գնահատելու և Օպերատորի ֆինանսական կայունության վերաբերյալ կարծիք կազմելու համար:
  - «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս Արմենիա»-ի կողմից կազմակերպվել է վարկային ռեսուրսների առևտրի հարթակը, որով պայմանավորված՝ կանոնակարգ 5/03-ը համալրվել է նոր հաշվետվական ձևով, որտեղ կարտացոլվեն վարկային ռեսուրսներով կնքված գործարքները:
  - Կանոնակարգ 5/03-ով նախկինում սահմանված հաշվետվական ձևերի համաձայն՝ ԿԲ էին ներկայացվում միայն նոր կնքված ռեպո գործարքների վերաբերյալ տեղեկությունները, այսինքն՝ նախկինում գործող հաշվետվական ձևերը հնարավորություն չէին տալիս տեղեկություններ ստանալու

նախկինում կնքված ռեպո գործարքների էական պայմանների փոփոխությունների վերաբերյալ: Ուստի, նշված սահմանափակումը հնարավորություն չէր տալիս չմարված ռեպո գործարքների վերաբերյալ ճշգրիտ ամփոփ տեղեկատվություն ստանալու պահի դրությամբ: Այս խնդրի լուծման նպատակով կանոնակարգ 5/03-ում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որոնց համաձայն՝ օպերատորը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել տեղեկություններ նաև նախկինում կնքված ռեպո գործարքների պայմաններում փոփոխությունների վերաբերյալ:

Վարկային կազմակերպությունների և այլ ֆինանսական ինստիտուտների գործունեության կարգավորման դաշտում 2010 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- «Վարկային կազմակերպությունների գրանցման և լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման և գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպության գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ում սահմանվել է, որ վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման քննության թեստերը ենթակա են հրապարակման 2011 թվականի մարտի 1-ից:
- Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ «Վարկային կազմակերպության գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում կատարվել են փոփոխություններ՝ կապված վարկային կազմակերպությունների կողմից միջոցների ներգրավման, պարտատոմսերի թողարկման և հրապարակային տեղաբաշխման միջոցով փոխառությունների ներգրավման, վարկային կազմակերպությունների կողմից արտարժույթի առուվաճառքի գործառնությունների իրականացման, ինչպես նաև վարկային կազմակերպությունների կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկման հետ: Մասնավորապես.
  - Սահմանվել է, որ վարկային միությունները և խնայողական միությունները կարող են միջոցներ ներգրավել ֆիզիկական անձ հանդիսացող իրենց այն մասնակիցներից, որոնց մասնակցությունը վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում կազմում է առնվազն 5%: Լիզինգային, ֆակտորինգային և ունիվերսալ վարկային կազմակերպությունները ֆիզիկական անձ հանդիսացող իրենց մասնակիցներից կարող են ներգրավել փոխառություն միայն այն դեպքում, եթե տվյալ մասնակցի մասնակցությունը վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում կազմում է առնվազն 5%, կամ եթե փոխառության գումարը կազմում է առնվազն 30 մլն ՀՀ դրամ: Ընդ որում, վերջին դեպքում վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալը պետք է կազմի առնվազն 1 մլրդ ՀՀ դրամ: Նշված փոխառության վերադարձը չի երաշխավորվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:
  - Սահմանափակվել են վարկային կազմակերպությունների առանձին տեսակների կողմից արտարժույթի առուվաճառքի գործառնությունները, մասնավորապես՝ վարկային միությունները և խնայո-

ղական միությունները կարող են արտարժույթի առուվաճառք իրականացնել անկանխիկ (ընդ որում՝ խնայողական միությունները՝ միայն իրենց մասնակիցների հետ), իսկ կանխիկ ձևով՝ միայն իրենց կողմից տրամադրված վարկերի սպասարկումն իրականացնելու դեպքում և չափով: Արտարժույթի առուվաճառք իրականացնելիս գործարքի գումարը կարող է կլորացվել 5000 ՀՀ դրամի շրջանակներում: Լիզինգային, ֆակտորինգային և ունիվերսալ վարկային կազմակերպությունները կարող են իրականացնել արտարժույթի կանխիկ առուվաճառք, եթե դա սահմանված է իրենց կանոնադրությամբ (բացառությամբ իրենց կողմից տրամադրված վարկերի սպասարկումն իրականացնելու դեպքում և չափով, ընդ որում՝ այդ դեպքում գործարքի գումարը կարող է կլորացվել 5000 ՀՀ դրամի շրջանակներում), ընդ որում՝ տվյալ դեպքում վարկային կազմակերպության վրա տարածվում են բոլոր տնտեսական նորմատիվները և վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի նվազագույն պահանջը բարձրանալու է մինչև 1 մլրդ ՀՀ դրամ՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

- Լիզինգային, ֆակտորինգային և ունիվերսալ վարկային կազմակերպությունները կարող են պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավել Կենտրոնական բանկի համաձայնության դեպքում: Ընդ որում՝ վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալը պետք է կազմի առնվազն 1 մլրդ ՀՀ դրամ՝ մինչև ներգրավված փոխառության ամբողջ գումարի մարումը, իսկ պարտատոմսերի մարումը չի երաշխավորվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:
- Նոր ստեղծվող լիզինգային, ֆակտորինգային և ունիվերսալ վարկային կազմակերպությունները կարող են իրականացնել արտարժույթի կանխիկ առուվաճառք, եթե նրանց ընդհանուր կապիտալը առնվազն 1 մլրդ ՀՀ դրամ է:
- Սահմանվել է դրույթ, ըստ որի՝ չբաշխված շահույթը վարկային կազմակերպության կապիտալի հաշվարկում մասնակցում է բանկի համալրված կանոնադրական կապիտալի առավելագույնը 150 տոկոսի չափով:
- Սահմանվել է, որ վարկային կազմակերպության հիմնական կապիտալից նվազեցվում են վարկային կազմակերպության կատարած ներդրումները այլ առևտրային կազմակերպություններում, եթե դրանք գերազանցում են սահմանված մեծությունները:
- Կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկման ժամանակ վարկային ռիսկի արտարժութային տարրերի համար սահմանվել են 50 տոկոսով ավելի խիստ ռիսկի կշիռներ, քան համապատասխան դրամային հոդվածների համար:
- Լիզինգային կազմակերպություններին թույլատրվել է իրականացնել ֆակտորինգային գործառնություն, եթե նրանց կապիտալի համարժեքության նորմատիվը կազմում է առնվազն 10 տոկոս:
- Վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող գործառնությունների շարքից հանվել է վարկային քարտեր թողարկելու գործառնությունը:

Փոփոխությունների նպատակն է կարգավորել վարկային կազմակերպությունների կողմից միջոցների ներգրավման գործընթացը, վարկային կազմակերպությունների համար ստեղծել ֆինանսական միջոցների ներգրավման նոր աղբյուր՝ պարտատոմսերի թողարկման միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություններ ներգրավելու միջոցով, ինչպես նաև բարելավել վարկային կազմակերպությունների կապիտալի հաշ-

վարկման մեթոդաբանությունը: Միևնույն ժամանակ, փոփոխությունը նպատակ է հետապնդել զսպել վարկային կազմակերպությունների առանձին տեսակների կողմից արտարժույթի կանխիկ առուվաճառք իրականացնելու ժամանակ առաջացող հնարավոր ռիսկերը:

- Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ փոփոխություններ են կատարվել «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ում, ըստ որոնց՝ հաշվետվությունների ձևերը և լրացման կարգը համապատասխանեցվել են «Վարկային կազմակերպության գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում կատարված փոփոխություններին:
- Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվել է «Արտարժույթի առուվաճառքի և արտարժույթի առուվաճառքի սակարկությունների ընթացքում գնային չարաշահումների արգելումը, գնային չարաշահումների ազդակները և Կենտրոնական բանկին գնային չարաշահումների մասին տեղեկացման կարգը» կանոնակարգ 11/01-ը, որի նպատակն է արգելել արտարժույթի շուկայում գնային չարաշահումները:
- Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվել է «Էլեկտրոնային փող թողարկելու թույլտվության տրամադրման, կասեցման և դադարեցման կարգն ու պայմանները, էլեկտրոնային փող թողարկողներին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16/1-ը, որով սահմանվել են ՀՀ տարածքում էլեկտրոնային փող թողարկող կազմակերպության կողմից էլեկտրոնային փող թողարկելու թույլտվության տրամադրման, կասեցման և դադարեցման կարգն ու պայմանները, էլեկտրոնային փող թողարկողներին ներկայացվող պահանջները:
- Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվել է «Էլեկտրոնային փողերի թողարկման և սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողերով գործարքների իրականացմանը ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16/2-ը: Սույն կարգով սահմանվել են էլեկտրոնային փողերի թողարկման և սպասարկման, հաշվետվությունների լրացման և տրամադրման, պարտավորությունների մարման կարգն ու պայմանները, գործարքների իրականացմանը ներկայացվող պահանջները: Սահմանվել են նաև էլեկտրոնային փողերով գործարքների իրականացման ընթացքում ներքին հսկողության և անվտանգության ռիսկերի կառավարմանը ներկայացվող պահանջներ:
- Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվել է «Վճարահաշվարկային կազմակերպությունների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման կարգը»: Սույն կարգով սահմանվել են ՀՀ տարածքում գործող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման կանոնները, որոնք համապատասխանեցվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջներին:

Սպառողների շահերի պաշտպանության և շուկայի վարվելակերպի ոլորտի կարգավորման դաշտում 2010 թվականին մշակվել և փոփոխվել են հետևյալ իրավական ակտերը.

- ՀՀ ԿԲ խորհրդի 31.08.10թ. թիվ 220-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրո-

քերների, ներդրումային ընկերությունների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ում: Համաձայն դրանց՝ կարգավորվել է ապահովագրական ընկերությունների կողմից ԱՊՊԱ համակարգի (ԱՊՊԱ ծառայությունների մասին, ԱՊՊԱ պայմանագրի կողմերի իրավունքների և դրանց պաշտպանության հնարավորության մասին և այլն) վերաբերյալ տեղեկատվության հրապարակման կարգը:

- Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Հաճախորդների բողոք-պահանջների քննության գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն պայմաններ և սկզբունքներ» կանոնակարգ 8/04-ում: Սահմանվել են հաճախորդների կողմից բողոք-պահանջի ներկայացման ձևի և բովանդակության նկատմամբ առավել ճկուն մեխանիզմներ և դյուրինացվել է բողոք-պահանջների ընդունման գործընթացը:
- «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» 71-Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ և լրացումներ: Սահմանվել են պատշաճ գործարար վարվելակերպի դրույթներ, մասնավորապես՝ նվազագույն պահանջներ են սահմանվել բանկի կողմից մատուցվող ծառայությունների, շահերի բախումների կանխարգելումը և կարգավորումը, բողոքների քննման գործընթացները, բանկի կողմից հաճախորդների սպասարկման քաղաքականությունը նկարագրող ներքին իրավական ակտերի նկատմամբ: Գործարար վարվելակերպի դրույթների սահմանումը բանկի հաճախորդների շահերի պաշտպանության բավարար մակարդակ ապահովելու նպատակ է հետապնդում:
- ՀՀ կենտրոնական բանկի 20.07.2010թ 161-Ն որոշմամբ հաստատվել է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրոյի կողմից հրապարակման ենթակա տեղեկությունների կազմը և հրապարակման (տրամադրման) կարգը, ինչպես նաև հրապարակվող (տրամադրվող) տեղեկատվության նկատմամբ ներկայացվող պահանջները» կանոնակարգ 8/03.1-ը: Սահմանվել են ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրոյի կողմից իր ինտերնետային կայքում, տեղեկատվական ամփոփագրերում, գործունեության վայրում, զանգվածային լրատվության կամ այլ միջոցներով (գովազդ, պաստառներ և այլն) հրապարակվող տեղեկությունների կազմը և հրապարակման (տրամադրման) կարգը:
- ՀՀ ԿԲ խորհրդի 162-Ն որոշմամբ հաստատվել է «Ապահովագրական ընկերությունների կողմից ապահովադիրներին ուղղված ծանուցմանը և նշումներին ներկայացվող պարտադիր պահանջները և պայմանները» կարգը: Վերջինիս նպատակն է սահմանել կամավոր հիմունքներով կնքված և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող և գործողության ժամկետը 2010 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ավարտվող ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների պատասխանատվության ապահովագրության պայմանագրերի կողմ հանդիսացող ապահովադիրներին այդ պայմանագրերը միակողմանիորեն վաղաժամկետ լուծելու նրանց իրավունքների, ինչպես նաև կամավոր հիմունքներով կնքված պայմանագիրն ԱՊՊԱ պայմանագրին չփոխարինելու մասին ծանուցման կարգը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2010 ԹՎԱԿԱՆԻՆ

Կենտրոնական բանկը մշտապես վերահսկում է ֆինանսական համակարգի մասնակիցների գործունեությունը: Ֆինանսական համակարգի մասնակիցների գործունեության ռիսկերի մակարդակների թույլատրելիության աստիճանի բացահայտման և դրանց անթույլատրելի մակարդակի կանխման, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանության, արժութային շուկայում սպեկուլյատիվ բացասական դրսևորումների կանխման և այլ նպատակներով Կենտրոնական բանկի առանձին ստորաբաժանումներ (հիմնականում Ֆինանսական վերահսկողության վարչությունը) իրականացնում են ֆինանսական հաստատությունների փաստաթղթային և տեղերում ստուգումներ[2]:

Վերահսկողություն

Կենտրոնական բանկի Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից 2010 թվականին իրականացված փաստաթղթային և տեղերում ստուգումների հիմնական ուղղվածություններն են եղել.

- ռիսկերի կառավարման համակարգը,
- ներքին հսկողության համակարգը,
- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը,
- սպառողների շահերի պաշտպանությունը,
- կորպորատիվ կառավարման սկզբունքների ապահովումը,
- ՏՏ ոլորտը,
- ակտիվների որակի գնահատումը,
- թափանցիկության ապահովումը,
- ակտիվների և պասիվների կառավարման գնահատումը,
- կանոնակարգման դաշտի փոփոխություններին ընկերությունների գործունեության համապատասխանեցումը,
- վերաապահովագրության ռիսկայնության մակարդակը,
- ազդագրի և/կամ առևտրի ազդագրի գրանցման գործընթացների կազմակերպումն ու վերահսկումը,
- հաշվետու թողարկողների կողմից հրապարակման ենթակա տեղեկատվության թափանցիկության, լիարժեքության և արժանահավատության ապահովման նկատմամբ վերահսկողությունը,
- արժեթղթերի հրապարակային առաջարկությամբ հանդես եկող անձանց գործողությունների՝ օրենսդրությանը համապատասխանության նկատմամբ վերահսկողությունը,

[2] *Վերահսկողության գործընթացները մանրամասն նկարագրված են Հավելված 1-ում:*

- արժեթղթերի շուկայում չարաշահումների (գնային չարաշահումների և շուկայում գործարքների կնքման համար ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործման) վերահսկողության և պատասխանատվության կիրառման համակարգի ներդրման հարցերը,
- չլիցենզավորված անձանց գործունեության կանխարգելման հարցերը,
- գործունեության անվտանգության և հուսալիության պահանջների ապահովումը,
- ծառայությունների մատուցման որակի գնահատումը,
- և այլն:

2010 թվականին ֆինանսական վերահսկողության վարչության կողմից իրականացվել են 380 «տեղերում ստուգումներ»:

Աղյուսակ 1. Տեղերում վերստուգումները և վերահսկողության աշխատակիցների ծանրաբեռնվածությունը

	2008 թվական	2009 թվական	2010 թվական
Ֆինանսական վերահսկողության վարչության աշխատակիցների թիվը	74	82	83
Բանկերի, վարկային կազմ., ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի մասնակիցների և գրավատների ընդհանուր ակտիվները (տարեկան միջին)	964.3 մլրդ դրամ	1.250 տրլն դրամ	1.580 տրլն դրամ
Ֆինանսական վերահսկողության վարչության մեկ աշխատակցի միջին ծանրաբեռնվածությունը	13.0 մլրդ դրամ	15.2 մլրդ դրամ	19.0 մլրդ դրամ
Տարվա ընթացքում իրականացված ստուգումների թիվը, այդ թվում՝	243	539	380
բանկերում՝ բոլոր ուղղություններով	7	5	7
բանկերում՝ նպատակային	10	29	24
վարկային կազմակերպություններում՝ բոլոր ուղղություններով	5	3	6
վարկային կազմակերպություններում՝ նպատակային		3	2
ապահովագրական ընկերություններում՝ բոլոր ուղղություններով	4	4	3
ապահովագրական ընկերություններում՝ նպատակային		4	8
ապահովագրական բրոքերային ընկերություններ		1	1
ներդրումային ընկերություններ	1	8	4
ֆինանսական շուկայի այլ մասնակիցներ (արտարժույթի փոխանակման կետեր, գրավատներ, վճարահաշվարկային կազմակերպություններ և այլն)	216	490	325

2010 թվականին Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից փաստաթղթային և տեղերում իրականացված ստուգումների արդյունքում բացահայտված խախտումներում, նախորդ տարվա համեմատ, հիմնականում ավելացել է օրենսդրական խախտումների քանակը: Նախորդ տարվա համեմատ որոշակի ավելացել է նաև կիրառված պատժամիջոցների քանակը:

Աղյուսակ 2. Ֆինանսական կազմակերպությունների կողմից թույլ տրված խախտումները և կիրառված պատժամիջոցները 2010 թվականին

	Առևտրային բանկեր	Վարկային կազմակերպություններ	Ապահովագրական ընկերություններ	Գրավատներ	Վճարահաշվարկային կազմակերպություններ*
Խախտման տեսակ					
Հաշվապահական հաշվառման	31	10	3		-
Ակտիվների դասակարգման կարգի	10	2	7	-	-
Օրենսդրական	509	88	228	217	1
Նորմատիվային	2		31		
Հանձնարարականի չկատարում	6	2	10		-
Հաշվետվությունների ուշացում	8	2	21	8	3
Անարժանահավատ տվյալներ	99	3	106	60	
Ընդհանուր կապիտալի			11		
Վարկային ռեգիստր	32	19			
Պատժամիջոցներ					
Լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում	-	-	-	15	-
Տուգանք կազմակերպությանը	488	58	223	166	-
Տուգանք ղեկավարին	7				
Տույժ	1				
Նախազգուշացում	587	92	243	62	4
Ղեկավարին մասնագիտական որակավորման վկայականից զրկում		1			
Լիցենզիայի գործունեության ժամանակավոր կասեցում				36	
Կարճում	4	1	2		

** Վճարային գործիքներ կիրառող և դրամական փոխանցում, վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպություններ:*

Սպառողների շահերի պաշտպանություն

2010 թվականին շարունակվել է սպառողների շահերի պաշտպանության և հասարակության տարբեր նպատակային խմբերի ֆինանսական և տնտեսագիտական իրազեկվածության բարձրացման լայնածավալ միջոցառումների իրականացումը:

- Շարունակվել են «Ֆինանսներ բոլորի համար» ինտերնետային կայքի *(www.abcfinance.am)* զարգացման աշխատանքները: Մշակվել են նոր ֆինանսատնտեսագիտական խաղեր, ֆինանսական վարքագիծը և գիտելիքների մակարդակը գնահատող թեստեր: Կայքի նպատակն է պարզ և մատչելի ուսուցանել յուրա-

քանչյուրին ֆինանսների աշխարհի մասին: Կայքում ներառված են գլխավորապես կրթական նյութեր, ֆինանսական կազմակերպությունների և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն: Կայքը շարունակաբար համալրվելու և կատարելագործվելու է Կենտրոնական բանկի կողմից:

- ՀՀ կենտրոնական բանկի և «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության հետ համատեղ կազմակերպվել և իրականացվել է «Տնտեսագիտություն և ֆինանսներ» թեմայով խաղ մրցույթ՝ հանրակրթական բոլոր դպրոցների ավագ դասարանի աշակերտների մասնակցությամբ:
- Իրականացվել են ԱՊՊԱ համակարգի լուսաբանման միջոցառումներ և աշխատանքներ.
  - մշակվել են հանրամատչելի տեղեկատվական գրքույկներ և թերթոններ, որոնք բաշխվել են հանրապետության բոլոր քաղաքներում,
  - մշակվել են ուսուցողական և տեղեկատվական հեռուստառադիոհոլովակներ:
- Կարևորելով դպրոցներում արդյունավետ ֆինանսատնտեսագիտական ուսուցում իրականացնելու անհրաժեշտությունը՝ Կենտրոնական բանկի կողմից ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի համար, որպես օժանդակություն, մշակվել է «Ֆինանսատնտեսագիտական կրթման ծրագրերի գնահատման մեթոդաբանության ուղեցույց» (դպրոցում դասավանդվող «Հասարակագիտություն» առարկայի «Տնտեսագիտություն» բաղադրիչի օրինակով): Վերջինս ներառում է այն գործիքների (հարցաշարեր, քննարկումներ), քայլերի ու ընթացակարգերի ամբողջությունը (սահմանում է տեղեկատվության հավաքագրման ուղիներն ու գնահատման չափանիշները), որոնց կիրառման միջոցով պետք է իրականացվի գնահատումը:
- Մշակվել է «ՀՀ-ում կենսաթոշակային համակարգի վերաբերյալ ընդհանուր և մասնագիտական գիտելիքի և տեղեկատվության շարունակական մատուցման ծրագիրը»: Ծրագրի նպատակն է ստեղծել ՀՀ-ում ինստիտուցիոնալ մի համակարգ, որը հնարավորություն կտա շարունակաբար (անընդհատ) ապահովելու կենսաթոշակային համակարգի մասին հանրության ֆինանսական ընդհանուր կրթման և տեղեկացման, ինչպես նաև մասնագիտական կրթման և նոր գիտելիքի ստեղծման գործընթացները:
- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից ստեղծված ֆինանսական կրթման միջազգային ցանցի (INFE) փորձագիտական խմբի կողմից մշակված մեթոդաբանության հիման վրա հանրապետության բնակչության ֆինանսատնտեսագիտական գրագիտության մակարդակի գնահատման նպատակով իրականացվել են հարցումներ հանրապետության ողջ տարածքում: Արդյունքները նախատեսվում է ամփոփել 2011 թ. ընթացքում: Ըստ հարցման արդյունքների՝ կմշակվեն և կիրականացվեն առավել նպատակային, հասցեական և արդյունավետ ֆինանսական կրթման միջոցառումներ:

ԿԱԴՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԻ ՀԵՏ 2010 ԹՎԱԿԱՆԻՆ

Կադրերի որակավորման բարձրացմանն ուղղված քաղաքականությունը մշտապես Կենտրոնական բանկի ուշադրության կենտրոնում է, քանի որ աշխարհում տեղի ունեցող զարգացումներն ու ստեղծվող մարտահրավերները պահանջում են գիտելիքների կատարելագործման, օտարերկրյա փորձի ընկալման նորանոր մակարդակներ: 2010 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է անձնակազմի վերապատրաստման հետևողական կադրային քաղաքականության իրականացումը, ինչը, նպատակաուղղված է նաև ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության գործառույթների արդյունավետության բարձրացմանը:

Մասնագիտական գիտելիքների կատարելագործման, միջազգային լավագույն փորձին ծանոթանալու և, հաշվի առնելով ներքին առանձնահատկությունները, Հայաստանում ներդնելու նպատակով ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության գործընթացներին մասնակցող աշխատակիցները հաշվետու տարվա ընթացքում մասնակցել են մի շարք ներքին և արտաքին դասընթացների, աշխատանքային այցերի և կոնֆերանսների: 2010 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կադրերի վերապատրաստմանը օժանդակել են Արժույթի միջազգային հիմնադրամը, Միջազգային հաշվարկների բանկը, Շվեյցարիայի, Իտալիայի, Լիտվայի, Ֆրանսիայի բանկը, Վիեննայի միացյալ ինստիտուտը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, Գերմանիայի Բունդեսբանկը, Անգլիայի բանկի՝ կենտրոնական բանկերի ուսուցողական կենտրոնը, ԱՄՆ դաշնային պահուստային բանկը, Նիդեռլանդների, Ղազախստանի, Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկերը, Սերբիայի, Լեհաստանի, Չեխիայի, Ավստրիայի ազգային բանկերը, Եվրասիական տնտեսական համագործակցությունը, Ավստրիայի ապահովագրական ասոցիացիան, Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպությունը, Ֆինանսական կայունության ինստիտուտը և այլն: Վերոնշյալ կառույցների կողմից կազմակերպված դասընթացների, կոնֆերանսների և աշխատանքային փորձի փոխանակման վերապատրաստման թեմաները հիմնականում ուղղված են եղել ֆինանսական կայունության և հակաճգնաժամային կառավարման խնդիրներին, բանկային, ապահովագրական, արժեթղթերի շուկաների մասնակիցների վերահսկողության արդի խնդիրներին, նշված շուկաների զարգացմանը, ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի բարեփոխումներին և այլն:

2010 թվականի ընթացքում վերապատրաստման հիմնական թեմաներն են եղել՝ «Ֆինանսական հատվածի քաղաքականության մարտահրավերներ», «Ֆինանսական կայունություն», «Համախմբված վերահսկողություն և ռիսկի ինտեգրում», «Ճգնաժամային պատրաստվածություն», «Ֆինանսական վերահսկողություն», «Հիմնական վերահսկողական խնդիրներ», «Ռիսկի վրա հիմնված վերահսկողություն», «Խորացված ռիսկի կառավարում», «Արժեթղթերի շուկայի զարգացում», «Ֆինանսական ոլորտի սպառողների շահերի պաշտպանություն», «Վճարային համակարգերի հսկողություն», «Պարտադիր ավտոապահովագրության համակարգ», «Ներդրումային հիմնադրամներ», «Փողերի լվացման կանխարգելման գործընթացի ուսումնասիրություն», «Պայքար փողերի լվացման և ֆինանսական կարգազանցության դեմ» և այլն:

ԿԲ ներքին վերապատրաստումների առումով հատկանշական է, որ Կենտրոնական բանկի վերահսկողության ոլորտի բարձր որակավորում ունեցող աշխատակիցները կազմակերպել են դասընթացներ՝ նպատակ ունենալով իրենց փորձն ու գիտելիքները փոխանցել ավելի երիտասարդ մասնագետներին:

2010 թվականին մի շարք մասնագետներ մասնակցել են Շվեյցարիայի Ֆինանսական կայունության ինստիտուտի (FSI) կողմից առաջարկվող FSI Connect-ի դասընթացներին, որոնք անցկացվում են իրական ժամանակի ռեժիմով, ընդ որում՝ ԿԲ-ում ֆինանսական վերահսկողության ոլորտում կարող են աշխատանքի ընդունվել կամ աշխատանքային առաջխաղացում ունենալ այն աշխատակիցները, ովքեր հաջողությամբ ավարտել են վերոնշյալ դասընթացները:

Կենտրոնական բանկի աշխատակիցները նաև իրականացրել են աշխատանքային այցեր այլ երկրների կենտրոնական բանկեր և տեղում ուսումնասիրել գործընկերների աշխատանքային փորձը:

2010 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է բազմակողմ և երկկողմ համագործակցությունը միջազգային և օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների հետ:

ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցները մասնակցել են տարեկան հանդիպումների, ֆորումների, բանկային և ֆինանսական միջազգային համաժողովների, «կլոր սեղանի» նիստերի, խորհրդակցությունների, ցուցահանդեսների և աշխատանքային սեմինարների, որտեղ հանդես են եկել զեկույցներով և ելույթներով: Հիշատակման են արժանի Ասիական զարգացման բանկի կողմից կազմակերպված «Գլոբալ տնտեսական և ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը» թեմայով տարածաշրջանային ֆորումը (Մանիլա, Ֆիլիպիններ), EGMONT խմբի լիագումար նիստը փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի վերաբերյալ (Պորտ Լյուիս, Մավրիկիա), ԱՄՀ և ՀԲ Նիդեռլանդների ենթախմբի երկրների տարեկան հանդիպումը կառավարման խնդիրների վերաբերյալ (Հաագա, Նիդեռլանդներ), «Ներդրումների և առևտրի հնարավորությունները Հայաստանում» թեմայով միջազգային համաժողովը և ցուցահանդեսը (Թեհրան, Իրան), Եվրոպայի խորհրդի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի MONEYVAL կոմիտեի նիստը (Ստրասբուրգ, Ֆրանսիա), Եվրոպական բանկային և ֆինանսական ֆորումը (Պրահա, Չեխիա), Բանկային համակարգերի կարգավորող մարմինների տարածաշրջանային կոնֆերանսը (Թբիլիսի, Վրաստան), «Ֆինանսական հատվածը ճգնաժամից հետո» թեմայով համաժողովը (Վաշինգտոն, ԱՄՆ), ԱՊՀ և Բալթյան երկրների կենտրոնական բանկերի իրավաբանական ծառայությունների ղեկավարների տարեկան համաժողովը (Սանկտ Պետերբուրգ, ՌԴ), «Բնակարանային ֆինանսավորումը զարգացող երկրներում» թեմայով միջազգային կոնֆերանսը (Վաշինգտոն, ԱՄՆ), 2010թ. կենտրոնական բանկերի տարեկան համաժողովը (Հռոմ, Իտալիա), ՀԲ/ԱՄՀ կառավարիչների և փոխկառավարիչների տարեկան հանդիպումը (Երուսաղեմ, Իսրայել), Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի հիմնադրման 150-ամյակին նվիրված միջազգային կոնֆերանսը (Մոսկվա, ՌԴ), Միջազգային հաշվարկների բանկի Իրվինգ Ֆիշերի հանճնաժողովի 5-րդ տարեկան համաժողովը (Բազել, Շվեյցարիա), Բանկային վերահսկողների միջազգային կոնֆերանսը (Սինգապուր), «Տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարում» թեմայով միջազգային համաժողովը (Բոստոն, ԱՄՆ), SWIFT օգտագործողների և անդամների ազգային ասոցիացիաների նախագահների տարեկան համաժողովը և SIBOS ամենամյա կոնֆերանսը (Ամստերդամ, Նիդեռլանդներ), Վիճակագրության հարցերին նվիրված՝ Եվրոպական կենտրոնական բանկի 5-րդ միջազգային համաժողովը (Մայնի Ֆրանկֆուրտ, Գերմանիա), ԱՊՀ մասնակից երկրների արժեթղթերի շուկան կարգավորող պետական մարմինների ղեկավարների խորհրդի 11-րդ նիստը (Կազան, ՌԴ), Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կառա-

վարիչների խորհուրդների տարեկան հանդիպումները (Վաշինգտոն, ԱՄՆ), Կենսաթոշակային և ներդրումային ֆոնդերին նվիրված սիմպոզիումը (Դուբայ, ՄԱԷ) և այլն:

Գործնական կապերը ընդլայնելու և բանակցություններ վարելու նպատակով հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կենտրոնական բանկ այցելեցին Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական առաքելության փորձագետները, Գերմանական GDV German Insurance Association կազմակերպության փորձագետները, Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետների խումբը՝ Հայաստանի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում, Իրանի Իսլամական Հանրապետության՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի պատվիրակությունը, Տաջիկստանի ազգային բանկի պատվիրակությունը, Սևծովյան առևտրի և զարգացման բանկի պատվիրակությունը և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կենտրոնական բանկը կազմակերպել է մի շարք գործնական հանդիպումներ, աշխատանքային նիստեր և համաժողով: Հիշատակման է արժանի «Ֆինանսական օմբուդսմենի ինստիտուտ՝ ուղղված հանրության վստահության ամրապնդմանը և ֆինանսական միջնորդության ավելացմանը» թեմայով միջազգային համաժողովը՝ համատեղ կազմակերպված Հայաստանի ֆինանսական համակարգի հաշտարարի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից (Երևան, 2010թ. ապրիլի 7-10):

2010թ. ընթացքում շարունակվել են միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում նախատեսված՝ օտարերկրյա կենտրոնական բանկերի միջև համաձայնագրեր և փոխըմբռնման հուշագրեր ստորագրելու աշխատանքները:


2010թ. հոկտեմբերի 28-ին Երևանում, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև 2010թ. հունիսի 2-ին Երևանում ստորագրված տնտեսական և տեխնիկական համագործակցության համաձայնագրի, ՀՀ կենտրոնական բանկի և Չինաստանի զարգացման բանկ կորպորացիայի միջև ստորագրվել է հաշվապահական ընթացակարգերի բանկային համաձայնագիրը:

Օտարերկրյա գործընկերների հետ համագործակցության և կադրերի շարունակական վերապատրաստման աշխատանքները կոչված են նաև նպաստելու կարգավորման և վերահսկողության աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Ըստ այդմ, վերապատրաստման և համագործակցության աշխատանքները մշտապես կարևորվում են Կենտրոնական բանկի կողմից:

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2010 ԹՎԱԿԱՆԻՆ

Հայաստանի ֆինանսական համակարգի խոշոր մասնակիցը բանկային համակարգն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 91%-ը: Այս առումով էապես կարևորվում է բանկային, ապահովագրական և արժեթղթերի շուկաների համահունչ զարգացումը: Նախորդ ճգնաժամային տարվա համեմատ՝ 2010 թվականին Հայաստանի ֆինանսական համակարգը բավականին ակտիվ է եղել: Բանկային համակարգը գրեթե վերականգնել է մինչճգնաժամային եկամտաբերության մակարդակը: Տարվա ընթացքում ՀՀ ֆինանսական համակարգը ճգնաժամի հետ կապված ռիսկերի ճշգրտման փուլից անցում է կատարել զարգացման ուղիների փնտրման փուլ. տնտեսության հետագա զարգացման կանխատեսելիության որոշակի աճի հետ մեկտեղ, սկսել է հետզհետե վերականգնվել:

Գծանկար 1. Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքը ըստ ֆինանսական հաստատությունների



1. Բանկեր, 2. Վարկային կազմակերպություններ, 3. Ապահովագրական ընկերություններ, 4. Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, 5. Այլ ֆինանսական կազմակերպություններ


ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերը

2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր: Տարվա ընթացքում Ամերիաբանկի բաժնետերերի կողմից ձեռք են բերվել Կասկադ բանկի բաժնեմասերը: Հաշվետու տարում բանկային մասնաճյուղերի քանակը ավելացել է 17-ով և տարեվերջին կազմել 408: Արդյունքում՝ 1 մասնաճյուղի հաշվով բնակչության թվաքանակը նվազել է 4.9%-ով և տարեվերջին կազմել 7800:

Գծանկար 2. Բանկերի մասնաճյուղերի և աշխատակիցների քանակը



Բանկային համակարգի աշխատակիցների քանակը (ներառյալ՝ սպասարկող անձնակազմը) ավելացել է 9.3%-ով և տարեվերջին կազմել 8961, ընդ որում՝ աշխատակիցների քանակի նվազում արձանագրվել է միայն 3 բանկում: Նախորդ տարվա համեմատ ղեկավար անձնակազմի տեսակարար կշիռը ընդհանուր թվաքանակում նվազել է 1.7 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 17.0%՝ պայմանավորված մասնաճյուղերի ցանցի ընդլայնման արդյունքում ոչ ղեկավար աշխատակիցների քանակի առաջանցիկ ավելացմամբ:

Բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակը տարվա ընթացքում բավականին բարձրացել է, այնուամենայնիվ դեռևս հիմնականում զիջում է այլ երկրների բանկային համակարգերի ֆինանսական միջնորդության ցուցանիշին: 2010թ. բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը ավելացել է 2.6 տոկոսային կետով՝ կազմելով 44.5%: Բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցությունն ավելացել է 3.3 տոկոսային կետով և կազմել 25.3%:

Աղյուսակ 3. Բանկերի և մասնաճյուղերի քանակը

	2008	2009	2010
Բանկերի քանակ	22	22	21
Բնակչության թվաքանակ			
1 բանկի հաշվով (հազար)	140.0	145.5	152.4
1 մասնաճյուղի հաշվով (հազար)	8.1	8.2	7.8
1 աշխատակցի հաշվով	383	390	357

Կենտրոնացվածությունը ՀՀ բանկային համակարգում

Բանկային համակարգի կենտրոնացվածության մակարդակը փոքր-ինչ նվազման միտումներ է դրսևորել: ՀՀ բանկային համակարգի տարբեր ամփոփ ցուցանիշների՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը մնացել է անփոփոխ կամ նվազել է (ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների գծով): Ստորև ներկայացված աղյուսակի ցուցանիշների՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցները տատանվում են 0.06-ից 0.1–ի միջակայքում՝ վկայելով համակարգի նվազ կենտրոնացվածության մասին:

Աղյուսակ 4. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը

Ցուցանիշներ	31.12.08	31.12.09	31.12.10
Ընդհանուր ակտիվներ	0.07	0.07	0.07
Ընդհանուր պարտավորություններ	0.08	0.07	0.07
Ընդհանուր կապիտալ	0.06	0.06	0.06
Տնտեսությանը տրամադրված վարկեր	0.08	0.07	0.07
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ	0.09	0.09	0.08
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորություններ (ներառյալ բանկային հաշիվներ)	0.10	0.10	0.10

Խոշոր և մանր բանկերի միջև բևեռացվածությունը փոքր-ինչ նվազել է. տարեսկզբին խոշորագույն 10 բանկերին բաժին էր ընկնում համակարգի ակտիվների 76%-ը, խոշորագույն 4 բանկերին՝ 40%-ը, իսկ տարեվերջին՝ համապատասխանաբար 75%-ը և 38%-ը: Ստորև ներկայացված աղյուսակում որոշ ցուցանիշների գծով 4 և 10 խոշորագույն բանկերի բևեռացվածությունը նվազել է, իսկ որոշ ցուցանիշների գծով՝ աճել (աճին նպաստել է նաև Ամերիաբանկի բաժնետերերի կողմից Կասկադ բանկի բաժնեմասերի ձեռքբերման հանգամանքը):

Աղյուսակ 5. Բանկային հատվածի կենտրոնացվածության մակարդակը (%)


Ցուցանիշներ	31.12.08	31.12.09	31.12.10
Ընդհանուր ակտիվներ			
ԿԳ 4 (խոշորագույն չորս բանկերի տեսակարար կշիռը համակարգում)	44	40	38
ԿԳ 10 (խոշորագույն չորս բանկերի տեսակարար կշիռը համակարգում)	76	76	75
Ընդհանուր պարտավորություններ			
ԿԳ4	46	41	38
ԿԳ10	80	80	76
Ընդհանուր կապիտալ			
ԿԳ4	38	36	40
ԿԳ10	66	64	70
Տնտեսությանը տրամադրված վարկեր			
ԿԳ4	48	39	39
ԿԳ10	79	76	77
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ			
ԿԳ4	40	37	43
ԿԳ10	79	81	79
Ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ ցպահանջ պարտավորություններ (ներառյալ բանկային հաշիվներ)			
ԿԳ4	47	47	49
ԿԳ10	78	82	82

ՀՀ բանկային համակարգի կենտրոնացվածության նվազման մասին է վկայում նաև բանկերի՝ ըստ ակտիվների մասնաբաժինների բաշխման հարաբերական հարթեցումը: Նախորդ տարվա համեմատ մասնաբաժինների բաշխվածության համար հաշվարկված էքսցեսի գործակիցը նվազել է 0.5 կետով: Հարթեցումը պայմանավորված է համեմատաբար փոքր բանկերի խոշորացման միտումներով և 2 բանկերի միավորմամբ, ինչի արդյունքում համակարգում ձևավորվել է ևս մեկ խոշոր բանկ՝ նպաստելով համակարգի խոշոր բանկերի միջև մրցակցության խորացմանը: Ասիմետրիայի գործակցի և Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսի նվազումը ևս վկայում է համակարգում կենտրոնացվածության փոքր-ինչ նվազման մասին:

Աղյուսակ 6. ՀՀ տարածքում գործող բանկերի՝ ըստ ակտիվների մասնաբաժինների բաշխվածության հիմնական բնութագրիչները

	Ստանդարտ շեղում	Ասիմետրիայի գործակից	Էքսցես	Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքս
2009	0.035	0.932	-0.279	0.071
2010	0.030	0.657	-0.803	0.069

Գծանկար 3.
ՀՀ տարածքում գործող բանկերի՝ ըստ ակտիվների մասնաբաժինների բաշխվածությունը



Բանկային համակարգի մրցակցության մակարդակի բացահայտման համար իրականացվում է նաև ՀՀ բանկային համակարգի մրցունակության գնահատում Փանզարի և Ռոսսի մոդելով, որի միջոցով գնահատվում է ծախսային գործոնների ազդեցությունը տոկոսային եկամտի վրա: 2003-2010 թթ. տվյալների հիման վրա ստացված H-վիճակագրի արժեքը ՀՀ բանկային համակարգի համար կազմել է 0.33: Չնայած գնահատված մեծությունը վկայում է խմբաշնորհային մրցակցության տարրերի առկայության մասին, այնուամենայնիվ նախորդ տարվա համեմատ դրսևորվել են մրցակցության լավացման միտումներ (2009թ. համեմատ 0.05 կետով աճել է H-վիճակագրի արժեքը):

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԻՏԱԼԸ


Բանկային համակարգի կապիտալի աճի միտումները

Հաշվետու տարվա ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 14.6%-ով (40.7 մլրդ դրամով) և կազմել 319.0 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի աճին հիմնականում նպաստել են բանկային համակարգի կողմից ապահովված շահույթը և կանոնադրական հիմնադրամի աճը:


Կանոնադրական հիմնադրամն աճել է 8.0%-ով կամ 15.2 մլրդ դրամով, որի գերակշիռ մասը (12.7 մլրդ դրամը) համալրվել է արտաքին աղբյուրներից: Արդյունքում՝ բանկային համակարգի կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտների փայամասնակցության տեսակարար կշիռը տարվա ընթացքում ավելացել է 4.9 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 78.9%:

Բանկային համակարգի 2010 թվականի վերահսկողական հաշվետվություններով ստացվող զուտ շահույթը կազմել է 30.2 մլրդ դրամ:

Գծանկար 4. Բանկային համակարգի կանոնադրական կապիտալի կառուցվածքը ըստ ռեզիդենտության



Գծանկար 5. Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի կառուցվածքը



1. Կանոնադրական կապիտալ, 2. Գլխավոր պահուստ, 3.Չբաշխված շահույթ (ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների), 4. Այլ


Ընդհանուր պարտավորությունների աճի տեմպը 3.9 տոկոսային կետով գերազանցել է ընդհանուր կապիտալի աճի տեմպը, ինչի արդյունքում ընդհանուր կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցությունը նվազել է 0.9 տոկոսային կետով ՝ տարեվերջին կազմելով 25.7%:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը

ՀՀ բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը, մի շարք երկրների համեմատությամբ, մշտապես բավականին բարձր է եղել: Կապիտալի համարժեքության բարձր մակարդակը բանկային համակարգին հնարավորություն է տալիս ռիսկերը չեզոքացնելու սեփական միջոցների հաշվին: Հատկանշական է, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում հայաստանյան որևէ բանկ չի կանգնել անվճարունակության խնդրի առջև, ինչին իր էական նպաստումն է ունեցել կապիտալի համարժեքության բարձր մակարդակը:

2010 թվականին բանկերի՝ ռիսկով կշռված ակտիվների աճի տեմպը գերազանցել է նորմատիվային ընդհանուր կապիտալի աճի տեմպը, ինչի արդյունքում նախորդ տարվա համեմատ բանկային համակարգի կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը նվազել է 6.2 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 22.2% (պահանջվող նվազագույնը 12% է): Ռիսկով կշռված ակտիվների առաջանցիկ աճը պայմանավորվել է ինչպես բանկերի ակտիվ վարկավորման քաղաքականությամբ, այնպես էլ ռիսկով կշռված ակտիվների հաշվարկի մեթոդաբանության փոփոխությամբ:

Գծանկար 6.
Ընդհանուր կապիտալի համարժեքությունը ըստ բանկերի



[3] *Ըստ առանձին բանկերի ներկայացված գրաֆիկներում պահպանված չէ 21 բանկերի նույն հաջորդականությունը:*

Առևտրային բանկերի սեփականատերերը

Ըստ կազմակերպաիրավական տեսակների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող 21 առևտրային բանկերից 1-ը սահմանափակ պատասխանատվությամբ, 3-ը՝ բաց բաժնետիրական, 17-ը՝ փակ բաժնետիրական ընկերություններ են:

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի մասնակիցներ են (բաժնետերեր, փայատերեր) 1646 ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնցից 94-ը՝ ոչ ռեզիդենտներ:

Եթե բացառենք բաց բաժնետիրական ընկերության կարգավիճակ ունեցող 3 բանկերը, ապա 18 բանկերի մասնակիցները (բաժնետերեր, փայատերեր) 72 ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնցից 43-ը՝ ոչ ռեզիդենտներ:


Հինգ բանկերում բաժնեմասերի 100%-ը տնօրինում է մեկ անձ (չորս ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ և մեկ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ), իսկ ևս տասնհինգ բանկերում մեկ բաժնետեր տնօրինում է բաժնետոմսերի 50%-ից ավելի բաժնեմասը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկային համակարգի ներգրաված միջոցները

2010 թվականին բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն ավելացել են 18.5%-ով (193.9 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 1 տրլն 241.5 մլրդ դրամ: Ընդ որում՝ ՀՀ դրամային պարտավորությունները ավելացել են 28.7%-ով, իսկ արտարժութային պարտավորությունները՝ 13.7%-ով: Արդյունքում՝ դրամային պարտավորությունների տեսակարար կշիռը աճել է 2.7 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 35.1%:

Գծանկար 7.
Բանկային համակարգի պարտավորությունները




Պարտավորությունների աճը հիմնականում ապահովվել է ի հաշիվ ընդհանուր ավանդների (46.3 մլրդ դրամ աճ), բանկերի լորո թղթակցային հաշիվների և այլ պարտավորությունների (61.6 մլրդ դրամ աճ), ոչ բանկ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ այլ պարտավորությունների (50.9 մլրդ դրամ աճ) աճի:

Ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ընդհանուր ավանդները (ցպահանջ և ժամկետային միջոցները) ավելացել են 7.4%-ով և տարեվերջին կազմել են 673.1 մլրդ դրամ: Ավանդների աճը մեծամասամբ ապահովվել է դրամային ավանդների աճի հաշվին: Դրամային ավանդներն աճել են 24.6%-ով (40.3 մլրդ դրամ), իսկ արտարժութային ավանդները՝ 1.3%-ով (5.9 մլրդ դրամով):


Հաշվետու տարում իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորությունները նվազել են 0.5%-ով (859 մլն դրամով), իսկ ֆիզիկական անձանց ցպահանջ պարտավորությունները աճել են 14.8%-ով (13.4 մլրդ դրամով): Հատկանշական է, սակայն, որ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվների քանակն ավելացել է 13.3%-ով, իսկ ֆիզիկական անձանց ընթացիկ հաշիվների քանակը՝ 9.6%-ով:

Գծանկար 8. Բանկային համակարգի ցպահանջ ավանդները



Իրավաբանական անձանց ժամկետային ավանդների ծավալները նվազել 17.1 %-ով (21.6 մլրդ դրամով), մինչդեռ ժամկետային հաշիվների քանակը ավելացել է 22.1%-ով, ինչը վկայում է իրավաբանական անձանց ժամկետային ավանդների փոքրացման որոշակի միտումների դրսևորման մասին: Նմանատիպ միտումներ դրսևորվել են նաև ֆիզիկական անձանց ավանդների պարագայում. ֆիզիկական անձանց ավանդների ծավալները ավելացել են 22.3%-ով (55.3 մլրդ դրամով), իսկ ժամկետային հաշիվների քանակը՝ 26.1%-ով:

Գծանկար 9. Բանկային համակարգի ժամկետային ավանդները




Հատկանշական է, որ դեռևս 2009թ. ճգնաժամի պայմաններում կտրուկ՝ 36%-ով, աճել էին իրավաբանական անձանց ավանդները (ճգնաժամի հետևանքով բիզնեսում կուտակված ազատ դրամական միջոցները ներդրվեցին բանկային համակարգ): Իսկ 2010թ. իրավաբանական անձանց ավանդների (ցպահանջ և ժամկետային) նվազումը հիմնականում պայմանավորված էր, 2009թ. ճգնաժամից հետո տնտեսության վերականգնմանը զուգընթաց, տնտեսավարողների կողմից միջոցների՝ կրկին բիզնես ուղղմամբ:

Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը

2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններում ծախսատար պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 94.3% (նախորդ տարի՝ 96.1%): Ցածր ծախսատար ցպահանջ պարտավորությունների բացառման դեպքում, ծախսատար ժամկետային պարտավորությունների տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ աճել է 1.4 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 71.6%:

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքում հիմնականում աճել է բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների տեսակարար կշիռը, և նվազել են ցպահանջ պարտավորությունների և ժամկետային ավանդների տեսակարար կշիռները:

Գծանկար 10. Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքը



1. Բանկերի թղթակցային հաշիվներ , 2. Այլ պարտավորություններ բանկերի (ներառյալ ԿԲ) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ , 3. Ցպահանջ պարտավորություններ, 4. Ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ, 6. Հաշվարկված վճարվելիք տոկոսներ, 7. Այլ պարտավորություններ

Տարեվերջին ներգրաված միջոցների 24%-ը ցպահանջ է (ավանդներ, բանկային հաշիվներ, թղթակցային հաշիվներ և այլ), 48%-ը՝ մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ և 28%-ը՝ մեկ տարուց ավելի մարման ժամկետայնությամբ (31.12.2009թ. դրությամբ՝ համապատասխանաբար 26%,53%,21%):

Առևտրային բանկերի հաճախորդները


ՀՀ առևտրային բանկերում սպասարկվող հաճախորդների քանակը 2010 թվականին գրեթե չի փոփոխվել (ավելացել է 2000 հաճախորդով՝ 0.2%): Տարեվերջին ֆիզիկական անձ-հաճախորդների քանակը կազմել է 1 մլն 68.6 հազար, իսկ իրավաբանական անձ-հաճախորդների քանակը՝ 69.2 հազար:

Տարվա ընթացքում բանկային հաշիվների (ընթացիկ և ժամկետային) քանակն ավելացել է 17.1%-ով և կազմել 1 միլիոն 804 հազար: Իրավաբանական անձանց հաշիվների քանակն ավելացել է 16.0%-ով և տարեվերջին կազմել 135 հազար: Ֆիզիկական անձանց բանկային հաշիվների (ընթացիկ և ժամկետային) քանակն ավելացել է 17.2%-ով և կազմել 1 միլիոն 669 հազար:

Բանկային համակարգի տեղաբաշխված միջոցների աճի միտումները

2010 թվականի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր ակտիվները աճել են 17.7 %-ով (235 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 1 տրլն 560 մլրդ դրամ:

Գծանկար 11.
Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները




Ակտիվների կազմում հիմնականում ավելացել են տնտեսությանը տրամադրված վարկերի (185.2 մլրդ դրամ աճ), լիզինգի և ֆակտորինգի (25.1 մլրդ դրամ աճ), պետական արժեթղթերում ներդրումների (41.9 մլրդ դրամ աճ) ծավալները:

Տնտեսությանը տրամադրված վարկերը (այդ թվում՝ ֆիզիկական, իրավաբանական անձանց տրամադրված վարկերը) 2010 թվականին ավելացել են 26.3%-ով կամ 185.2 մլրդ դրամով և կազմել 888.6 մլրդ դրամ: Ավելացել են ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ ֆիզիկական անձանց վարկերը (աճի տեմպերը կազմել են համապատասխանաբար 31.6% և 14.1%):

ԿԲ-ում թղթակցային հաշիվները և այլ պահանջները ԿԲ նկատմամբ նվազել են 18.1%-ով (34.9 մլրդ դրամով)՝ պայմանավորված ներգրավված միջոցների դիմաց ՀՀ կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվի փոփոխության արդյունքում արտարժութային թղթակցային հաշիվների և այլ պահանջների նվազմամբ:

Այլ բանկերում նոստրո թղթակցային հաշիվները և այլ պահանջները ընդհանուր նվազել են 11.7%-ով (17.6 մլրդ դրամով):

Գծանկար 12.
Բանկային համակարգի ակտիվները



1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Թղթակցային հաշիվներ և այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ), 3. Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 4. Պետական արժեթղթեր, 5. Վարկեր տնտեսությանը, ֆակտորինգ, լիզինգ, 6. Այլ ակտիվներ

Նոստրո թղթակցային հաշիվներն առանձնանում են կենտրոնացվածությամբ հատկապես ըստ ռեզիդենտայնության: Տարեվերջին թղթակցային հաշիվների 84.8%-ը տեղաբաշխված է եղել ոչ ռեզիդենտ բանկերում (նախորդ տարի՝ 99.1%-ը): Նախորդ տարվա համեմատ փոքր-ինչ նվազել է թղթակցային հաշիվների կենտրոնացվածությունը ըստ աշխարհագրական տեղաբաշխվածության: ԱՄՆ բանկերում ներդրված է ոչ ռեզիդենտ բանկերում թղթակցային հաշիվների ընդհանուր ծավալի 30%-ը, Գերմանիայի Դաշնային Հանրապետության բանկերում՝ 24%-ը, Ֆրանսիայում՝ 12%-ը, Ռուսաստանի Դաշնության բանկերում՝ 12%-ը, Նիդեռլանդներում՝ 10%-ը և այլ երկրների բանկերում՝ 22%-ը (31.12.2009թ. ԱՄՆ՝ 38%, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ 23%, Ռուսաստանի Դաշնություն՝ 15%, այլ երկրներ՝ 24%):

Պետական արժեթղթերում ներդրումների ծավալները աճել են 38.6%-ով և տարեվերջին կազմել 151.3 մլրդ դրամ: Այլ արժեթղթերում ներդրումների ծավալները աճել են 31.5%-ով և տարեվերջին կազմել 5.7 մլրդ դրամ:

Բանկային համակարգի տեղաբաշխված միջոցների կառուցվածքը


Ակտիվների աճի նկատմամբ վարկերի առաջանցիկ աճի տեմպի պայմաններում, ընդհանուր ակտիվներում եկամտաբեր ակտիվների կշիռը ավելացել է 3.4 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 76.0 %:


Առանց ցածր եկամտաբեր թղթակցային հաշիվների՝ մնացած եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը կազմել է 74.6% (31.12.2009թ. դրությամբ՝ 68.9%):

Ակտիվների կառուցվածքում զգալի նվազել է բանկերի (ներառյալ ԿԲ) նկատմամբ պահանջների (ներառյալ թղթակցային հաշիվները) տեսակարար կշիռը և աճել վարկային ներդրումների տեսակարար կշիռը:

Ըստ տեղաբաշխված միջոցների ժամկետայնության՝ 2010 թվականին նկատվել է ցպահանջ միջոցների տեսակարար կշռի նվազում, փոխարենը ավելացել են 1 ամսից մինչ 1 տարի ժամկետայնությամբ և 1 տարուց ավելի ու անժամկետ միջոցների տեսակարար կշիռները: 31.12.2010 թ. դրությամբ տեղաբաշխված միջոցների 18%-ը ցպահանջ է, 40%-ը՝ 1-12 ամիս ժամկետայնությամբ և 42%-ը՝ 1 տարուց ավելի և անժամկետ (նախորդ տարի՝ համապատասխանաբար 25%, 37% և 38%):

Գծանկար 13. Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը






Բանկային համակարգի վարկային ներդրումները (համընդհանուր վարկերը, լիզինգը, ֆակտորինգը և ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված վարկերն ու ավանդները)


2010 թվականի ընթացքում բանկային համակարգի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 44% և 56%:

Վարկային շուկան ավելի աշխույժ է եղել տարվա երկրորդ կիսամյակում: Տարվա ընթացքում տրամադրած վարկերի 58.4%-ը բաժին է ընկել երկրորդ կիսամյակին: Ընդ որում՝ և՛ ՀՀ դրամով, և՛ արտարժույթով տրամադրված վարկերի ծավալները գերակշռել են տարվա երկրորդ կիսամյակում:

Գծանկար 15. ՀՀ դրամով տրամադրված վարկեր



Գծանկար 16. Արտարժույթով տրամադրված վարկեր



Երկրորդ կիսամյակում, բանկերի իրականացրած ակտիվ վարկային քաղաքականության արդյունքում մրցակցության ուժեղացմամբ պայմանավորված, արձանագրվել է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտար-


ժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքների նվազում: Ընդ որում՝ առավել նկատելի է եղել արտարժութային վարկերի տոկոսադրույքների նվազումը:

Նախորդ տարվա համեմատ բանկային համակարգի վարկային ներդրումներն ավելացել են 27%-ով (217.7 մլրդ դրամով) և կազմել 1 տրլն 24 մլրդ դրամ: Աճը հիմնականում պայմանավորվել է արտարժութային վարկային ներդրումների աճով. վերջիններս ավելացել են 36.5%-ով (158.9 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 593.8 մլրդ դրամ: Դրամային վարկային ներդրումները ավելացել են 15.9%-ով (58.9 մլրդ դրամով)՝ տարեվերջին կազմելով 430.1 մլրդ դրամ: Արդյունքում՝ նախորդ տարվա համեմատ արտարժութային վարկային ներդրումների տեսակարար կշիռը ընդհանուրում ավելացել է 4 տոկոսային կետով և կազմել 58%:

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումները ավելացել են 13.7%-ով և կազմել 68.1 մլրդ դրամ: Ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներն ավելացել են 28.1%-ով և կազմել 955.9 մլրդ դրամ:

2010 թվականին բոլոր ոլորտներում վարկային ներդրումները ավելացել են: Տարվա ընթացքում վարկերի ճյուղային կառուցվածքի էական փոփոխություն տեղի չի ունեցել: Սակայն, ինչպես և նախորդ տարի, մեծացել է արդյունաբերության ոլորտի վարկային ներդրումների տեսակարար կշիռը՝ շուրջ 2 տոկոսային կետով, փոխարենը նկատվել է սպառողական վարկերի տեսակարար կշռի նվազում 1 տոկոսային կետով: Արդյունաբերության ճյուղում վարկերն ավելացել են 38.7%-ով (56.9 մլրդ դրամով), գյուղատնտեսությունում՝ 18.5%-ով (8.2 մլրդ դրամով), շինարարությունում՝ 38.2%-ով (20.7 մլրդ դրամով), տրանսպորտի և կապի ճյուղում՝ 66.3%-ով (10.2 մլրդ դրամով), առևտրի ճյուղում՝ 27.0%-ով (39.2 մլրդ դրամով), հանրային սննդի ու սպասարկման այլ ոլորտներում՝ 36.2%-ով (10.8 մլրդ դրամով): Սպառողական վարկերն ավելացել են 20.0%-ով (27.3 մլրդ դրամով), հիփոթեքային վարկերը՝ 4.9%-ով (4.2 մլրդ դրամով), այլ ոլորտների վարկերը՝ 22.3 %-ով (9.5 մլրդ դրամով):


Գծանկար 17. Ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի ծավալները



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9.Հիփոթեքային, 10. Այլ ճյուղեր


31.12.2010 թ. դրությամբ վարկավորման հիմնական ուղղություններն են եղել արդյունաբերությունը, առևտուրը, սպառողական վարկերը:

Գծանկար 18. Ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1.Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9.Հիպոթեքային , 10. Այլ ճյուղեր

Գծանկար 19. Վարկային պորտֆելի կենտրոնացվածությունը ըստ տնտեսության ճյուղերի



1.Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9.Հիփոթեքային , 10. Այլ ճյուղեր

Նախորդ տարվա համեմատությամբ բանկային համակարգի՝ ըստ տնտեսության ճյուղերի վարկավորման Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը փոքր-ինչ նվազել է՝ տարեվերջին կազմելով 0.11: Նույն ցուցանիշի մեծությունը, ըստ բանկերի միջինի, կազմել է 0.167, ինչը վկայում է, որ մի շարք բանկերում վարկավորման ճյուղային կենտրոնացվածությունը համեմատաբար բարձր մակարդակ ունի: (31.12.2009թ. դրությամբ՝ 0.175):

Նախորդ տարվա համեմատ՝ երկարաժամկետ վարկային ներդրումների (1 տարի և ավելի ժամկետայնության) տեսակարար կշիռը ընդհանուրում ավելացել է 2.1 տոկոսային կետով և կազմել 71.4%:

Տնտեսության վարկավորման աշխուժացմանը մեծապես նպաստում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում բանկերի միջնորդությամբ տրամադրվող վարկերը, որոնք հիմնականում երկարաժամկետ են: 31.12.2010թ. դրությամբ ՀՀ տարածքում գործող 19 բանկեր և 11 վարկային կազմակերպություններ սպասարկում են.

- ✓ Համաշխարհային բանկի,
- ✓ ՌԴ վարկի շրջանակներում տնտեսության կայունացման ծրագրի,
- ✓ Գերմանա-հայկական հիմնադրամի,
- ✓ Զարգացման միջազգային կապեր կորպորացիայի,
- ✓ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի,
- ✓ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի,
- ✓ Միգրացիայի միջազգային կազմակերպության,
- ✓ Ասիական զարգացման բանկի,
- ✓ Սևծովյան առևտրի և զարգացման բանկի,
- ✓ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի,
- ✓ Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամի,
- ✓ Միջազգային ֆինանսական կորպորացիայի,
- ✓ Գյուղական ֆինանսավորման կառույց ծրագրերի իրականացման գրասենյակի,
- ✓ այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում իրականացվող վարկային ծրագրերը:

Միջազգային ծրագրերի շրջանակներում բանկերի կողմից տրամադրված վարկերը 2010 թվականին ավելացել են 20%-ով և տարեվերջին կազմել 168.6 մլրդ դրամ: Միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերում 31.12.2010 թ. դրությամբ ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը կազմել է 0.3%: Վարկերի մոտ 89%-ը մեկ տարուց ավելի ժամկետով է, 8%-ը՝ 6 ամսից մեկ տարի ժամկետով և 3%-ը՝ մինչև 6 ամիս ժամկետով: 31.12.2010 թ. դրությամբ ծրագրերի վարկավորման հիմնական ուղղություններն են եղել առևտուրը՝ ընդհանուր վարկավորման ծավալի 30%-ը, արդյունաբերությունը՝ 27%-ը, գյուղատնտեսությունը՝ 15%-ը և հիփոթեքայինը՝ 5%-ը:


Վարկային պորտֆելի որակը

Հետճգնաժամային ժամանակահատվածում տնտեսության աստիճանաբար վերականգնումը ուղեկցվել է նաև վարկային պորտֆելի որակի բարելավմամբ: Հաշվետու տարվա ընթացքում չաշխատող (հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասերի) վարկերի տեսակարար կշիռը նվազել է 1.7 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 3.1%, իսկ չաշխատող ակտիվների (վարկերի և դեբիտորական պարտքերի) տեսակարար կշիռը՝ 1.4 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 2.8%: Չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի մեծությունը նվազել է 7.3 մլրդ դրամով և կազմել 29.6 մլրդ դրամ, իսկ ստանդարտ ակտիվների մեծությունը աճել է 192.3 մլրդ դրամով և կազմել 1 տրլն 32 մլրդ դրամ:

Հատկանշական է, որ տնտեսության բոլոր ճյուղերին տրամադրված վարկերում նվազել է չաշխատող վարկերի կշիռը: Համեմատաբար ավելի բարձր է չաշխատող վարկերի կշիռը հիփոթեքային՝ 5.6%, առևտրի՝ 3.8% և սպառողական վարկերում՝ 3.7%:


Տարեվերջին չաշխատող ակտիվների 0.8%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտներին, իսկ 99.2%-ը՝ ռեզիդենտներին:

Գծանկար 20. Բանկային համակարգի չաշխատող ակտիվները



1. Հսկվող դասի վարկեր և դեբիտորական պարտքեր 2. Ոչ ստանդարտ դասի վարկեր և դեբիտորական պարտքեր, 3. Կասկածելի դասի վարկեր և դեբիտորական պարտքեր

Գծանկար 21. Բանկային համակարգի չաշխատող վարկերը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3.Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Սպառողական, 8. Հիփոթեքային, 9. Տնտեսության այլ ոլորտներ


Բանկային համակարգի եկամտաբերությունը

2010 թվականին բանկային համակարգի վերահսկողական հաշվետվությունների հիման վրա հաշվարկված զուտ շահույթի մեծությունը կազմել է 30.2 մլրդ դրամ[4]: Տարվա ընթացքում շահույթով են աշխատել 20 բանկեր, որոնց զուտ շահույթի մեծությունը կազմել է 30.5 մլրդ դրամ:

ՖՀՄՄ համաձայն՝ բանկային համակարգի շահույթը 2010 թվականին կազմել է 32.3 մլրդ դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների 2.3 % է, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 11.1%:

Տարվա ընթացքում բանկերի վարկային քաղաքականության ակտիվացման և վարկային պորտֆելի որակի բարելավման արդյունքում բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները զգալիորեն աճել են. նախորդ տարվա համեմատ բանկային համակարգի վերահսկողական հաշվետվությունների հիման վրա գնահատված շահութաբերությունը ըստ ակտիվների և կապիտալի աճել է համապատասխանաբար 1.5 և 7.2 տոկոսային կետով և կազմել 2.2% և 10.7%: Բանկային համակարգի զուտ գործառնական մարժան[5] հաշվետու տարում աճել է 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 3.4 %

Գծանկար 22. Շահութաբերությունը՝ ըստ շահույթով աշխատած 20 բանկերի (2010 թ. տարեկան)




[4] ԿԲ ներկայացվող հաշվետվությունների և ՖՀՄՄ համաձայն՝ շահույթի մեծությունների խոշոր տարբերությունը հիմնականում պայմանավորված է ստանդարտ ակտիվների գծով 1%-ի չափով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումներ կատարելու փաստով, քանի որ բանկերը այդչափով ծախս են ճանաչում:

[5] Զուտ գործառնական մարժան հավասար է զուտ տոկոսային եկամտի և զուտ ոչ տոկոսային եկամտի գումարի և ընդհանուր ակտիվների միջին տարեկան մեծության հարաբերակցությանը:

Շահութաբեր 20 բանկերի շահույթի՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.07-ով և կազմել 0.084 միավոր (նախորդ տարի շահույթով է աշխատել 14 բանկ): Վերջինս վկայում է շահութաբեր բանկերի միջև համակարգի շահույթի կենտրոնացվածության թույլ մակարդակի մասին:

Գծանկար 23. Բանկային համակարգի ROE ցուցանիշի բաղկացուցիչների դինամիկան



ROE աճը հիմնականում պայմանավորվել է զուտ շահույթի մարժայի 11.2 տոկոսային կետ աճով: Զուտ շահույթի մարժայի աճը բացատրվում է տարվա երկրորդ կեսին բանկերի վարկավորման քաղաքականության ակտիվացմամբ, վարկային պորտֆելի որակի լավացմամբ: Արդյունքում՝ բանկերին հաջողվել է նախորդ տարվա համեմատ ապահովել տոկոսային եկամտի 18.7 %, ոչ տոկոսային եկամտի 28.1% աճ, և վարկերի հնարավոր կորուստների պահուստներին կատարված հատկացումների 63 մլրդ դրամի չափով վերադարձ, ինչի շնորհիվ էլ արձանագրվել է համախառն գործառնական եկամտի[6] նկատմամբ զուտ շահույթի առաջանցիկ տեմպով աճ (զուտ շահույթի և համախառն գործառնական եկամտի աճի տեմպերը համապատասխանաբար կազմել են 252% և 21%):

ROE-ի աճի վրա ազդող հաջորդ էական գործոնը եղել է ռիսկով կշռված ակտիվների շրջանառելիության անկումը, որը, ի տարբերություն զուտ շահույթի մարժայի, բացասաբար է անդրադարձել ROE-ի աճի վրա:


[6] *Սույն վերլուծության իմաստով՝ բանկերի ըստ կապիտալի շահութաբերությունը ներկայացվում է հետևյալ բաղկացուցիչների տեսքով.*

$$ROE = \frac{P}{E} = \frac{P}{E} \times \frac{TI}{TI} \times \frac{RWA}{RWA} \times \frac{A}{A} = \frac{P}{TI} \times \frac{TI}{RWA} \times \frac{A}{E} \times \frac{RWA}{A} = NPM \times RWAturnover \times L \times RWAratio$$

որտեղ՝ P-ն զուտ շահույթ է, E-ն՝ միջին կապիտալը, A-ն՝ միջին ակտիվները, TI-համախառն գործառնական եկամուտը, որը հաշվարկվում է որպես տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների հանրագումար, RWA-ը՝ ռիսկով կշռված ակտիվները, NPM-ը՝ զուտ շահույթի մարժան, RWAturnover-ը՝ ռիսկով կշռված ակտիվների շրջանառելիությունը:

Վերջինս պայմանավորված է բանկերի միջև մրցակցության խորացման հետևանքով տոկոսադրույքների նվազեցմամբ, ինչի արդյունքում համախառն գործառնական եկամուտը աճել է ավելի դանդաղ, քան ռիսկով կշռված ակտիվները (համախառն գործառնական եկամտի և ռիսկով կշռված ակտիվների աճի տեմպերը համապատասխանաբար կազմել են 21% և 51%): Ռիսկով կշռված ակտիվների աճին նպաստել են նաև վերջիններիս հաշվարկի մեթոդաբանության փոփոխությունները:

Գծանկար 24. Բանկային համակարգի շահութաբերությունը ըստ ակտիվների (ROA)



Նախորդ տարվա համեմատ ՀՀ տարածքում գործող բանկերի ROA-ի միջքվարտիլային միջակայքը նվազել է 0.4 տոկոսային կետով և կազմել 2 %, ինչը վկայում է բանկերի շահութաբերության մակարդակի ցրվածության նվազման մասին: Հաշվետու տարում (3-րդ քվարտիլ – մեդիանա) և (մեդիանա - 1-ին քվարտիլ) ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 0.9% և 1.1%՝ վկայելով այն մասին, որ 2-րդ և 3-րդ քվարտիլում հայտնված բանկերի շահութաբերության մակարդակների ցրվածությունը գրեթե նույնն է:

Բանկային համակարգի եկամուտների և ծախսերի կառուցվածքը


Պայմանավորված տնտեսության հետճգնաժամային վերականգնման ժամանակահատվածում վարկային պորտֆելի որակի բարելավմամբ՝ 2010 թվականին բանկային համակարգի համախառն եկամուտների կառուցվածքում ավելացել են տոկոսային եկամուտների, իսկ համախառն ծախսերի կառուցվածքում նվազել են ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված հատկացումների տեսակարար կշիռները:

Հաշվետու տարում, 2009 թվականի համեմատ, համախառն եկամուտներն ավելացել են 11.9 %-ով (25.5 մլրդ դրամով), իսկ համախառն ծախսերը նվազել 0.2 %-ով (0.5 մլրդ դրամով): Համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտներն ավելացել են 18.7 %-ով (21.4 մլրդ դրամով), ոչ տոկոսային եկամուտ-

ները նվազել են 28.1 %-ով (8.9 մլրդ դրամով) և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձը նվազել է 7.2 %-ով (4.8 մլրդ դրամով):

Ծախսային մասում, նախորդ տարվա համեմատ, տոկոսային ծախսերն ավելացել են 10.8%-ով (5.7 մլրդ դրամով), ոչ տոկոսային ծախսերը՝ 16.3%-ով (9.7 մլրդ դրամով), իսկ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին հատկացումները նվազել են 18.0%-ով (15.9 մլրդ դրամով):

Գծանկար 25. Բանկային համակարգի ծախսերը և եկամուտները




Եկամուտների և ծախսերի վերոնշված աճի արդյունքում համախառն եկամտի կազմում 5.4 տոկոսային կետով նվազել են ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված մասհանումների վերադարձների, իսկ համախառն ծախսերում՝ 7.8 տոկոսային կետով՝ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված հատկացումների տեսակարար կշիռները:

Բանկային համակարգի տոկոսային եկամուտների աճը հիմնականում պայմանավորվել է տնտեսությանը տրամադրված վարկերից ստացած եկամուտների 13.8% աճով (13.2 մլրդ դրամ), ընդ որում՝ նախորդ տարվա համեմատ վերջիններիս տեսակարար կշիռը ընդհանուր տոկոսային եկամուտների կազմում նվազել է 3.5 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 80.3 %:

Ոչ տոկոսային եկամուտների աճը հիմնականում ապահովվել է միջնորդավճարներից ստացվող եկամուտների 24.6% աճի հաշվին (3.8 մլրդ դրամ): Արդյունքում՝ միջնորդավճարների տեսակարար կշիռը ոչ տոկոսային եկամուտներում նվազել է 1.3 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 47.4%: Ոչ տոկոսային եկամուտների 33.2 %-ն էլ բաժին է ընկել արտարժույթի առք ու վաճառքից ստացված եկամուտներին (31.12.2009թ., դրությամբ՝ 43.6%):

Գծանկար 26. Բանկային համակարգի ծախսերի և եկամուտների կառուցվածքը



Տոկոսային ծախսերի աճի միայն 34.2%-ը պայմանավորվել է ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսների աճով: Վերջիններիս ծավալը տարեսկզբից ավելացել է 7.3 %-ով, ինչի արդյունքում դրանց տեսակարար կշիռը տոկոսային ծախսերում նվազել է 1.7 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 49.5%:

Ոչ տոկոսային ծախսերի աճի միայն 39%-ը պայմանավորվել է աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների աճով (3.8 մլրդ դրամ), ընդ որում՝ վերջիններիս տեսակարար կշիռը ընդհանուրում նվազել է 0.6 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 42.7%:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ

2010 թվականին ՀՀ առևտրային բանկերում ռիսկերը եղել են կառավարելի շրջանակներում, և Հայաստանի ֆինանսական կայունությունը չի խաթարվել:


Ֆինանսական ռիսկերով պայմանավորված վնասները, 2009թ. ճգնաժամային տարվա համեմատությամբ, դրսևորել են կայուն նվազման միտումներ:

2010թ. ընթացքում առևտրային բանկերը գործել են պահանջվող նորմատիվային սահմանաչափերի ներքո, և ընդհանուր բանկային համակարգի կապիտալի համարժեքության և իրացվելիության ցուցանիշները գտնվել են պահանջվող նվազագույն նորմատիվային ցուցանիշներից գրեթե կրկնակի բարձր մակարդակում:

Աղյուսակ 7. Բանկային համակարգի նորմատիվային ցուցանիշները

	31.12.2009	31.12.2010	Նորմատիվային սահմանաչափեր
Կապիտալի համարժեքության նորմատիվ	28.4%	22.2%	12%
Ընդհանուր իրացվելիության նորմատիվ	34.4%	29.5%	15%
Ընթացիկ իրացվելիության նորմատիվ	140.8%	131.5%	60%
Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվ	15.9%	15.5%	20%
Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվ	104.3%	114.0%	500%
Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվ	2.9%	2.6%	5%
Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվ	8.7%	7.9%	20%

Գծանկար 27. Նորմատիվային ցուցանիշները ըստ բանկերի (31.12.2010թ. դրությամբ)




Վարկային ռիսկ


Բանկային համակարգում էապես կարևորվում է վարկային ռիսկի պատշաճ կառավարումը:

Տնտեսության ակտիվացմանը և վարկային պորտֆելի աճին զուգընթաց, հաշվետու տարվա ընթացքում վատորակ վարկերի («հսկվող», «ոչ ստանդարտ» և «կասկածելի» դասերի վարկերը) տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում դրսևորել է նվազման միտում (2009 թվականի վերջի համեմատ նվազել է 1.7 տոկոսային կետով)՝ տարեվերջին կազմելով ընդհանուր վարկերի ընդամենը 3.1%-ը:


Գծանկար 28. Տնտեսությանը տրամադրված վարկերի և հաշխատող ակտիվների դինամիկա ն ըստ ամիսների



Գծանկար 29. Տնտեսությանը տրամադրված վարկերի և հաշխատող ակտիվների դինամիկան




Գծանկար 30. Տնտեսությանը տրամադրված վարկերի և վարկային ռիսկի դինամիկան




Չաշխատող ակտիվների (վարկերի և դեբիտորական պարտքերի) մեծությունը 2010 թվականի վերջին կազմել է նորմատիվային ընդհանուր կապիտալի 9.7%-ը (նախորդ տարի՝ 14.3%-ը): Ընդ որում՝ եթե չաշխատող ակտիվների 29.6 մլրդ դրամ մեծությունից հանենք ակտիվների հնարավոր կորուստների հատուկ պահուստի 6.6 մլրդ դրամ մեծությունը, ապա մնացյալ՝ չաշխատող ակտիվների (ծածկույթ չունեցող չաշխատող ակտիվներ) մեծությունը կկազմի նորմատիվային կապիտալի 7.5%-ը (նախորդ տարի՝ 10.7%-ը), ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ դասակարգված ակտիվներն ամբողջությամբ դուրս գրելու վատթարագույն սցենարի դեպքում (անտեսվում է գրավադրված գույքի արժեքը) բանկային համակարգի կայունությունը չի վտանգվի:

Գծանկար 31. Ծածկույթ չունեցող ակտիվների (հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասի ակտիվների մեծության և ակտիվների հնարավոր կորուստների մասհանումների հատուկ պահուստի մեծության տարբերություն) և նորմատիվային կապիտալի հարաբերակցության դինամիկան



Գծանկար 32. Վարկերի և դեբիտորական պարտքերի կորուստները[7]



[7] *Կորուստների մակարդակը հաշվարկվել է որպես վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումների հարաբերություն ընդհանուր ակտիվներին:*

2010 թվականի ընթացքում զուտ մասհանումների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում նվազել է 1.0 տոկոսային կետով և կազմել է 0.6%:

Ըստ տնտեսության ճյուղերի վարկային ներդրումների բաշխվածությունը մեծ կենտրոնացվածություն չունի. ամենամեծ տեսակարար կշիռներ ունեցող արդյունաբերության ու առևտրի ճյուղի վարկերին բաժին է ընկնում վարկային ներդրումների համապատասխանաբար 21.3% և 19.3%-ը:


Արտարժութային ռիսկ

2010 թվականին, 2009 թվականի համեմատությամբ, բանկային համակարգի՝ արտարժութային ռիսկով պայմանավորված վնասները ավելի փոքր են եղել: 2010 թվականին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին տարեկան արժեզրկումը կազմել է 2.8%: Այլ արժույթների նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի տատանումների հետևանքով բանկային համակարգը արտարժույթի վերագնահատման արդյունքում ունեցել է ընդհանուր 1.1 մլրդ դրամի չափով վնաս (2009թ. վնասը կազմել է 5.7 մլրդ դրամ), որը կազմել է բանկային համակարգի նորմատիվային կապիտալի 0.4%-ը (2009թ.՝ 2.2%-ը): Արտարժույթի վերագնահատման արդյունքում վնաս է ունեցել 17 բանկ, իսկ եկամուտ՝ 4 բանկ: Բանկային համակարգն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների արդյունքում հաշվետու տարում ապահովել է 13.5 մլրդ դրամ եկամուտ (նախորդ տարվա համեմատ նվազել է 2.3%-ով): Արտարժույթի ռիսկի գնահատման VAR (Value at risk) մեթոդաբանությամբ կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 31.12.2010 թ. դրությամբ բանկային համակարգի արտարժույթի վերագնահատման արդյունքում մեկօրյա հնարավոր վնասները 95% հավանականությամբ չեն գերազանցի 35 մլն դրամը: Արտարժութային ռիսկը զսպելու նպատակով 2010 թվականին ՀՀ կենտրոնական բանկը մի շարք փոփոխություններ է կատարել բանկերի գործունեության կարգավորման դաշտում, մասնավորապես՝ սահմանվել են բանկի արտարժութային դիրքի (ինչպես մեկ, այնպես էլ բոլոր արտարժույթների գծով) և ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցություններ:

Իրացվելիության ռիսկ

2010 թվականի ընթացքում բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվների ծավալն ավելացել է 0.1%-ով (2009թ.՝ 88.8% աճ), այն դեպքում, երբ ընդհանուր ակտիվներն ավելացել են 17.7%-ով, իսկ ցպահանջ պարտավորությունները՝ 7.2%-ով: Արդյունքում՝ բանկային համակարգի ընդհանուր իրացվելիության (բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերություն) և ընթացիկ իրացվելիության (բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերություն) նորմատիվային ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 4.9 և 9.3 տոկոսային կետով՝ կազմելով 29.5% և 131.5%: Դեռևս ճգնաժամի պայմաններում բանկային համակարգի կողմից որդեգրված վարկավորման զգուշավոր քաղաքականության արդյունքում 2008-2009թթ. զգալի մեծացել է բանկային համակարգի իրացվելիության մակարդակը: 2010 թվականին իրացվելիության նորմատիվների նվազումը պայմանավորվել է բանկերի կողմից իրացվելիության կառավարման հետճգնաժամային ճշգրտումներով: Ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ցուցանիշները նորմատիվային պահանջվող մակարդակից բարձր են և իրացվելիության հիմնախնդրի առաջացման վտանգ չեն պարունակում:

Գծանկար 33. Իրացվելիության նորմատիվային ցուցանիշները ըստ բանկերի (31.12.2010թ. դրությամբ)



Իրացվելիության տեսանկյունից կարևորվում է նաև բանկային համակարգի պարտավորությունների կախվածության մակարդակը խոշոր ավանդատուներից: 2010 թվականին ընդհանուր պարտավորություններում խոշոր պարտավորությունների տեսակարար կշիռը նվազել է 5.3 տոկոսային կետով և կազմել 27.6%[8]:

Գնային ռիսկ

ՀՀ բանկային համակարգում գնային ռիսկը գնահատվում է բավականին ցածր: 2010 թվականին բանկային համակարգը գնային ռիսկով պայմանավորված վնասներ գրեթե չի ունեցել: Համեմատաբար ռիսկային ոչ պետական արժեթղթերում բանկային համակարգի կողմից տարեվերջին իրականացված ներդրումները կազմել են 5.7 մլրդ դրամ, որը նորմատիվային կապիտալի 1.9%-ն է, և նշված արժեթղթերի գների նույնիսկ կտրուկ տատանումները բանկային համակարգին էական վնաս չեն պատճառի: ՀՀ բանկային համակարգի՝ առևտրային նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կշիռն ընդհանուր ակտիվներում անհամեմատ փոքր է, և գնային ռիսկը գնահատվում է բավականին ցածր: Առևտրային նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից բանկային համակարգն ունեցել է 109 մլն դրամ օգուտ (կապիտալի 0.04%-ը), իսկ հիմնական միջոցների վերագնահատումից՝ 12 մլն դրամ վնաս (կապիտալի 0.004%-ը): Հիմնական միջոցների գների ոչ կտրուկ տատանումները ևս խոշոր վնասների չեն հանգեցնի: Հիմնական միջոցների շուկայական գների, օրինակ՝ 30%-ով նվազման դեպքում անշարժ գույքի վերագնահատման արդյունքում համակարգի կորուստը կկազմի նորմատիվային կապիտալի 6.0%-ը: Տարեվերջի դրությամբ բանկային համակարգի հիմնական միջոցների մեծությունը կազմել է 67.1 մլրդ դրամ: Գնահատվել է նաև անշարժ գույքի գների նվազման ազդեցությունը

[8] *Խոշոր են համարվում այն պարտավորությունները, որոնք, առանձին վերցրած, գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5 %-ը՝ առանց հաշվի առնելու փոխկապվածությունը:*


վարկային պորտֆելի որակի վրա (վարկային ռիսկի տեսանկյունից): Ըստ սթրես-սցենարների հաշվարկների՝ անշարժ գույքի շուկայական արժեքի 30% արժեզրկման դեպքում խոցելի վարկային պորտֆելի[9] 100%-ի չվերադարձման հետևանքով բանկային համակարգի վնասը (հաշվի առնելով այդ վարկերի դիմաց գրավադրված գույքի արժեզրկված գնով իրացումը) կկազմի նորմատիվային ընդհանուր կապիտալի 5.3%-ը:

Տոկոսադրույքի ռիսկ

Հաշվի առնելով այն փաստը, որ ակտիվների և պարտավորությունների միջին ժամկետայնությունը կարճ է, կարող ենք արձանագրել, որ տոկոսադրույքի ռիսկը բանկային համակարգում կառավարելի շրջանակներում է, և համակարգը շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների ժամանակ կարող է արագ արձագանքել և վերանայել տոկոսադրույքները:

Վերջին տարիներին բանկային համակարգի ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնության ճեղքվածքը համարյա չի փոփոխվում՝ մնալով մոտ կես տարվա շրջանակներում, ընդ որում՝ ժամկետայնության նման ճեղքվածք պահպանվում է գրեթե բոլոր բանկերում:

Գծանկար 34.
ՀՀ տարածքում գործող բանկերի ակտիվների և պարտավորությունների դյուրացիայի ճեղքվածք (31.12.2010թ. դրությամբ)



Համաձայն տոկոսադրույքի ռիսկի դյուրացիայի մեթոդով իրականացված հաշվարկների՝ ընդհանուր շուկայական տոկոսադրույքների (ակտիվների և պարտավորությունների) 2 տոկոսային կետով աճի դեպքում բանկային համակարգի կապիտալի տնտեսական արժեքը կնվազի 2.1 մլրդ դրամով կամ նորմատիվային կապիտալի 0.7%-ի չափով:

[9] *Խոցելի վարկային պորտֆելը բանկի այն վարկերի մնացորդների հանրագումարն է, որոնց մնացորդային մեծությունները գերազանցում են դրանց դիմաց գրավադրված անշարժ գույքի 30%-ով արժեզրկված արժեքները:*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ տարածքում գործող վարկային ընկերություններ

2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են երեսուներկու վարկային կազմակերպություններ (վաթսուն մասնաճյուղերով), որոնցից չորսը լիզինգային կազմակերպություններ են, մեկը՝ վարկային միություն և քսանյոթը՝ ունիվերսալ վարկային կազմակերպություն: Տարվա ընթացքում վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի քանակն ավելացել է հինգով:

2010 թվականի ընթացքում վարկային կազմակերպության գործունեության լիցենզիա է ստացել յոթ ընկերություն՝ «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ, «Կամուրջ» ՈՒՎԿ ՍՊԸ, «Ջի Ընդ էյ» ՈՒՎԿ ՍՊԸ, «Կիլիկիա» ՈՒՎԿ ՍՊԸ, «ՖԻԿՕ» ՈՒՎԿ ՍՊԸ, «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ, «Կրեդիտ Կորպ» ՈՒՎԿ ՓԲԸ, «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ (ստեղծվել է «Կրեդիտ Յունիոն» ՈՒՎԿ և «Վաշինգտոն Քափիթալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ների միաձուլման արդյունքում):


Կենտրոնացվածությունը ՀՀ վարկային կազմակերպություններում


Վարկային կազմակերպությունների կենտրոնացվածության մակարդակը դրսևորել է նվազման որոշակի միտումներ՝ հիմնականում պայմանավորված նոր կազմակերպությունների մուտքով շուկա: Տարբեր ամփոփ ցուցանիշների՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը նվազել է և տատանվում է 0.07-ից 0.09-ի միջակայքում՝ վկայելով համակարգի թույլ կենտրոնացվածության մասին:

Աղյուսակ 8. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը

	31.12.07	31.12.08	31.12.09	31.12.10
Ընդհանուր ակտիվներ	0.14	0.14	0.10	0.07
Ընդհանուր պարտավորություններ	0.20	0.17	0.12	0.08
Ընդհանուր կապիտալ	0.09	0.09	0.11	0.09
Տնտեսությանը տրամադրված վարկեր, լիզինգ, ֆակտորինգ	0.16	0.15	0.11	0.08

Գծանկար 35. Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը՝ ըստ տարբեր ցուցանիշների





ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Վարկային կազմակերպությունների կապիտալը

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալը տարվա ընթացքում ավելացել է 37.0%-ով (9.7 մլրդ դրամով): Կապիտալի աճը պայմանավորվել է կանոնադրական հիմնադրամի աճով և ընթացիկ տարվա շահույթով:


Տարվա ընթացքում կանոնադրական հիմնադրամ են համալրել նոր լիցենզավորված վեց, ինչպես նաև արդեն գործող ինը վարկային կազմակերպություններ՝ ընդհանուր 6.1 մլրդ դրամի չափով: Տարեվերջին կապիտալը կազմել է 36.0 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտների փայամասնակցության տեսակարար կշիռը հաշվետու տարվա ընթացքում նվազել է 10.9 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 36.3%: Ոչ ռեզիդենտների փայամասնակցությամբ 14 վարկային կազմակերպություններից 7-ում ոչ ռեզիդենտների մասնակցությունը կազմել է 100%:

Վարկային կազմակերպությունների պարտավորությունները

Պարտավորություններն ավելացել են 3.4%-ով (1.7 մլրդ դրամով) և կազմել 51.2 մլրդ դրամ: Պարտավորությունների կազմում հիմնականում ավելացել են ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային պարտավորությունները՝ 42.5%-ով (4.9 մլրդ դրամով) և ՀՀ Կառավարության նկատմամբ պարտավորությունները՝ 77.4%-ով (3.1 մլրդ դրամով):

Գծանկար 37. Վարկային կազմակերպությունների պարտավորությունների կառուցվածքը



1. Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 2. Ժամկետային պարտավորություններ իրավաբանական անձանց նկատմամբ, 3. Ժամկետային պարտավորություններ ֆիզիկական անձանց նկատմամբ, 4. Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ, 5. Այլ պարտավորություններ

Ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային պարտավորությունների կազմում հիմնականում ավելացել են դրամային պարտավորությունները՝ 55.9%-ով (3.9 մլրդ դրամով), իսկ արտարժութային պարտավորություններն ավելացել են 21.5%-ով (969 մլն դրամով):


Իրավաբանական և ֆիզիկական անձանց ցպահանջ պարտավորություններն ավելացել են համապատասխանաբար 89.5%-ով և 8.8%-ով, ժամկետային պարտավորությունները՝ 44.2%-ով և 17.8%-ով:

Վարկային կազմակերպությունների ակտիվները

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը տարվա ընթացքում ավելացել է 15.0%-ով (11.4 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 87.2 մլրդ դրամ (բանկային համակարգի ակտիվների 5.6%-ը (տարեսկզբին՝ 5.7%)): Տարեվերջին գործող կազմակերպություններից 27-ում արձանագրվել է ակտիվների աճ, իսկ 5-ում՝ նվազում:

Ակտիվների կազմում հիմնականում ավելացել են տնտեսությանը տրամադրված վարկերը (ներառյալ լիզինգը)՝ 18.6%-ով (9.4 մլրդ դրամով) և կազմել 59.7 մլրդ դրամ, բանկերի (ներառյալ ընթացիկ հաշիվները) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներն ավելացել են 19.8%-ով (3.8 մլրդ դրամով) և կազմել 23.2 մլրդ դրամ:

Գծանկար 38. Վարկային կազմակերպությունների ակտիվների կառուցվածքը




1. Բանկային հաշիվներ, 2. Պահանջներ բանկերի նկատմամբ, 3. Պետական արժեթղթեր, 4. Վարկեր իրավաբանական անձանց, 5. Վարկեր ֆիզիկական անձանց, 6. Վարկեր ՎԿ հետ կապված անձանց և աշխատակիցներին

Ըստ ոլորտների՝ հիմնականում մեծ է եղել գյուղատնտեսության, առևտրի և ֆինանսական հատվածների վարկավորման աճը՝ համապատասխանաբար կազմելով 39.9% (4.1 մլրդ դրամով աճ), 35.0% (3.3 մլրդ դրամ աճ), 16.9% (2.8 մլրդ դրամ աճ): Նվազել են հիմնականում շինարարության ոլորտի վարկերը՝ 33.9%-ով (1.8 մլրդ դրամով):


Ընդհանուր վարկերում նվազել են շինարարության ճյուղի, տրանսպորտի և կապի ճյուղի վարկերի տեսակարար կշիռները, ավելացել են գյուղատնտեսության ճյուղի և առևտրի ոլորտի վարկավորման տեսակարար կշիռները:

Գծանկար 39. Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի ծավալները



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9. Հիփոթեքային, 10. Այլ ճյուղեր

Գծանկար 40. Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9. Հիփոթեքային, 10. Այլ ճյուղեր

Վարկային կազմակերպությունների չաշխատող («հսկվող», «ոչ ստանդարտ» և «կասկածելի» դասերի) ակտիվների տեսակարար կշիռը հաշվետու տարվա ընթացքում նվազել է 1.1 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 3.0%: Ըստ ճյուղային բացվածքի՝ չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը բարձր է տրանս-


պորտի և կապի ճյուղում (ճյուղին տրամադրված վարկերի 16.6%-ը «չաշխատող» է), արդյունաբերության ճյուղում (ճյուղին տրամադրված վարկերի 6.2%-ը «չաշխատող» է): Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը ցածր է շինարարության ճյուղում (ճյուղին տրամադրված վարկերի 0.8%-ը «չաշխատող» է):

Վարկային կազմակերպությունների ֆինանսական արդյունքները

Վարկային կազմակերպությունների վերահսկողական հաշվետվությունների հիման վրա հաշվարկված զուտ շահույթի մեծությունը 2010 թվականին կազմել է 4.3 մլրդ դրամ: Տարեվերջին գործող կազմակերպություններից տարվա ընթացքում շահույթով են աշխատել 26-ը, որոնց ընդհանուր զուտ շահույթի մեծությունը կազմել է 4.4 մլրդ դրամ: Վարկային կազմակերպությունների հաշվետու տարվա շահութաբերությունն ըստ ակտիվների (RoA) կազմել է 5.0%, իսկ ըստ կապիտալի (RoE)՝ 14.0%:

2010 թվականին վարկային կազմակերպությունների զուտ շահույթը՝ հաշվարկված ըստ ՖՀՄՍ-ի,[10] կազմել է 4.7 մլրդ դրամ:

Գծանկար 41. Վարկային կազմակերպությունների եկամուտների և ծախսերի կառուցվածքը



Վարկային կազմակերպությունների տոկոսային եկամուտներն ավելացել են 1.4 մլրդ դրամով (13%-ով)՝ հիմնականում պայմանավորված առևտրային բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից և տնտեսությանը տրամադրված վարկերից ստացած եկամուտների աճով: Վար-

[10] *ԿԲ ներկայացվող հաշվետվությունների և ՖՀՄՍ համաձայն հաշվարկված շահույթի մեծությունների խոշոր տարբերության հիմնական պատճառը ստանդարտ ակտիվների գծով 1%-ի չափով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումներ կատարելն է, քանի որ կազմակերպությունները այդչափով ծախս են ճանաչում:*

կերից ստացված տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր տոկոսային եկամուտների կազմում նվազել է 7 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 77%:

Ոչ տոկոսային եկամուտներն ավելացել են 381 մլն դրամով (10%-ով)՝ հիմնականում պայմանավորված ստացված միջնորդավճարների ավելացմամբ: Ոչ տոկոսային եկամուտների կազմում ստացված միջնորդավճարների մասնաբաժինն ավելացել է 11 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 65%:

Տոկոսային ծախսերն ավելացել են 590 մլն դրամով (18%-ով)՝ հիմնականում պայմանավորված ժամկետային փոխառությունների դիմաց վճարվելիք տոկոսային ծախսերի աճով: Վերջինիս բաժին է ընկել տոկոսային ծախսերի 39%-ը (նախորդ տարի՝ 36%), իսկ առևտրային բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներին՝ 41%-ը (նախորդ տարի՝ 45%):

Ոչ տոկոսային ծախսերն ավելացել են 815 մլն դրամով (16%-ով)՝ հիմնականում պայմանավորված հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 334 մլն դրամի (11%) աճով: Վերջինիս ոչ տոկոսային ծախսերի կազմում բաժին է ընկել 57%-ը (նախորդ տարի՝ 60%):

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇՈՒԿԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ


ՀՀ տարածքում գործող ապահովագրական ընկերություններ

31.12.2010 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործել է 9 ապահովագրական ընկերություն՝ 3 մասնաճյուղերով: Բոլոր ապահովագրական ընկերություններն իրականացրել են ոչ կյանքի ապահովագրություն:

Կենտրոնացվածությունը ՀՀ ապահովագրական համակարգում

Ապահովագրական համակարգը բնութագրող կարևորագույն ցուցանիշների՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը մինչև 2009 թվականի վերջն ունեցել է նվազման միտում, իսկ 2010 թվականին, բացառությամբ ապահովագրական գումարների՝ աճի միտում, որը հիմնականում պայմանավորված է ընկերությունների թվի կրճատմամբ:

Գծանկար 42. Հիմնական ցուցանիշների կենտրոնացվածության դինամիկան



Աղյուսակ 9. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը

	31.12.08	31.12.09	31.12.10
Ակտիվներ	0.10	0.09	0.12
Պարտավորություններ	0.14	0.12	0.15
Կապիտալ	0.10	0.09	0.11
Ապահովագրական գումարներ	0.26	0.28	0.21
Ապահովագրավճարներ	0.16	0.14	0.16

Աղյուսակ 10. Ապահովագրական համակարգի կենտրոնացվածության մակարդակը (%)


	31.12. 07	31.12. 08	31.12. 09	31.12. 10
Ակտիվներ				
ԿԳ 2 (խոշորագույն **երկու** ապահովագրական ընկերությունների ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր համակարգի ակտիվներում)	36	28	24	34
ԿԳ 5 (խոշորագույն **հինգ** ապահովագրական ընկերությունների ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր համակարգի ակտիվներում)	68	57	55	69
Պարտավորություններ				
ԿԳ 2	50	40	34	42
ԿԳ 5	84	78	71	79
Կապիտալ				
ԿԳ 2	28	27	25	27
ԿԳ 5	62	55	53	63
Ապահովագրական գումարներ				
ԿԳ 2	79	65	70	57
ԿԳ 5	96	95	89	88
Ապահովագրավճարներ				
ԿԳ 2	49	44	41	46
ԿԳ 5	83	82	75	83

Ապահովագրական ընկերությունների միջև բևեռացվածությունը նախորդ տարվա համեմատ փոքր-ինչ աճել է: Ընդ որում՝ աղյուսակ 10-ում ներկայացված բոլոր ցուցանիշների կենտրոնացվածության մակարդակն աճել է, բացառությամբ ապահովագրական գումարների, որոնց կենտրոնացվածության ցուցանիշը նվազել է:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԻՏԱԼ

2010 թվականի ընթացքում ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 1.7%-ով՝ կազմելով 12.5 մլրդ դրամ: Կանոնադրական կապիտալն ավելացել է 10.8%-ով՝ պայմանավորված ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի փոփոխությամբ, համաձայն որի՝ ոչ կյանքի ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիա ունեցող տեղական ապահովագրական ընկերությունները պարտավոր էին իրենց կապիտալը համալրել մինչև 2011 թվականի հունվարի 1-ը՝ ապահովելով 1.5 մլրդ դրամ ընդհանուր կապիտալ (քանի որ հաշվետու ընկերությունների թիվը կրճատվել է, ապա կրճատվել է նաև ընդհանուր կապիտալի նկատմամբ պահանջը):

Գծանկար 43. Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալի կառուցվածքը




1. Կանոնադրական կապիտալ, 2. Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ, 3. Ընդհանուր կապիտալի այլ տարրեր

Ապահովագրական ընկերությունների վճարունակություն

Ապահովագրական ընկերությունների վճարունակության պահանջվող սահմանաչափի նորմատիվի մի-ջինը, ըստ ապահովագրական ընկերությունների, կազմում է նորմատիվային ընդհանուր կապիտալի 9%-ը: Վճարունակության սահմանաչափի նշված մակարդակը վկայում է համակարգի հուսալիության մասին (վճա-րունակության պահանջվող առավելագույն սահմանաչափի հարաբերությունը նորմատիվային ընդհանուր կապիտալին սահմանվում է 100%):


Գծանկար 44. Վճարունակության պահանջվող սահմանաչափի հարաբերությունը նորմատիվային ընդհանուր կապիտալին՝ ըստ ապահովագրական ընկերությունների (31.12.2010 թվականի դրությամբ)



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐ


Ապահովագրական ընկերությունների ակտիվները 2010 թվականին ավելացել են 50.9%-ով և 31.12.2010թ. դրությամբ կազմել են 25.6 մլրդ դրամ:

Գծանկար 45. Ապահովագրական ընկերությունների ակտիվների դինամիկան



Տարեվերջի դրությամբ ապահովագրական համակարգի ակտիվների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել ավանդները բանկերում (52.1%), բանկային հաշիվները (13.0%), պետական արժեթղթերը (ներառյալ ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերը) (8.5%) և ապահովադիրներից ստացվելիք գումարներն ուղղակի ապահովագրության գծով (7.2%): Հարկ է նշել, որ ավանդների 94.1%-ը բաժին է ընկել ռեզիդենտ բանկերում ներդրված ընթացիկ ավանդներին, իսկ 5.9%-ը՝ ռեզիդենտ բանկերում ներդրված ոչ ընթացիկ ավանդներին:

Գծանկար 46. Ապահովագրական համակարգի ակտիվների կառուցվածքը



1. Ավանդներ բանկերում, 2. Բանկային հաշիվներ, 3. Պետական արժեթղթեր, 4. Ապահովադիրներից ստացվելիք գումարներ ուղղակի ապահովագրության գծով, 5. Հիմնական միջոցներ, 6. Ոչ պետական արժեթղթեր, 7. Կանխիկ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, 8. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ, 9. Հատուցումների գծով պահանջներ վերաապահովագրողների նկատմամբ, 10.Այլ ակտիվներ


Ինչպես երևում է գծապատկերից, ապահովագրական համակարգի ակտիվները հիմնականում տեղաբաշխված են բարձր իրացվելի ակտիվներում, ինչը վկայում է, որ ապահովագրական ընկերություններն իրացվելիության խնդիր չունեն: Դրա վկայությունն է նաև այն, որ ապահովագրական ընկերությունների կողմից 2010 թվականի ընթացքում իրացվելիության նորմատիվի խախտում չի արձանագրվել:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Ապահովագրական ընկերությունների պարտավորությունները 2010 թվականի ընթացքում ավելացել են 180.2%-ով՝ տարեվերջին կազմելով 13.1 մլրդ դրամ: Պարտավորությունների աճը մեծամասամբ պայմանավորվել է ապահովագրության կանխավճարների կտրուկ աճով:

Պարտավորությունների կառուցվածքում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ: 31.12.2010 թ. դրությամբ պարտավորությունների կազմում մեծ տեսակարար կշիռ են ունեցել ապահովագրության կանխավճարները (49.1%), ապահովագրական պահուստները (21.9%) և վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարները (13.9%):

Գծանկար 47. Ապահովագրական ընկերությունների պարտավորությունների դինամիկան




Գծանկար 48. Ապահովագրական համակարգի պարտավորությունների կառուցվածքը



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2010 թվականի ընթացքում ապահովագրական ընկերությունները աշխատել են ընդհանուր 975.8 մլն դրամ վնասով: Հարկ է նշել, որ երկու ապահովագրական ընկերություններ աշխատել են շահույթով, յոթը՝ վնասով, ընդ որում՝ շահույթով աշխատած ընկերությունների շահույթը կազմել է 161.1 մլն դրամ, իսկ վնասով աշխատածների վնասը՝ 1.14 մլրդ դրամ:

Գծանկար 49. 2010 թվականի ընթացքում հաշվեգրված ապահովագրավճարներ և ապահովագրական հատուցումներ ըստ ապահովագրության դասերի



1. Հրդեհից և բնական աղետներից գույքի ապահովագրություն, 2. Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն, 3. Առողջության ապահովագրություն, 4. Օդանավերի ապահովագրություն, 5. Օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն, 6. Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն, 7. Ֆինանսական վնասների ապահովագրություն, 8. Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն, 9. Այլ դասերի ապահովագրություն

Վնասը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2010 թվականին ապահովագրական ընկերությունները ԱՊՊԱ պայմանագրերի գծով կատարել են ծախսումներ (գործակալական ցանցի ընդլայնման ծախսեր, միջնորդավճարներ՝ գործակալներին, գովազդային, ներկայացուցչական և այլն), իսկ հավաքագրված ապահովագրավճարները հաշվապահորեն հաշվեգրվելու են որպես եկամուտ միայն 2011 թվականին (հաշվապահական պահանջների համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագրերի կնքման ժամանակ ստացված կանխավճարները եկամուտ կճանաչվեն 2011 թվականի հունվարի մեկից սկսած՝ պայմանագրի գործողության առաջին օրվանից): Վերոնշյալ ծախսումներն իրականացվել են շուկայում դիրքերի ամրապնդման և սպասարկման լայն ցանցի ներդրման համար՝ ԱՊՊԱ անխափան ներդրումն ու շահագործումն ապահովելու նպատակով:

2010 թվականին ապահովագրական ընկերությունների կողմից հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը կազմել է 8.3 մլրդ դրամ (2009 թվականին՝ 8.1 մլրդ դրամ): Հաշվեգրված ապահովագրավճարների 87.7%-ը բաժին է ընկել հրդեհից և բնական աղետներից գույքի (22.7%), ցամաքային տրանսպորտի (18.7%), առողջության (12.8%), օդանավերի (9.5%), օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության (6.5%), ընդհանուր պատասխանատվության (6.2%), փոխադրվող գույքի (բեռների) (5.5%) և ֆինանսական վնասների (5.8%) ապահովագրության գծով հաշվեգրված ապահովագրավճարներին: 2010 թվականի հաշվեգրված ապահովագրավճարների զգալի աճ է գրանցվել հիմնականում ընդհանուր պատասխանատվության, առողջության և հրդեհից ու բնական աղետներից ապահովագրության դասերի գծով՝ 2009 թվականի համեմատ աճելով համապատասխանաբար 61%, 27% և 16%-ով: Ի տարբե-

րություն նշված ապահովագրության դասերում արձանագրված խոշոր աճի՝ 2010 թվականին, 2009-ի համեմատ, կրճատվել են օդանավերի և օդանավերի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության դասերի գծով հաշվեգրված ապահովագրավճարները՝ համապատասխանաբար 24% և 19%-ով: Կարգավորման դաշտի խստացման հետևանքով երաշխիքի տրամադրման դասի գծով 2010 թվականին հաշվեգրված ապահովագրավճարները 2009-ի համեմատ կրճատվել են 99%-ով:

2010 թվականի ընթացքում ապահովագրական ընկերությունների կողմից հաշվեգրված ապահովագրական հատուցումների մեծությունը կազմել է 1.7 մլրդ դրամ (2009 թվականին՝ 1.9 մլրդ դրամ): Հաշվեգրված ապահովագրական հատուցումների 73.9%-ը բաժին է ընկել ցամաքային տրանսպորտի (38.3%) և առողջության (35.6%) ապահովագրության հատուցումներին: 2010 թվականի ընթացքում առողջության ապահովագրության հատուցումների ծավալը 45%-ով գերազանցել է 2009 թվականի համապատասխան ցուցանիշը:

Ապահովագրական համակարգի վնասաբերության ցուցանիշի մեծությունը կազմել է 22.5%[11], ապահովագրական ընկերությունների զուտ տոկոսային եկամուտների մեծությունը՝ 933.2 մլն դրամ: Հարկ է նշել, որ տոկոսային եկամուտների 78.5%-ը (կամ 739.0 մլն դրամ) բաժին է ընկել բանկերում ներդրված ընթացիկ ավանդների և բանկերին տրամադրված ընթացիկ փոխառությունների գծով տոկոսային եկամուտներին: Ապահովագրական ընկերությունների զուտ ոչ տոկոսային եկամուտների մեծությունը 31.12.2010 թ. դրությամբ կազմել է -3.8 մլրդ դրամ: Ոչ տոկոսային ծախսերի 73.9%-ը (կամ 2.8 մլրդ դրամ) բաժին է ընկել ապահովագրական ընկերությունների կառավարչական և հասարակական կապերի գծով ծախսերին:


ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ

Հաշվետու տարվա վերջի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի քանակը կազմել է 50.5 հազար, ինչը 152-ով պակաս է 31.12.2009 թ. դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի քանակից: Ապահովագրության պայմանագրերի ապահովագրական գումարները 2010 թվականի վերջի դրությամբ կազմել են 3.05 տրլն դրամ, ինչը 10.0%-ով ցածր է 2009 թվականի ցուցանիշից: Ապահովագրական գումարների կրճատումը հիմնականում պայմանավորված է 2009 թվականի համեմատությամբ օդանավերի և օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության դասերի ապահովագրական գումարների 30.9%-ով նվազմամբ:

---


[11] Վնասաբերության ցուցանիշը հաշվարկվել է որպես հաշվետու տարվա ընթացքում հաշվեգրված ապահովագրական հատուցումների և հաշվետու տարվա ընթացքում հաշվեգրված ապահովագրավճարների և չվաստակած ապահովագրավճարների փոփոխության տարբերության հարաբերություն:

Գծանկար 50. 31.12.2010 թ. դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի կառուցվածքը



1. Ցամաքային տրանսպորտի, 2. Հրդեհից և բնական աղետներից գույքի ապահովագրություն, 3. Դժբախտ պատահարներից ապահովագրություն, 4. Աջակցության ապահովագրություն, 5. Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն, 6. Առողջության ապահովագրություն, 7. Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն, 8.Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն, 9. Այլ դասերի գծով ապահովագրություն

Գծանկար 51. 31.12.2010 թ. դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարների կառուցվածքը



1. Օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն, 2. Հրդեհից ու բնական աղետներից գույքի ապահովագրություն, 3. Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն, 5. Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն, 4. Ֆինանսական վնասների ապահովագրոթյուն, 6. Աջակցության ապահովագրություն, 7. Օդանավերի ապահովագրություն, 8. Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն, 9. Դժբախտ պատահարներից ապահովագրություն, 10. Այլ դասերի գծով ապահովագրություն

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆԱԾ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի վերջի դրությամբ վերաապահովագրական գումարների մեծությունը կազմել է 2.52 տրլն դրամ կամ ապահովագրական ընկերությունների ստանձնած ռիսկերի 79.7%-ը: Հարկ է նշել, որ ռիսկերի 93.8%-ը վերաապահովագրված է հուսալի վերաապահովագրողների մոտ, ինչը նվազագույնի է հասցնում վերջիններիս կողմից իրենց պարտավորությունների չկատարման ռիսկը: 2010 թվականի ընթացքում վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարների մեծությունը կազմել է 4.0 մլրդ դրամ կամ ապահովագրավճարների 48.6%-ը, իսկ վերաապահովագրողներից ստացվող գումարների մեծությունն ապահովագրական հատուցումների գծով կազմել է 535.1 մլն դրամ կամ հաշվետու տարվա ընթացքում հաշվեգրված ապահովագրական հատուցումների 30.7%-ը:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

31.12.2010 թ. դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ են մատուցել 21 ՀՀ առևտրային բանկեր և 8 ներդրումային ընկերություններ: Ներդրումային ծառայություն մատուցող ընկերություններից յոթը կարող են իրենց կամ հաճախորդի անունից հաճախորդի կամ իրենց հաշվին արժեթղթերով գործարքներ իրականացնել և հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականներ ընդունել ու հաղորդել, հինգը՝ նաև արժեթղթերով ներդրումների հետ կապված խորհրդատվություն տրամադրել, վեցը՝ իրականացնել արժեթղթերի տեղաբաշխման գործունեություն և երեքը՝ արժեթղթերի փաթեթի կառավարում:


Տարվա ընթացքում ներդրումային ընկերությունների կենտրոնացվածության մակարդակը ցուցաբերել է փոքր-ինչ աճի միտում:

Աղյուսակ 11. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը

Ցուցանիշներ	31.12.2008	31.12.2009	31.12.2010
Ընդհանուր ակտիվներ	0.17	0.17	0.20
Ընդհանուր պարտավորություններ	0.20	0.18	0.20
Ընդհանուր կապիտալ	0.26	0.25	0.21

Ներդրումային ընկերությունների ակտիվները նախորդ տարվա համեմատ ավելացել են 26%-ով՝ կազմելով 19.6 մլրդ դրամ, իսկ ընդհանուր կապիտալն ավելացել է 9%-ով՝ կազմելով 3.2 մլրդ դրամ: 2010 թվականին ներդրումային ընկերությունների զուտ շահույթը կազմել է 301 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 49%-ով, ընդ որում՝ շահույթ են ապահովել ընկերություններից 7-ը, և միայն մեկը տարին ավարտել է վնասով:

Գծանկար 52. Ներդրումային ընկերությունների ակտիվների ծավալը և վերջիններիս աճի տեմպը 2004-2010 թթ.




ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված գործառնությունների ընդհանուր ծավալը (ներառյալ ռեպո գործառնությունները՝ առանց ՀՀ ԿԲ հետ գործառնությունների) ավելացել է 53%-ով և կազմել 1 տրլն 757 մլրդ դրամ:

ՀՀ արժեթղթերի շուկայում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը (առանց ՀՀ ԿԲ հետ իրականացված գործառնությունների) նախորդ տարվա համեմատ ավելացել է 82%-ով՝ կազմելով 1 տրլն 470 մլրդ դրամ կամ արժեթղթերի շուկայի ընդհանուր շրջանառության 83.6%-ը:

Կնքված ռեպո գործառնությունների մեջ նույնպես գերակշիռ մասը՝ 97.7%-ը, կազմել են պետական արժեթղթերով կատարված գործարքները, ընդ որում՝ մեծ մասը՝ 75%-ը, շարունակել են կազմել պետական միջնաժամկետ պարտատոմսերը, 21%-ը՝ երկարաժամկետ պարտատոմսերը և 4%-ը՝ կարճաժամկետ պարտատոմսերը:

Արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների մեջ շարունակել են գերակշռել պետական արժեթղթերով իրականացվող գործառնությունները: Չնայած պետական արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները նախորդ տարվա համեմատ նվազել են 8%-ով և տարեվերջին կազմել 270.5 մլրդ դրամ, այնուամենայնիվ վերջիններիս կշիռը արժեթղթերի շուկայում ընդհանուր առուվաճառքի գործառնությունների մեջ կազմել է 94.1%:


Գծանկար 53. Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի և ռեպո գործառնությունների ընդհանուր ծավալները 2008-2010 թթ.



2010 թվականին կորպորատիվ պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունների ծավալը նախորդ տարվա համեմատ նվազել է 17.3 մլրդ դրամով՝ կազմելով 8.0 մլրդ դրամ կամ ընդհանուր շրջանառության 2.8%-ը:

Բաժնետոմսերով իրականացված գործառնությունների ծավալը նույնպես նվազել է 7.3 մլրդ դրամով՝ կազմելով 8.9 մլրդ դրամ կամ արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ընդհանուր ծավալի 3.1%-ը:


Գծանկար 54. Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերով գործառնությունների ծավալները (առանց ՀՀ ԿԲ հետ գործառնությունների)



Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի ընդհանուր գործառնություններում բորսայական և արտաբորսայական առուվաճառքի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 3% և 97%:

2010 թվականին կարգավորվող շուկայում[12] արժեթղթերով իրականացված գործառնությունների ծավալը ավելացել է 9.2%-ով և կազմել 16.4 մլրդ դրամ: Կարգավորվող շուկայում արժեթղթերով իրականացված գործառնությունների մեջ գերակշռել են կորպորատիվ պարտատոմսերով գործառնությունները՝ կազմելով կարգավորվող շուկայի ընդհանուր գործառնությունների 64.8%-ը: Պետական արժեթղթերով գործառնությունները կազմել են ընդհանուր շրջանառության 33.6%-ը, իսկ բաժնային արժեթղթերով գործառնությունները՝ 1.7%-ը:

Գծանկար 55. Կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների կառուցվածքը 2007-2010թթ.




31.12.2010թ. դրությամբ, արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում, ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից հավատարմագրային կառավարման վերցված միջոցների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 25%-ով և կազմել է 1.5 մլրդ դրամ:

Ներդրումային ծառայություն մատուցող անձանց պատկանող արժեթղթերի փաթեթի կառուցվածքում 2010 թվականի վերջի դրությամբ ոչ ռեզիդենտ թողարկողների մասնաբաժինը կազմել է ընդամենը 0.5%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.4 տոկոսային կետով:

31.12.2010թ. դրությամբ արժեթղթերի փաթեթի 95.1%-ը կազմել են ոչ բաժնային արժեթղթերը (փաթեթի միայն 93.4%-ը բաժին է ընկել պետական արժեթղթերին): Ընդ որում՝ ըստ ձեռք բերված արժեթղթերի կարգավիճակի՝ փաթեթի 79.5%-ը զբաղեցրել են ազատ կարգավիճակով արժեթղթերը:


[12] *31.12.2010թ. դրությամբ ՀՀ-ում գրանցված և լիցենզավորված միակ ֆոնդային բորսան «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս Արմենիա» ԲԲԸ-ն է:*

Գծանկար 56. Ներդրումային ծառայություն մատուցող անձանց արժեթղթերի փաթեթի կառուցվածքը 31.12.2010 թ. դրությամբ



2010 թվականի տարեվերջին ՀՀ արժեթղթերի շուկայի կապիտալացման մակարդակը[13] կազմել է 52.6 մլրդ դրամ, իսկ կապիտալացում/ՀՆԱ ցուցանիշը՝ 1.5%: Վերջին վեց տարիներին արժեթղթերի շուկայի կապիտալացման միջին տարեկան աճը կազմել է 23%:

Գծանկար 57. ՀՀ արժեթղթերի շուկայի կապիտալացման և կապիտալացում/ՀՆԱ ցուցանիշը 2005-2010 թթ.



[13] *Հաշվետու թողարկողների կողմից թողարկված հասարակ անվանական բաժնետոմսերի քանակի և դրանցով կնքված վերջին գործարքի գնի արտադրյալ:*


31.12.2010թ. դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողների թիվը կազմել է 1570 ընկերություն, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը՝ 111676:

ՀՀ արժեթղթերի շուկայում, բացի ՀԿԴ-ից, արժեթղթերի թողարկողներին ռեեստրի վարման ծառայություն են մատուցել նաև երկու ներդրումային ծառայություն մատուցող անձինք, որոնք իրականացրել են 220 ընկերությունների՝ թվով 13748 անձանց, ռեեստրի վարումը:

Տարեվերջին ՀՀ արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված են եղել 15 հաշվետու թողարկողների թվով 19 արժեթղթեր, ընդ որում՝ հաշվետու թողարկող ընկերություններից 4-ը բանկ են: Հաշվետու թողարկողներից 11-ը թողարկել են բաժնետոմսեր, իսկ 5-ը՝ պարտատոմսեր: Թողարկողներից 1-ը հաշվետու է ինչպես բաժնետոմսերի, այնպես էլ պարտատոմսերի գծով:

2010 թվականին մեկ ընկերության կողմից երկու թողարկմամբ տեղի է ունեցել կորպորատիվ պարտքային արժեթղթերի թողարկում՝ 2 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, և ևս մեկի կողմից՝ 1.4 մլրդ դրամ ծավալով բաժնային արժեթղթերի թողարկում, ընդ որում՝ վերջինիս տեղաբաշխման ծավալը կազմել է 1.6 մլրդ դրամ:

Գծանկար 58. Հրապարակային առաջարկությամբ թողարկված կորպորատիվ արժեթղթերի ծավալը



31.12.2010 թ. դրությամբ հաշվետու թողարկողների կողմից թողարկված բաժնետոմսերի ընդհանուր ծավալը կազմել է 32.4 մլրդ դրամ, իսկ պարտատոմսերի ընդհանուր ծավալը՝ 4.4 մլրդ դրամ: Թողարկված պարտքային արժեթղթերի 13%-ը բաժին է ընկել առևտրային բանկերին, իսկ վերջիններիս մասնակցությունը բաժնային արժեթղթերում կազմել է 38%:

Բաժնետոմսերի վերոնշյալ 11 հաշվետու թողարկողների կողմից թողարկված արժեթղթերի քանակը կազմել է 21.4 հազար արժեթուղթ: Թողարկված բաժնետոմսերի բաժնետերերի ընդհանուր քանակը կազմել է 7381, որից 78-ը ոչ ռեզիդենտներ են, իսկ 35-ը՝ թողարկման ծավալի 5%-ը գերազանցող բաժնետերեր:

ԳՐԱՎԱՏՆԵՐ

31.12.2010 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 116 գրավատներ (առանց մասնաճյուղերի): Հաշվետու տարում արձանագրվել է գրավատների ընդհանուր ներգրաված միջոցների մեծության 82% և գրավատների կողմից տրամադրված վարկերի մեծության 59% աճ: Տարեվերջին գրավատների ընդհանուր ներգրաված միջոցների մեծությունը կազմել է 6.6 մլրդ դրամ, գրավատների կողմից տրամադրված վարկերի ընդհանուր մեծությունը՝ 9.9 մլրդ դրամ:

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐ, ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐՆԵՐ

31.12.2010 թ. դրությամբ ՀՀ տարածքում արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա են ունեցել 302 փոխանակման կետեր (առանց մասնաճյուղերի՝ 238): Տարվա ընթացքում ԱՄՆ դոլարի առքի և վաճառքի ծավալները կազմել են համապատասխանաբար 437.6 մլն ԱՄՆ դոլար և 432.0 մլն ԱՄՆ դոլար (2009 թվականին՝ 420.1 մլն ԱՄՆ դոլար և 415.2 մլն ԱՄՆ դոլար): Եվրոյի առքի և վաճառքի ծավալները կազմել են համապատասխանաբար 51.0 մլն եվրո և 49.9 մլն եվրո (2009 թվականին՝ 47.5 մլն եվրո և 46.4 մլն եվրո):

2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում արժութային դիլերի լիցենզիա են ունեցել 2 իրավաբանական անձինք: Տարվա ընթացքում 2 արժութային դիլերի գործունեության լիցենզիաները ուժը կորցրած են ճանաչվել:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31.12.2010թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 11 վճարահաշվարկային կազմակերպություններ, այդ թվում՝ 5 ընկերություն ունեն միայն դրամական փոխանցում իրականացնելու գործունեության լիցենզիա, 5 ընկերություն՝ դրամական փոխանցում իրականացնելու գործունեության լիցենզիա և վճարային գործիքներ ու վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնելու լիցենզիա և 1 ընկերություն՝ միայն վճարային գործիքներ և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնելու լիցենզիա: Հաշվետու տարում կասեցվել է դրամական փոխանցում իրականացնող 1 վճարահաշվարկային կազմակերպության գործունեությունը, և լուծարվել ևս մեկը: Միաժամանակ, լիցենզավորվել է նաև դրամական փոխանցում իրականացնող 1 կազմակերպություն («Ադալև Ռիա» ՍՊԸ):

Հաշվետու ժամանակահատվածում վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 269 մլրդ դրամ (նախորդ տարվա համեմատ ավելացել է 3.9%-ով):

Աղյուսակ 12. Վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների ծավալը (մլն դրամ)

Մատուցված ծառայությունները՝ ըստ տեսակների	2009թ.	2010թ.
Կոմունալ և այլ վճարումներ	106 386	115 107
Բյուջետային (հարկային) վճարումներ	9 211	8 350
Կենսաթոշակային և սոցիալական նպաստների վճարումներ	137 614	140 069
Փոխանցումներ արտասահման	695	412
Արտասահմանից ստացումներ	4 702	4 828
Ընդամենը	**258 608**	**268 765**

Արտասահմանից Հայաստանի Հանրապետություն ուղղված վճարումները կատարվում են առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով: 2010թ. ընթացքում վճարահաշվարկային կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության իրենց հաճախորդներին կատարել են 4.8 մլրդ դրամի վճարում (նախորդ տարվա համեմատ ավելացել է 2.7%-ով): Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը միջազգային փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալում (ներառյալ առևտրային բանկերը) համապատասխանաբար կազմել է՝ արտասահման փոխանցումներում՝ 0.1%-ը, իսկ արտասահմանից ստացումներում՝ 0.9%-ը: Հաճախորդներին կատարված մեկ վճարման միջին ծավալը կազմել է 105 հազար դրամ (նախորդ տարվա համեմատ ավելացել է 10 հազար դրամով):

Վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ և դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող 5 կազմակերպություններ մատուցել են կանխիկ եղանակով վճարումների ընդունման ծառայություններ: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ վճարահաշվարկային կազմակերպությունները համագործակցել են մոտ 37 կազմակերպությունների հետ: Ընդհանուր առմամբ, վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից իրականացվում է կոմունալ վճարումների, հեռախոսի և բջջային կապի դիմաց վճարումների, վարկերի մարմանն ուղղված միջոցների, բյուջե ուղղված տուգանքների և պետական տուրքերի, ինտերնետային կապի ծառայությունների դիմաց վճարների ընդունում և այլն:

Վճարումները ընդունվում են վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղադրված ավտոմատ ինքնասպասարկման տերմինալների և գրանցված մասնաճյուղերի միջոցով:

2010թ. վերջի դրությամբ վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից շահագործվել են 719 ինքնասպասարկման տերմինալներ, որոնց միջոցով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 21 մլրդ դրամի (7755 հազար գործառնություն) միջոցների հավաքագրում (նախորդ տարվա համեմատությամբ նշված ծավալն ավելացել է 47%-ով):

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ գրանցված են եղել վճարահաշվարկային կազմակերպությունների 63 մասնաճյուղեր (փաստացի գործել են 22-ը), որոնց միջոցով ծառայություններ են մատուցվել ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ այլ մարզերում: Վճարահաշվարկային կազմակերպությունների մասնաճյուղերի միջոցով կատարվել է 1384 հազար գործառնություն՝ 5.8 մլրդ դրամ ծավալով:

Վճարահաշվարկային կազմակերպությունները պրոցեսինգային ծառայություններ են մատուցել մի շարք առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների: 2010թ. վերջի դրությամբ վճարահաշվարկային կազմակերպությունները պրոցեսինգային/ քլիրինգային ծառայություններ են մատուցել 11 առևտրային բանկերի: Առևտրային բանկերի միջոցով իրականացվել է կոմունալ ծառայությունների դիմաց միջոցների հավաքագրում՝ մոտ 1.2 մլրդ դրամի չափով 271 հազար գործառնություն:

«ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը քարտերի սպասարկման սարքավորումների միջոցով ապահովել է 443 մլրդ դրամ ծավալի քարտային գործառնությունների իրականացում (ավելացել են 28%-ով), այդ թվում՝ օտարերկրյա բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացվել է 22 մլրդ դրամ ծավալի գործառնության հավաստագրում (նախորդ տարվա համեմատ ավելացել է 37%-ով), իսկ ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնությունների ծավալը «ԱրՔա» համակարգից դուրս գրանցված սպասարկման կետերի միջոցով (այդ թվում նաև արտասահմանում) կազմել է 38 մլրդ դրամ, որն ավելացել է 27%-ով (8 մլրդ դրամով):

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2010թ. Կենտրոնական բանկը շարունակել է վճարային համակարգերի, վճարային գործիքների, ինչպես նաև անկանխիկ վճարումների զարգացման և իրավական դաշտի կարգավորման աշխատանքները: Շարունակվել են նաև ֆինանսական ծառայությունների հասանելիության ընդլայնման հետ կապված աշխատանքները:

Վճարահաշվարկային ենթակառուցվածքի զարգացում

ՀՀ ֆինանսական շուկայում նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող ծառայությունների ներդրման և զարգացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել են մի շարք իրավական փաստաթղթեր, որոնք կարգավորում են էլեկտրոնային փող թողարկող կազմակերպություններին ներկայացվող պահանջները, էլեկտրոնային փողերի թողարկման, սպասարկման, ինչպես նաև գործարքների իրականացման պայմանները: Վերջինիս արդյունքում ֆինանսական շուկայի մասնակիցների համար հստակեցվել է էլեկտրոնային փողերով գործառնությունների իրականացումը կարգավորող իրավական դաշտը:

ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերի համաձայն՝ ՀՀ տարածքում գործող մի շարք առևտրային բանկերին և վճարահաշվարկային կազմակերպություններին Կենտրոնական բանկի կողմից տրամադրվել են տարբեր միջազգային վճարային համակարգերին անդամակցելու թույլտվություններ. առևտրային բանկերին՝ 8, իսկ վճարահաշվարկային կազմակերպություններին՝ 1 թույլտվություն: 2010թ. ընթացքում առևտրային բանկերը ստացել են երեք նոր համակարգերին՝ COINSTAR MONEY TRANSFER դրամական փոխանցումների համակարգին, AMERICAN EXPRESS և ZOLOTAYA KORONA քարտային վճարային համակարգերին անդամակցելու թույլտվություն: Միաժամանակ, դադարեցվել է ALUR համակարգի գործունեությունը ՀՀ տարածքում:

Միջբանկային շուկայում իրականացվող գործառնությունների զարգացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են միջբանկային վարկային հարթակի ներդրման աշխատանքներ, որի արդյունքում առևտրային բանկերը հնարավորություն են ստացել «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս Արմենիա» ԲԲԸ վարկային հարթակի միջոցով ձեռք բերելու միջբանկային վարկային միջոցներ: Այդ նպատակով մշակվել են «Վարկային ռեսուրսների քլիրինգի և վերջնահաշվարկի կանոնները», «Վարկային ռեսուրսների առևտրի կանոնները», որոնք կարգավորում են վարկային հարթակում գործառնությունների իրականացման և վերջնահաշվարկի ապահովման հետ կապված ընթացակարգը:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից շարունակվել են «Ռեպո/հակադարձ ռեպո գործարքների կնքման և կատարման» ավտոմատացված համակարգի նախագծման աշխատանքները: Նշված համակարգի ներդրումը առևտրային բանկերի համար ապահովում է ժամանակակից գործընթացների կիրառում և ընդգրկում է ճկուն գործիքակազմ՝ կարճաժամկետ իրացվելիության կառավարման համար: Տվյալ համակարգը հնարավորություն կտա արդյունավետ և օպերատիվ իրականացնելու ռեպո և հակադարձ ռեպո գործարքների կնքում և՛ պետական, և՛ կորպորատիվ արժեթղթերով: Համակարգի մասնակիցները հնարավորություն կունենան դիտորդման (մոնիտորինգի) միջոցով իրական ժամանակում տեղեկատվություն ստանալու ռեպո/հակադարձ ռեպո գործարքների կնքման, կատարման, մարման վերաբերյալ:

Համագործակցելով Համաշխարհային բանկի «Վճարային նախաձեռնություն ԱՊՀ երկրների համար» պատվիրակության հետ (CISPI-Cooperation in the Commonwealth of Independent States Payments and SecuritiesSettlement Initiative)՝ ՀՀ ԿԲ-ն լրամշակել է «Մանուշակագույն գիրքը» (“Purple Books”), որտեղ մանրամասն բնութագրվում է ՀՀ վճարահաշվարկային համակարգը:

Մանրածախ վճարումների զարգացում

Շարունակվել են կենսաթոշակային բարեփոխումները: Կենսաթոշակների վճարման գործող ընթացակարգի հետ միասին իրականացվում են կենսաթոշակները բանկային հաշիվների միջոցով անկանխիկ վճարելու համապատասխան միջոցառումներ: Արդյունքում կենսաթոշակառուների համար կստեղծվի կենսաթոշակները վճարային քարտերի միջոցով ստանալու այլընտրանքային հնարավորություն: Այդ նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ մշակվել են կանխիկ և անկանխիկ եղանակով կենսաթոշակների վճարումների իրականացման ընթացակարգերը:

Կատարվել են ՀՀ տարածքում վճարումների իրականացման համար օգտագործվող վճարային գործիքների (վճարման հանձնարարական, վճարման պահանջագիր) կատարելագործման համապատասխան ուսումնասիրություններ և հետազոտություններ:

ՀՀ վճարահաշվարկային բնագավառի հիմնական ցուցանիշները

ՀՀ բանկային համակարգում բնակչության ընդգրկվածությունը անկանխիկ վճարումների զարգացման կարևոր նախապայմաններից է: Առևտրային բանկերը շարունակել են նոր տեխնոլոգիաների կիրառումը բանկային գործունեության կազմակերպման գործընթացում, այդ թվում՝ հաճախորդների վերաբերյալ տեղեկատվության վարումը մեկ միասնական շտեմարանի միջոցով: Արդյունքում տեղի է ունեցել միևնույն բանկի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումներում սպասարկվող հաճախորդների միասնականացում և սպասարկվող հաճախորդների քանակի ճշգրտում: Ուստի 2010թ. վերջի դրությամբ բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների քանակը պահպանվել է գրեթե նույն մակարդակում՝ կազմելով 1 մլն 137 հազ. հաճախորդ, որից ֆիզիկական անձանց քանակը կազմել է 1 մլն 69 հազար: Բանկային համակարգում հաճախորդների հաշիվների քանակն ավելացել է 17.5 %-ով՝ կազմելով 1 մլն 804 հազար բանկային հաշիվ (այդ թվում՝ 1 մլն 358 հազար՝ ընթացիկ հաշիվներ, 88 հազար՝ ժամկետային հաշիվներ, 358 հազար՝ վարկային հաշիվներ):

2010թ. ընթացքում ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 558 մլրդ դրամի 11,9 մլն գործառնություն: Քարտերով անկանխիկ վճարումների ծավալն ավելացել է 31%-ով և կազմել մոտ 40 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 8.7 մլրդ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 1.1 մլրդ դրամ, քարտից-քարտ փոխանցումներ՝ 6.6 մլրդ դրամ): Նախորդ տարվա համեմատ շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակն ավելացել է 26% -ով (149.8 հազ. քարտով) և կազմել է 729.3 հազ.: Ընդ որում՝ քարտերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը (այդ թվում նաև ինտերնետ գործառնությունները) պահպանվել է նույն մակարդակում՝ քարտային գործառնությունների մոտ 7%-ը:


Առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով ֆիզիկական անձանց ուղղված դրամական փոխանցումները նախորդ տարվա համեմատ ավելացել են 4%-ով և կազմել 607 մլրդ դրամ (այդ թվում նաև ՍՎԻՖԹ-ի միջոցով), իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալը նվազել է 3%-ով և կազմել 267 մլրդ դրամ: Արդյունքում՝ զուտ ներհոսքը կազմել է 340 մլրդ դրամ, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 10%-ով:

Հաշվետու տարում անկանխիկ վճարումների աճի տեմպը գերազանցել է ՀՆԱ աճի տեմպը, ինչի արդյունքում 2009թ. համեմատ անկանխիկ վճարումներ/ՀՆԱ հարաբերակցությունը աճել է 0.1 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 1.9

2010թ. ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 17 տրլն 117 մլրդ դրամ (քանակը՝ 8 մլն 58 հազ.): Ընդ որում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 13.5 տրլն դրամ, իսկ քանակը՝ 3.4 մլն: 2010թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը 2009թ. համեմատ ավելացել է 16% -ով (1876 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 23%-ով (6.2 մլն-ով):

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) կազմել է մոտ 52 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 13122: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը 2009թ. համեմատ ավելացել է 7 մլրդ դրամով (քանակը՝ 2427-ով):

Գծանկար 59. ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը (առանց բորսայական փոխանցումների)



2010թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 35%-ը, քանակի՝ 51%-ը, ընդ որում՝ ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախաձեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը և քանակը ավելացել են համապատասխանաբար 19%-ով (771 մլրդ դրամով) և 28%-ով (374.8 հազարով):

ՀՀ ԿԲ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ


ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով[14] կատարված վճարումների գերակշիռ մասը 2010թ. ընթացքում իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 55.6%-ը և քանակի 95.4%-ը: 2009թ. համեմատությամբ էլեկտրոնային վճարումների ծավալն ավելացել է 25.6%-ով (1 տրլն 533 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 24%-ով (610.8 հազարով): Ընդ որում՝ առևտրային բանկերի կողմից կատարված էլեկտրոնային վճարումները կազմել են վերջիններիս փոխանցումների ծավալի մոտ 65%-ը (ավելացել են 1046 մլրդ դրամով), իսկ քանակի՝ մոտ 99%-ը:

2009թ. համեմատ էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը ավելացել է 23.7%-ով (2400-ով)՝ կազմելով 12520, իսկ ծավալը՝ 25.6%-ով (6

[14] *Էլեկտրոնային վճարումների համակարգում բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումները չեն ընդգրկվում և դիտարկվում են առանձին:*


մլրդ դրամով)՝ կազմելով 29.4 մլրդ դրամ: Արդյունքում՝ մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը փոքր-ինչ աճել է՝ կազմելով մոտ 2.4 մլն դրամ:

Գծանկար 60. Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները (առանց բորսայական փոխանցումների)



Էլեկտրոնային վճարումների համակարգով բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումները տարվա ընթացքում կազմել են 41 տրլն 545 մլրդ դրամ, որտեղ միջին օրական փոխանցումները ավելացել են 36 մլրդ դրամով և կազմել 162 մլրդ դրամ: Առևտրային բանկերի կողմից բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների միջին ծավալը ավելացել է 217 մլն դրամով՝ կազմելով 1.8 մլրդ դրամ:

Գծանկար 61. Էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված միջին օրական փոխանցումները



Համախառն թղթային վճարումների համակարգ

Հաշվետու տարում առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով համախառն թղթային համակարգով կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի 27%-ը (1808 մլրդ դրամ), քանակի 0.3%-ը (2009թ. համեմատ ծավալն ավելացել է 1.1 անգամ, քանակը՝ 2.6 անգամ):

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 588 փոխանցում՝ 21 մլրդ դրամ ծավալով (2009թ. համեմատ փոխանցումների միջին օրական ծավալը ավելացել է 0.7 մլրդ դրամով, իսկ մեկ թղթային փոխանցման միջին ծավալը նվազել է մոտ 1 մլն դրամով և կազմել է 36 մլն դրամ: Նշված փոխանցումները հիմնականում պայմանավորված են ավանդային և ռեպո գործառնություններով, ինչպես նաև վարկային հարթակում կատարված գործառնությունների արդյունքում տրամադրված մեկօրյա վարկի գործառնություններով (մեկօրյա վարկի միջոցները հաջորդ օրվա առավոտյան վերադարձվում են տրամադրող բանկերի թղթակցային հաշիվներին):

Աղյուսակ 13. ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ ԿԲ վճարային համակարգերով

Ժամանակահատվածը	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով*		Բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումներ	
	էլեկտրոնային*		Թղթային							
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
2009										
Ընդամենը	5990307	2594068	5214370	140290	453432	3563	11658110	2737921	32188698	20459
տեսակարար կշիռը վճարումներում (%)	51.38	94.75	44.73	5.12	3.89	0.13	100	100		
2010										
I եռ.	1262858	640985	688950	33795	148297	1046	2100105	675826	9496297	4963
տեսակարար կշիռը վճարումներում (%)	60.13	94.84	32.81	5.00	7.06	0.15	100	100		
II եռ.	1755508	774247	1179761	35556	106883	732	3042152	810535	12614414	6364
տեսակարար կշիռը վճարումներում (%)	57.71	95.52	38.78	4.39	3.51	0.09	100	100		
III եռ.	2240052	821259	1565602	38665	163558	1005	3969211	860929	9374108	5942
տեսակարար կշիռը վճարումներում (%)	56.44	95.39	39.44	4.49	4.12	0.12	100	100		
IV եռ.	2265156	968452	1971135	42412	186706	956	4422997	1011820	10060316	5932
տեսակարար կշիռը վճարումներում (%)	51.213	95.71	44.57	4.19	4.22	0.09	100	100		
Ընդամենը	7523573	3204943	5405448	150428	605444	3739	13534465	3359110	41545135	23201
տեսակարար կշիռը վճարումներում (%)	55.59	95.41	39.94	4.48	4.47	0.11	100	100		

** Առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների:*

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ

2010թ. վերջի դրությամբ Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 5 գործակալ և 16 դիլեր բանկեր, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան, «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս Արմենիա» ֆոնդային բորսան, մեկ ոչ բանկ դիլեր, ՀՀ ֆինանսների նախարարությունը (պետական պարտատոմսերի թողարկողի կարգավիճակով), Գանձապետական պահառուն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով և թողարկողի կարգավիճակով՝ Կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերի հետ կապված):

Համակարգի կողմից պետական (գանձապետական) արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 1665 հաճախորդական՝ 189 մլրդ դրամ ծավալով, ինչը 2009թ. համեմատ ավելացել է 14 մլրդ դրամով (ընդ որում՝ արժեթղթերի տեղաբաշխման հետ կապված վճարումներն ավելացել են 1 մլրդ դրամով, իսկ մարման հետ կապված վճարումները՝ 13 մլրդ դրամով): 2010թ. ընթացքում առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պետական պարտատոմսերի դիմաց բանկերի կողմից կատարվել է 109 մլրդ դրամի փոխանցում, իսկ պետական արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 80 մլրդ դրամի փոխանցում: Այդ փոխանցումներում «Գանձապետական պահառու» համակարգի միջոցով պետական արժեթղթերի դիմաց կատարվել է 3.3 մլրդ դրամի վճարում, որտեղ՝ 2.2 մլրդ դրամը կազմել են արժեթղթերի տեղաբաշխման և 1.1 մլրդ դրամը՝ արժեթղթերի մարման դիմաց վճարումները:

ՀՀ կենտրոնական բանկի սեփական պարտատոմսերի տեղաբաշխման հետ կապված գործառնություններ չեն իրականացվել, իսկ Կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի մարման դիմաց փոխանցումները կազմել են 327 մլն դրամ:

Կենտրոնացումը[15] վճարային համակարգերում

2010թ. տարեվերջի դրությամբ կենտրոնացման մակարդակը ՀՀ կենտրոնական բանկի համախառն թղթային համակարգով վճարումների ծավալում ավելացել է (մոտ 4%-ով), որը պայմանավորված է առևտրային բանկերի ռեպո գործառնություններով ևս վարկային հարթակում իրականացված գործառնությունների հետ կապված վճարումների իրականացմամբ: Նախորդ տարվա համեմատ համախառն էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված վճարումների քանակում կենտրոնացման մակարդակը ավելացել է 1%-ով և կազմել 59%: Դիտարկված բարձր մակարդակը պայմանավորված է առևտրային բանկերի կողմից հիմնականում հատային հաղորդագրությունների կիրառմամբ:

Նախորդ տարվա համեմատ վճարային քարտերի սպասարկման հետ կապված կենտրոնացման մակարդակը նվազել է՝ քանակը 5%-ով, ծավալը՝ 4%-ով և կազմել համապատասխանաբար 61% և 60%, որը բաժին է ընկնում 5 առևտրային բանկերի:

---

[15] Կենտրոնացման գործակիցը հաշվարկվում է Եվրոմիության կենտրոնական բանկի կողմից մշակված «Վճարային համակարգերի բնորոշումը» մեթոդական նյութի համաձայն: Կենտրոնացումը իրենից ներկայացնում է առաջին 5 բանկերի տոկոսային մասնաբաժինը: Ընդ որում՝ քանակային և ծավալային ցուցանիշները դիտարկվում են միմյանցից անկախ:

Վճարային քարտերի սպասարկման հետ կապված կենտրոնացման մակարդակը չնայած նվազել է (քանակը՝ 5%-ով, ծավալը՝ 4%-ով), այնուամենայնիվ այն բավական բարձր է (քանակը՝ 61%-ով, ծավալը՝ 60%-ով), որը բաժին է ընկել 5 առևտրային բանկերի: Միաժամանակ, ՀՀ տարածքում գործող 7 այլ բանկեր ապահովել են վճարային քարտերի սպասարկման 32%-ը: Այսպիսով, 2010թ. ընթացքում վճարային քարտերի սպասարկման գործընթացում որոշակի ակտիվություն են ցուցաբերել մի շարք առևտրային բանկեր, որոնք տեղադրել են վճարային քարտերի սպասարկման սարքավորումներ, ընդլայնել առևտրի/սպասարկման կետերի ցանկը:

Աղյուսակ 14. Կենտրոնացման մակարդակը վճարային համակարգերում (%)*

Անվանումը		2008		2009		2010	
		ծավալ	քանակ	ծավալ	քանակ	ծավալ	քանակ
Համախառն	էլեկտրոնային	31	59	27	58	27	59
	թղթային	17	2	20	1	24	2
Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		49	42	52	41	49	40
Քարտային համակարգ	սպասարկումը ՀՀ-ում	69	67	64	66	60	61

** Ըստ ծավալի և ըստ քանակի առաջին 5 առևտրային բանկերի ցուցանիշները:*

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

31.12.2010թ. դրությամբ հաճախորդներին վճարային քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 20 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ 19 առևտրային բանկեր անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Հաշվետու տարում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 117 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և տարեվերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 819, այդ թվում՝ «ԱրՔա» վճարային քարտերի սպասարկումը իրականացվում է 761 ավտոմատ գանձման սարքավորումների միջոցով: Առևտրային բանկերի կողմից տեղադրվել են նաև 1010 POS-տերմինալներ, որոնց ընդհանուր քանակը կազմել է 3730, այդ թվում՝ 467-ը տեղադրված է առևտրային բանկերի ստորաբաժանումներում: Տեղադրված իմպրինտերների ընդհանուր քանակը կազմել է 25:

Աղյուսակ 15. Թողարկված քարտերի սպասարկման ցուցանիշները

Ցուցանիշ	Միջազգային չափանիշներ	2008	2009	2010
Թողարկված (շրջանառվող) քարտեր / ԱԳՄ	2600	845	825	890

Գործող «ԱրՔա» քարտերի քանակը նախորդ տարվա համեմատ ավելացել է 8.5%-ով (23.9 հազ. քարտով) և կազմել 306 հազ.: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակն ավելացել է 42%-ով (125.9 հազ. քարտով), այդ թվում՝ «Visa»-ն՝ 33.8%-ով (68.2 հազ. քարտով) և կազմել 269.9 հազ. , իսկ «MasterCard»-ը՝ 89.7%-ով (54835 քարտով) և կազմել 115943: Միջազգային այլ քարտերի քանակը ավելացել է 8.57-%-ով (2944 քարտով):

Առևտրային բանկերի կողմից տրամադրված (շրջանառության մեջ գտնվող) քարտերում «ԱրՔա», «Visa», «Master Card» քարտերի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար՝ 42%, 37% և 16%, իսկ մնացած 5%-ը կազմել են միջազգային այլ քարտային համակարգերի քարտերը, որոնցում ընդգրկված են նաև «HSBC debit» և «AmEx» քարտերը:

Քարտերով իրականացված գործառնությունների ընդհանուր ծավալը 2009թ. համեմատ ավելացել է 30%-ով (130 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 28%-ով (2.4 մլն): Ընդհանուր գործառնությունների ծավալի 38%-ը բաժին է ընկել «ԱրՔա», 39%-ը՝ «VISA» և 23%-ը՝ այլ քարտերով իրականացված գործառնություններին: Հաշվետու տարում «ԱրՔա», «VISA» «MasterCard» վճարային քարտերով իրականացված գործառնությունների ծավալը համապատասխանաբար ավելացել է՝ 23%-ով (39 մլրդ դրամով), 44%-ով (67.5 մլրդ դրամով), 24%-ով (15 մլրդ դրամով) և կազմել 213 մլրդ, 219 մլրդ, և 77 մլրդ դրամ:


Միջազգային այլ քարտերով իրականացված գործառնությունների ծավալը ավելացել է 20%-ով (8 մլրդ դրամով) և կազմել 49 մլրդ դրամ:

Աղյուսակ 16. Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով կատարված գործարքները (2010 թ.)

Սարքեր	Գործարքներ			
	ծավալը (մլն դրամ)	քանակը	այդ թվում՝ «ԱրՔա» քարտերով	
			ծավալը (մլն դրամ)	քանակը
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	438048	9681106	183505	4635054
այդ թվում՝ անկանխիկ	1871	85196	124	42306
POS – տերմինալների/իմպրինտերների միջոցով	111494	1288282	27206	493150
այդ թվում՝ անկանխիկ	29577	794912	10258	251508
Ինտերնետ միջավայրում	8754	323390	2175	132921
Ընդամենը	558296	11292778	212886	5261125
այդ թվում՝ անկանխիկ	40202	1203498	12557	426735


2010թ. ընթացքում քարտերով իրականացված միջին օրական գործառնությունների ծավալը ավելացել է 30%-ով և կազմել 1551 մլն դրամ, իսկ միջին օրական գործառնությունների քանակը՝ 28%-ով՝ կազմելով 31.4 հազ.:

Գծանկար 62.
ՀՀ բանկերի կողմից վճարային քարտերի տրամադրման դինամիկան



ՀՀ տարածքում մեկ վճարային քարտով իրականացված ամսական կանխիկացման գործառնությունների ծավալը կազմել է մոտ 64 հազ. դրամ, իսկ անկանխիկը՝ 5 հազ. դրամ (քանակը համապատասխանաբար կազմել է 1.2 և 0.1): Նշված ցուցանիշները նախորդ տարվա համեմատ պահպանվել են նույն մակարդակում:

Գծանկար 63.
ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացված միջին օրական գործառնությունները 2007 - 2010 թթ., ինչպես նաև 2009 – 2010 թթ. եռամսյակների ընթացքում



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Ֆիզիկական անձանց փոխանցումները, առանց բանկային հաշվի բացման, իրականացվում են ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով (տե՛ս «Վճարահաշվարկային կազմակերպություններ» բաժինը):

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը հաճախորդներին դրամական փոխանցումների իրականացման ծառայություններ մատուցելու նպատակով անդամակցում են 17 միջազգային համակարգերի:

Միջազգային դրամական փոխանցումների համակարգերին մասնակից առևտրային բանկերի միջոցով 2010թ. ընթացքում Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 430 մլրդ դրամ (քանակը՝ 1865449), որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 18.7%-ով (68 մլրդ դրամով): Այս համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 231 հազ. դրամ, որը պահպանվել է նույն մակարդակում:

Նախորդ տարվա համեմատ առևտրային բանկերի միջոցով միջազգային փոխանցումների համակարգերով դրամական միջոցների զուտ ներհոսքը ավելացել է 18%-ով (58 մլրդ դրամով) և կազմել է 379 մլրդ դրամ:

Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով (SWIFT-ի, տելեքսի, ֆաքսի միջոցով) Հայաստանի Հանրապետություն կատարված ընդհանուր փոխանցումների ծավալը ավելացել է 349 մլրդ դրամով և կազմել 3 տրլն 17 մլրդ դրամ: Մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 20 մլն դրամ, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 4.4 մլն դրամով:

Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները նվազել են 45 մլրդ դրամով և կազմել են մոտ 172 մլրդ դրամ. մեկ վճարման միջինը նվազել է 170 հազ. դրամով և կազմել 2.2 մլն դրամ: Միաժամանակ, առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումները արտասահման նվազել են 20 մլրդ դրամով և կազմել 215 մլրդ դրամ: Արդյունքում՝ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումներում դիտարկվում է դրամական միջոցների զուտ արտահոսք՝ 44 մլրդ դրամ ծավալով, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է մոտ 2.4 անգամ:

ՀԵՌԱԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Նորագույն տեխնոլոգիաներ ներդնելու միջոցով առևտրային բանկերը ընդլայնել և բարելավել են իրենց հաճախորդներին մատուցվող ծառայությունների ցանկը: Մի շարք առևտրային բանկերի կողմից ներդրվել են հեռակառավարվող սպասարկման համակարգեր՝ հնարավորություն տալով իրենց հաճախորդներին իրա-

կանացնելու բանկային հաշիվների հեռակառավարում: Հաճախորդները կարող են ներկայացնել հանձնարարականներ, ստանալ տեղեկատվություն բանկային հաշվի մնացորդի վերաբերյալ և իրականացնել այլ բանկային գործառնություններ:

2010թ. ընթացքում բանկային հեռակառավարվող սպասարկման համակարգերի միջոցով հաճախորդների նախաձեռնած ընդհանուր վճարումներն ավելացել են 30%-ով և կազմել 3080 մլրդ դրամ (քանակը՝ 1 մլն 305 հազար): Նշված վճարումները հաճախորդների կողմից իրականացվել են բանկ-հաճախորդ համակարգերով (վճարումների ծավալը կազմել է 2962 մլրդ դրամ), ինտերնետ-բանկինգ ծառայության միջոցով (վճարումների ծավալը կազմել է 115 մլրդ դրամ), ինչպես նաև հեռախոսային-բանկինգ ծառայության միջոցով (վճարումների ծավալը կազմել է 3 մլրդ դրամ): Հաճախորդների կողմից բանկ-հաճախորդ համակարգով իրականացված մեկ վճարման միջին գումարը կազմել է 2.6 մլն դրամ, իսկ ինտերնետ-բանկինգ ծառայության միջոցով՝ 0.7 մլն դրամ: Առևտրային բանկերի կողմից մատուցվող հեռախոսային-բանկինգ ծառայության միջոցով կատարված մեկ վճարման միջին գումարը կազմել է 461 հազ. դրամ:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ներքին և արտաքին տնտեսությունների զարգացումները, ինչպես նաև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը առաջ են բերում ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի, վերահսկողության սկզբունքների ու կիրառվող մոտեցումների վերանայման և արդիականացման անհրաժեշտություն: Հայաստանյան ֆինանսական համակարգի կայունություն, ինչպես նաև բանկային, ապահովագրական և արժեթղթերի շուկաների համահունչ զարգացում ապահովելու քաղաքականության ներքո՝ Կենտրոնական բանկը 2011 թվականին կշարունակի կարգավորման և վերահսկողության կատարելագործմանն ուղղված բարեփոխումները:

ՀՀ ֆինանսական համակարգի կարգավորման հեռանկարները

2011թ. կշարունակվեն ֆինանսական համակարգի կայունության ապահովմանն ուղղված աշխատանքները: Մասնավորապես, հաշվի առնելով համաշխարհային պրակտիկայում կիրառված հակաճգնաժամային քաղաքականությունների արդյունավետությունը և ՀՀ ֆինանսական համակարգի զարգացման առանձնահատկությունները, ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվում է ճգնաժամերի կառավարման հայեցակարգը: Նշված փաստաթղթով սահմանվում են ճգնաժամերի կառավարման քաղաքականության նպատակները, հիմնական սկզբունքները, ինչպես նաև ճգնաժամերի կառավարման գործընթացին մասնակից առանձին ստորաբաժանումների միջև համագործակցության շրջանակները և հանրությանը իրազեկման մոտեցումները: Այն կիրառելի է լինելու ճգնաժամերի կանխարգելման և ճգնաժամային իրավիճակում տնտեսության վերականգման փուլերում: Հայեցակարգի հետ մեկտեղ մշակվում է նաև գործողությունների ծրագիր, որը մանրամասն անդրադառնում է կոնկրետ դեպքերին, մասնավորապես՝ ինչ միջոցառումներ պետք է իրականացվեն այն դեպքերում, երբ առաջանում են խնդիրներ համակարգային նշանակություն ունեցող կամ ոչ համակարգային նշանակություն ունեցող բանկերում:

Ֆինանսական համակարգի կայունությունը ամրապնդելու, բանկային համակարգի ռիսկերը զսպելու համար 2011թ. Կենտրոնական բանկի կողմից կիրականացվեն Բազել-3-ի ներդրման աշխատանքներ: Բազել 3-ը կապիտալին, իրացվելիությանը և բանկային վերահսկողության այլ ոլորտներին առնչվող միջազգայնորեն ընդունված պահանջներում փոփոխություններ կատարելու առաջարկների ամբողջություն է: Բազել 3-ի հիմնական նպատակն է բարելավել բանկերի կապիտալի և իրացվելիության կառավարման որակը, բանկերը առավել կայուն դարձնել արտաքին տատանումների նկատմամբ:

2011 թվականին Կենտրոնական բանկը շարունակելու է բանկերի ռիսկայնության գնահատման նոր համակարգի ներդրման աշխատանքները, ինչը հնարավորություն կտա ձևավորելու բանկի ռիսկայնության ամփոփ գնահատական՝ հիմնվելով առանձին բիզնես գործընթացների ռիսկերի տարանջատման, գնահատման և կառավարման մակարդակի վերլուծության արդյունքների վրա: Այս համակարգը հնարավորություն կտա հիմնական ուշադրությունը սևեռելու բանկերի համար էական և/կամ նշանակալի համարվող բիզնես գործընթացների վրա, որոնք առավել ռիսկային դաշտում են, ինչպես նաև համալիր գնահատելու բանկի ռիսկայնության համակարգը և ռիսկի յուրաքանչյուր տեսակի գծով ունենալու մանրամասն գնահատականներ:

2011 թվականին նախատեսվում է օրենսդրորեն ամրագրել համախմբված վերահսկողությանն առնչվող հիմնական դրույթները՝ հատուկ ուշադրություն դարձնելով՝

- ֆինանսական կոնգլոմերատի սահմանմանը և կոնգլոմերատ համարվելու չափանիշներին,
- կոնգլոմերատի ոչ ֆինանսական մայր կազմակերպության նշանակալից մասնակիցների և ղեկավարների համապատասխանությանը, կոնգլոմերատի անդամ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ վերահսկողությանը,
- կոնգլոմերատի գործունեությունը կարգավորող նորմատիվային դաշտի սահմանմանը,
- ռիսկերի սահմանաչափերին և վերահսկողությանը,
- կոնգլոմերատի կողմից պարբերաբար բացահայտումներ կատարելու պարտականությանը, համախմբված հաշվետվությունների ներկայացմանը:

Ակնկալվում է, որ համախմբված վերահսկողությունը հնարավորություն կտա ամբողջական պատկերացում կազմելու՝

- ֆինանսական խմբի սեփականատերերի մասին,
- խմբի և նրա անդամ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ փաստացի հսկողություն ունեցող անձանց մասին,
- խմբում առկա կորպորատիվ կառավարման և ռիսկերի կառավարման մասին,
- խմբի գործունեության հետ առնչվող նշանակալի ռիսկերի մասին:

2011 թվականին Կենտրոնական բանկի կողմից նախատեսվում է Համահայկական բանկի կարգավորման դաշտի մշակումը, ինչը հնարավորություն կտա կարգավորելու Համահայկական բանկի գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում, կսահմանի բանկի գործունեության տնտեսական նորմատիվները:

2011 թվականին Կենտրոնական բանկը նախատեսում է մշակել բանկերի կողմից առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և վարման կարգը, որի արդյունքում բանկերին հնարավորություն կտրվի իրենց հաճախորդների համար բացել և վարել առարկայազուրկ մետաղական հաշիվներ: Նման ծառայությունը բանկերի կողմից մատուցվող ծառայությունների նոր տեսակ է: Կարգի ընդունումը թույլ կտա ընդլայնել բանկերի կողմից մատուցվող ծառայությունների ցանկը: Միաժամանակ, կարգի հաստատման նպատակն է զսպել նշված ծառայություններ մատուցելու դեպքում բանկերում առաջացող ռիսկերը:

2011 թվականին նախատեսվում է ներդնել բանկերի, վարկային կազմակերպությունների և ներդրումային ընկերությունների միասնական հաշվային պլանը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան:

2010 թվականի ընթացքում շարունակվել են ՀՀ հիփոթեքային շուկայի զարգացմանն ուղղված աշխատանքները: Մասնավորապես՝ 2010 թվականի փետրվարին մեկնարկեց «Երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարաններ» պետական նպատակային սոցիալական ծրագիրը: Այդ նպատակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հիմնադրվեց «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ-ն, որը իրականացնում է նշված ծրագրի շրջանակներում ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրված հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորումը: 2010 թվականին կատարվել են նաև ՀՀ հիփոթեքային շուկայի բարեփոխման նպատակով իրավական խնդիրների բացահայտման և դրանց լուծման տարբերակների մշակման աշխատանքներ: Մասնավորապես՝ մշակվել է համապատասխան հաշվետվություն, որտեղ

արտացոլված են նշված խնդիրները և առաջարկվող լուծումները: 2011 թվականին հիփոթեքային շուկայի իրավական խնդիրների վերաբերյալ մշակված հաշվետվության համաձայն՝ իրականացվելու են համապատասխան օրենսդրական փոփոխություններ: 2010 թվականին սկսվել է նաև «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ-ի բիզնես պլանի մշակումը, որը ավարտական փուլում է: 2010 թվականի վերջին նախաձեռնվել են նաև «Մատչելի բնակարան երիտասարդ գիտնականներին և ստեղծագործական միությունների անդամներին» բնակարանային ապահովության սոցիալական ծրագրի աշխատանքները: Նախատեսվում է 2011 թվականի ընթացքում ավարտին հասցնել «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ-ի բիզնես պլանի մշակումը, իսկ տարեվերջին ընկերությունը կիրականացնի կորպորատիվ պարտատոմսերի առաջին թողարկումը: 2011 թվականին կմեկնարկի նաև «Մատչելի բնակարան երիտասարդ գիտնականներին և ստեղծագործական միությունների անդամներին» բնակարանային ապահովության սոցիալական ծրագիրը:

2011 թվականի կարևոր նախաձեռնություններից է լինելու նաև ՀՀ-ում հիփոթեքային հավաստագրերի ներդրման և գրանցման գործընթացի էլեկտրոնայնացման միջոցով հիփոթեքային վարկերի փոխանցման գործընթացի բարեփոխման հայեցակարգի մշակումը: Այս ուղղությամբ ակտիվ աշխատանքներ են նախատեսվում ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ համատեղ: Նշված հայեցակարգի ընդունումը էապես կնպաստի հիփոթեքային վարկերի վաճառքից բխող իրավունքների զիջման գործընթացի պարզեցմանը և ծախսատարության նվազեցմանը, որն էլ իր հերթին կարևոր խթան կհանդիսանա ՀՀ հիփոթեքային երկրորդային շուկայի ձևավորման և հիփոթեքային արժեթղթերի թողարկման համար:

2010 թ. մայիսի 18-ին ԱԺ կողմից ընդունվել է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, որը ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից: 2010 թ. հունիսի 28-ին ՀՀ ԿԲ որոշմամբ հիմնադրվել է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ը, որի նպատակը տուժած անձանց շահերի պաշտպանությունն է և ԱՊՊԱ համակարգի կայունության և զարգացման ապահովումը: Բյուրոն իր ակտիվ գործունեությունը սկսել է նույն թվականի սեպտեմբերից և ՀՀ ԿԲ հետ համատեղ մշակել է ոլորտին վերաբերող օրենքներից բխող ենթաօրենսդրական ակտեր, ինչպես նաև ԱՊՊԱ ոլորտի կարգավորման հետ կապված մի շարք կանոններ: 2011թ. ընթացքում ՀՀ ԿԲ-ն Հայաստանի ավտոապահովագրողների Բյուրոյի հետ համատեղ կշարունակի լայնածավալ աշխատանքներ իրականացնել ԱՊՊԱ ոլորտի արդյունավետ գործունեության կազմակերպման, հատկապես ապահովագրական հատուցումների գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով:

Ապահովագրական շուկայի արդյունավետ գործունեությունն ապահովող ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված աշխատանքների շրջանակներում 2010 թվականին նախագծվել է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգը, որի նպատակն է Հայաստանի Հանրապետության ճանապարհային ոստիկանության հետ ավտոտրանսպորտային միջոցների պատահարների վերաբերյալ տեղեկատվության համադրելիության ապահովումը: Կատարվել են ՀՀ ՃՈ տեղեկատվական համակարգի և ՀՀ ԿԲ ապահովագրական ռեգիստրի միջև տվյալների փոխանակման լավագույն տարբերակի, ինչպես նաև ձևաչափերի ընտրության աշխատանքներ: 2010 թ. դեկտեմբերին ՀՀ ԿԲ խորհրդի կողմից հաստատվել է «ԱՊՊԱ տեղեկատվական համա-

կարգ ներկայացվող տվյալների կազմի, ներկայացման ձևի, ժամկետների և տեղեկատվական համակարգի օգտագործման մասին» կարգը: Համակարգի գործունեության արդյունավետության մակարդակը որոշելու նպատակով իրականացվել են նաև տվյալների փոխանակման համակարգի թեստային և արտադրական շահագործումներ: 2011 թվականի ընթացքում ՀՀ ԿԲ-ն կշարունակի աշխատանքները ապահովագրական ընկերությունների, ինչպես նաև ճանապարհային ոստիկանության հետ՝ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի տվյալների և ոստիկանության տվյալների համատեղման, ոստիկանությունից ՀՀ ԿԲ տվյալների ստացման պարբերականության ապահովման, ոստիկանությունում իրականացվող աշխատանքների վերահսկման ուղղությամբ:

2010 թ. ընթացքում մշակվել է «ՀՀ-ում ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մեջ կիրառվող Բոնուս-Մալուս համակարգի ներդրման հայեցակարգը»: Այս համակարգի կիրառման նպատակը ապահովադիրներից գանձվող ապահովագրավճարների տարբերակումն է՝ կախված յուրաքանչյուր ապահովադրի ռիսկայնությունից: Նշված հայեցակարգի հիման վրա 2011թ. ընթացքում նախատեսվում է մշակել իրավական փաստաթուղթ, որում կներկայացվի ԱՊՊԱ իրականացնող ընկերությունների կողմից Բոնուս-Մալուս համակարգի կիրառման ընթացակարգը: ԱՊՊԱ միջազգային պրակտիկայում լայն կիրառություն ունեցող Բոնուս-Մալուս համակարգի կիրառումը ՀՀ-ում՝ որպես ապահովագրական շուկային առնչվող ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառում, նախատեսվում է 2013թ. հունվարի 1-ից:

2010 թվականի ընթացքում ակտիվորեն շարունակվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և շահագրգիռ անձանց միջև աշխատանքները, հանդիպումները և Հայաստանի Հանրապետությունում բժշկական ապահովագրության զարգացման հայեցակարգի մշակման վերաբերյալ քննարկումները: Տարվա ընթացքում մանրամասն ուսումնասիրվել է տարբեր երկրների փորձը այս ոլորտում, իրականացվել են հաշվարկներ և վերլուծություններ: Նախատեսվում է մինչև 2011 թվականի առաջին կիսամյակի վերջ ՀՀ Կառավարություն ներկայացնել հայեցակարգի վերջնական տարբերակը, որի բաղկացուցիչ մասերն են լինելու ոլորտի միջազգային փորձը, ՀՀ առողջապահական համակարգի արդի վիճակը, համակարգի գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքները և Հայաստանի Հանրապետության համար առաջարկվող մոդելը:

ՀՀ Կառավարության քննարկմանն է ներկայացվել «ՀՀ առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման հայեցակարգը», որից հետո կատարվել են համապատասխան լրամշակումներ, և հայեցակարգը լրամշակված տարբերակով ներկայացվել է ՀՀ Կառավարության հաստատմանը: ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ևս կազմակերպվել են հանդիպումներ արտասահմանյան մի շարք հեղինակավոր կազմակերպությունների հետ, որոնք ներկայացրել են առողջապահության ոլորտում տեղեկատվական համակարգերի ներդրման իրենց փորձը: ՀՀ էկոնոմիկայի նախարարության էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի (ԷԿԵՆԳ) կողմից մշակվել է ՀՀ առողջապահության ոլորտում միասնական տեղեկատվական համակարգի ներդրման ճանապարհային քարտեզ, որը ներկայացնում է էլեկտրոնային տեղեկատվական համակարգի նկարագրությունը և ներդրման հնարավոր ծրագրերն ու ժամկետները:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից կշարունակվեն ՀՀ վճարահաշվարկային բնագավառը կարգավորող իրավական դաշտի բարեփոխումները: Մասնավորապես՝ 2011 թվականի ընթացքում նախատեսվում է համապատասխան իրավական ակտերում սահմանել դրույթներ վճարահաշվարկային կազմակերպությունների համար ընդհանուր կապիտալի նվազագույն չափի, վերջինիս ապահովման կարգի և բաղադրիչների վերաբերյալ: Նշված աշխատանքները պետք է իրականացվեն Ազգային ժողովի կողմից «Վճարահաշվարկային համակարգի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի ընդունումից հետո:

Հաշվի առնելով նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված դինամիկ զարգացումները (էլեկտրոնային փողերի թողարկում և սպասարկում, բանկ-հաճախորդ համակարգերի կիրառում և այլն)՝ կշարունակվեն ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման նկատմամբ ներկայացվող պահանջները հստակեցնելու և իրավական դաշտը կարգավորելու աշխատանքները:

2011 թվականին նախատեսվում է նաև շահագրգիռ կողմերի քննարկմանը ներկայացնել «ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման քաղաքականությունը» փաստաթուղթը, որով կնախանշվեն վճարահաշվարկային բնագավառի զարգացման հիմնական ուղղությունները և դրանց իրագործման հետ կապված խնդիրները և լուծման ուղիները:

ԱՊՀ անդամ երկրների արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությունը հնարավորինս միասնականացնելու, և հետևաբար ԱՊՀ երկրների միջև կապիտալի ազատ շրջանառության ապահովման հիմքեր ստեղծելու նպատակով՝ 2011 թ. ՀՀ կենտրոնական բանկը կշարունակի մասնակցել ԱՊՀ անդամ երկրների՝ արժեթղթերի շուկան կարգավորող պետական մարմինների ղեկավարների խորհրդի նիստերին և այդ նիստերում արձանագրված առաջարկությունների կատարման աշխատանքներ կնախաձեռնի:

«Կուտակային կենսաթոշակների մասին» և «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքների ընդունումից հետո ՀՀ կենտրոնական բանկը ակտիվորեն մասնակցելու է ներդրումային ֆոնդերի և կենսաթոշակային ֆոնդերի գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի մշակման գործընթացին: ՀՀ կենտրոնական բանկը նաև ԿՎՄԿ-ին (International Organization of Pension Supervisors) անդամակցության քայլեր կձեռնարկի, որը կնպաստի կենսաթոշակային ֆոնդերի գործունեության կարգավորման գործընթացի արդյունավետության բարձրացմանը՝ ԿՎՄԿ-ի անդամ երկրների հետ կարգավորման համար անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման հնարավորության շնորհիվ:

ՀՀ ֆինանսական համակարգի վերահսկողության զարգացման հեռանկարները

Ֆինանսական համակարգի՝ ըստ ինստիտուտների (բանկեր, ապահովագրական ընկերություններ, արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձինք և այլն) վերահսկողությունից նոր վերահսկողական համակարգին (կանխարգելիչ և շուկայի արդարության ապահովմանն ու ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված) անցման համատեքստում 2011 թվականին շարունակվելու են սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումները:

Մասնավորապես.

- նախատեսվում է ֆինանսական կազմակերպությունների ներքին իրավական ակտերի գնահատում սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից,
- շարունակվելու են ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի տեղերում ստուգումների իրականացումը համապատասխան ձեռնարկի միջոցով,
- մշակվելու են կենսաթոշակային բարեփոխումների ներքո համակարգի մասնակիցների հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովող նորմատիվ իրավական ակտեր,
- նախատեսվում է կատարել ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ ինտերնետում հրապարակվող տեղեկատվության ստանդարտացմանն ուղղված աշխատանքներ, որը հնարավորություն կտա մշակելու համապատասխան գործիքներ, որպեսզի սպառողը կարողանա մեկ պատուհանից կատարել իր պահանջներին առավելագույնս համապատասխանող ֆինանսական ծառայության ընտրություն,
- իրականացվելու են կենսաթոշակային բարեփոխումների լուսաբանման աշխատանքներ. մշակվելու են հանրամատչելի տեղեկատվական գրքույկներ,
- ֆինանսատնտեսագիտական թեմաներով կազմակերպվելու են խաղ-մրցույթներ դպրոցականների միջև,
- կատարելագործվելու, զարգանալու և համալրվելու է ֆինանսական ոլորտի սպառողների համար նախատեսված ինտերնետային կայքը:

ՀՀ կենտրոնական բանկը 2011 թվականին շարունակելու է «Խորհրդատվության, համագործակցության և տեղեկատվության փոխանակման վերաբերյալ» ԱՀՄԿ-ի (International Organization of Securities Commissions) բազմակողմանի համաձայնության հուշագրին (Multilateral Memorandum of Understanding (MOU) concerning consultation and cooperation and the exchange of information) միանալու հետ կապված աշխատանքները: Մասնավորապես՝ ԱՀՄԿ-ի կողմից սահմանված սկզբունքների բավարարման համար, որը նշված հուշագրին միանալու նախապայմաններից մեկն է, Կենտրոնական բանկը շարունակելու է արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության՝ ԱՀՄԿ-ի սկզբունքներին համապատասխանեցման ակտիվ քաղաքականությունը: Հուշագրին միանալու արդյունքում հուշագիրը ստորագրած երկրների հետ արժեթղթերի շուկայի կարգավորման համար անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման հիմքեր կստեղծվեն:

Ճգնաժամային իրավիճակներում արագ կողմնորոշվելու և հմտություններ ձեռք բերելու նպատակով 2011թ. նախատեսվում է անցկացնել ճգնաժամային կառավարման սիմուլյացիոն խաղեր, որոնք կօգնեն համապատասխան կողմերին ամբողջական պատկերացում կազմելու արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների մասին և պատրաստ լինելու որոշումների արագ կայացմանն ու անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը:

Ֆինանսական կայունության ապահովման համատեքստում 2011թ. նախատեսվում է նաև շարունակել համախմբված վերահսկողությանն հետ կապված կանոնակարգերի մշակման աշխատանքները, ինչը հնա-

րավորություն կընձեռի բացահայտելու ներխմբային գործարքների ազդեցությունը ֆինանսական խմբի ֆինանսական վիճակի, կապիտալի համարժեքության, ինչպես նաև խմբի գործունեությամբ պայմանավորված հնարավոր ռիսկերի վրա: ՀՀ օրենսդրական դաշտում համախմբված վերահսկողության հիմնարար դրույթների ամրագրմանը զուգընթաց, համապատասխան փոփոխություններ կիրականացվեն նաև վերահսկողական ձեռնարկներում: Ի լրումն առանձին ֆինանսական կազմակերպությունների վերահսկողության գործընթացի, կձևավորվի ֆինանսական խմբերի (որոնց կազմում ընդգրկվում են մեկից ավելի ֆինանսական կազմակերպություններ) համախմբված վերահսկողության ընթացակարգ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության ապահովումը, վճարահաշվարկային համակարգի անխափան գործունեության ու զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության ու հետագա զարգացման համապատասխան պայմանների ապահովումը, ինչպես նաև ներդրողների և ֆինանսական ծառայությունների սպառողների շահերի պաշտպանությունը օրենքով ՀՀ կենտրոնական բանկին վերապահված կարգավորման և վերահսկողության իրավասությունների շրջանակներում նրա կողմից իրականացվող կարևորագույն խնդիրներից են:

Ֆինանսական համակարգի վերահսկողության և կարգավորման կազմակերպումը Կենտրոնական բանկում

Կենտրոնական բանկում ֆինանսական համակարգի վերահսկողության ու կարգավորման գործառույթները իրականացվում են հիմնականում հետևյալ աստիճանակարգով (ներքևից վերև).

1. ***Կենտրոնական բանկի կառուցվածքային ստորաբաժանումներ.*** Ֆինանսական համակարգի վերահսկողության և կարգավորման համար պատասխանատու և աջակցող ԿԲ հիմնական ստորաբաժանումներն են՝ Ֆինանսական վերահսկողության, Ֆինանսական համակարգի կայունության և զարգացման, Ֆինանսական համակարգի կարգավորման, Վիճակագրության, Իրավաբանական վարչությունները, Ֆինանսական դիտարկումների կենտրոնը[1]:
2. ***Կենտրոնական բանկի մշտական գործող հանձնաժողովներ.*** Ֆինանսական համակարգի վերահսկողության և կարգավորման գործառույթների իրականացմանը աջակցում են Կենտրոնական բանկի վարչությունը և Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը:
   - ✓ Կենտրոնական բանկի վարչությունը Կենտրոնական բանկի նախագահին առընթեր խորհրդակցական մարմին է, որի անդամներն են՝ ՀՀ ԿԲ նախագահը, ՀՀ ԿԲ նախագահի տեղակալը, ստորաբաժանումների ղեկավարները: Վարչության հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են երկու շաբաթը մեկ անգամ, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:
   - ✓ Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը խորհրդակցական մարմին է և ունի իր իրավասությունների սահմաններում եզրակացություններ տալու իրավունք: Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի անդամներն են՝ ՀՀ ԿԲ նախագահը (հանձնաժողովի նախագահն է), ՀՀ ԿԲ նախագահի տեղակալը (հանձնաժողովի նախագահի տեղակալն է), ՀՀ ԿԲ ֆինանսական վերահսկողության վարչության պետը, ՀՀ ԿԲ ֆինանսական համակարգի կայունության և զարգացման վարչության պետը, ՀՀ ԿԲ ֆինանսական համակարգի կարգավորման վարչության պետը, ՀՀ ԿԲ իրավաբանական վարչության պետը: Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ:

[1] *Ֆինանսական վերահսկողություն և կարգավորում իրականացնող ստորաբաժանումների խնդիրների ու գործառույթների վերաբերյալ տես www.cba.am կայքում:*

3. ***Կենտրոնական բանկի նախագահ.*** Կենտրոնական բանկի նախագահը Կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձն է: Կենտրոնական բանկի նախագահը պատասխանատու է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված ԿԲ խնդիրների իրագործման համար:
4. ***Կենտրոնական բանկի խորհուրդ.*** Կենտրոնական բանկի խորհուրդը ԿԲ կառավարման բարձրագույն մարմինն է: Խորհուրդը ընդունում է նորմատիվ և անհատական որոշումներ: Խորհուրդը կազմված է ԿԲ նախագահից, նրա տեղակալից և հինգ անդամներից: Խորհրդի անդամը պատասխանատվություն է կրում ԿԲ խորհրդի կողմից գործունեության կոնկրետ ոլորտներում իրեն վերապահված պարտականությունների իրականացման համար: ԿԲ խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ նախագահի, նրա տեղակալի կամ խորհրդի առնվազն երեք անդամի պահանջով, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ կենտրոնական բանկում կարող են ստեղծվել նաև աշխատանքային խմբեր:

Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկման և կարգավորման գործընթացները

Լիցենզավորում

ԿԲ կողմից ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման գործընթացների մանրամասները նկարագրված են.

- ✓ «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում,
- ✓ «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ում,
- ✓ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքում,
- ✓ «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ում,
- ✓ «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ում,
- ✓ «Արժեթղթերը հանձնելու առաջարկի հայտարարագրի կազմը, առաջարկի և դրա պայմանների փոփոխությունների հրապարակման կարգը, առաջարկի շուկայական գնի հաշվարկման կարգը, արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկի իրականացման կարգը արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրի թույլտվության դադարեցման դեպքում, արժեթղթերի հանձնելու առաջարկն ընդունելու կամ մերժելու մասին ցանկացած հրապարակային առաջարկության կամ խորհրդի կատարման կարգը» կանոնակարգ 4/10-ում,
- ✓ «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ում,

- ✓ «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ում,
- ✓ «Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ում,
- ✓ «Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման կարգում»,
- ✓ «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ում,
- ✓ «ՀՀ տարածքում արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 11-ում,
- ✓ «Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեության լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12-ում,
- ✓ «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ում,
- ✓ «Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 17-ում,
- ✓ «Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ում,
- ✓ «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 19-ում,
- ✓ «Վարկային բյուրոների լիցենզավորումը, վարկային բյուրոների տարածքային, տեխնիկական, անվտանգության և ծրագրային հագեցվածության պահանջները» կանոնակարգ 9/01- ում:

Կարգավորում

Ֆինանսական կազմակերպությունների կարգավորման դաշտի բարեփոխումների համար, որպես կանոն, հիմք է հանդիսանում ֆինանսական համակարգի նորանոր զարգացումների արդյունքում ի հայտ եկած մարտահրավերների լուծման անհրաժեշտությունը: Կենտրոնական բանկը բացահայտում է ՀՀ ֆինանսական համակարգի կայունությանը և զարգացմանը խոչընդոտող համակարգային խնդիրները, սպառնացող ռիսկերը, հետազոտում ու առաջարկում դրանց կառուցվածքային և իրավական լուծումները: Կենտրոնական բանկը հետևում է համաշխարհային ֆինանսական շուկայում ձևավորվող միտումներին ու զարգացումներին, նոր ֆինանսական տեխնոլոգիաներին և ՀՀ ֆինանսական համա-

կարգում դրանց հնարավոր ներդրման ու կիրառման նպատակահարմարության դեպքում հանդես է գալիս համապատասխան առաջարկություններով:

Վերահսկողություն

Կենտրոնական բանկի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանումն իրականացնում է ֆինանսական կազմակերպությունների փաստաթղթային (այսուհետ՝ հեռակա) և տեղերում վերահսկողություն:

Բանկերի նկատմամբ հեռակա վերահսկողությունն իրականացվում է «Բանկերի նկատմամբ հեռակա վերահսկողության իրականացման ձեռնարկի» կանոններին համապատասխան, որով սահմանվում են հեռակա վերահսկողության իրականացման սկզբունքներն ու մեթոդները, կանոնակարգվում հեռակա վերահսկողության գործընթացները, դրանց հաջորդականությունն ու ժամկետները, ինչպես նաև հեռակա վերահսկողության մեջ ներգրավված անձանց շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները:

Բանկերի հեռակա վերահսկողության հիմնական նպատակը բանկերի հնարավոր կորուստները կանխատեսելու և/կամ նվազեցնելու համար վերջիններիս ֆինանսական վիճակի վերլուծությունների միջոցով ռիսկերի բացահայտումն ու գնահատումն է, որն իրականացվում է բանկի ընթացիկ գործունեության օպերատիվ մոնիտորինգի, բանկի իրական, ինչպես նաև սպասվող ֆինանսական վիճակի, ռիսկերի և ֆինանսական կայունության գնահատման ու վերլուծության միջոցով:

Վերլուծությունների ընթացքում բացահայտված ռիսկերի պարագայում վերահսկողը բանկի վճարունակության, ֆինանսական վիճակի կայունության, երկարաժամկետ գործունեության ապահովման նպատակով, անհրաժեշտության դեպքում առաջարկում է վերահսկողական միջոցառումների ցանկ: Հեռակա վերահսկողության արդյունքում բացահայտված խնդիրները կարող են հիմք հանդիսանալ նաև տեղերում ստուգումների իրականացման համար կամ կարող են ներառվել համալիր ստուգման ծրագրերում: Հեռակա վերահսկողությունը կարևորվում է նաև այն առումով, որ, ժամանակին ու ճիշտ բացահայտելով բանկի խնդիրներն ու ռիսկերը, հնարավորություն է տալիս բարձրացնելու ընդհանուր վերահսկողության արդյունավետությունը՝ վերահսկողական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ու վերստուգվող անձանց մոտ ստուգումների պլանավորման միջոցով:

Կենտրոնական բանկը ՀՀ տարածքում գործող բանկերում և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում տեղերում վերստուգումներ է իրականացնում համաձայն «Բանկերում վերստուգումների իրականացման ձեռնարկի»: Բանկի տարբեր ոլորտների վերահսկողությունն իրականացնելիս վերահսկողները գնահատում են բանկի ներքին հսկողության համակարգի, իրականացվող գործընթացների և այդ ոլորտների գործունեությունը կարգավորող ներքին քաղաքականությունների, ընթացակարգերի և կարգերի առկայությունը և կիրառելիությունը: Գնահատում են բանկի ներքին հսկողության համակարգը, ներքին աուդիտի գործունեության արդյունավետությունը և պարզում՝ արդյոք բանկի աշխատակիցները գործում են բանկի ղեկավարության կողմից սահմանված սկզբունքներին համապատասխան: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում բանկի կառավարման համակարգի վերլուծությանը և դրա հետ կապված ռիսկերի բացահայտմանը, մասնավորապես՝ բանկի խորհրդի և գործադիր ղեկավարության միջև իրավունքների և պատասխանատվության սահմանազատմանը:

Էապես կարևորվում է բանկի գործունեության այն բնագավառների բացահայտումը, որոնք առավել խոցելի են և զգայուն ռիսկերի նկատմամբ: Հենց այդ բնագավառները պետք է մանրակրկիտ վերստուգվեն:

Տեղերում վերահսկողությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- ակտիվների որակ,
- պարտավորություններ և կապիտալ,

- եկամտաբերություն,
- իրացվելիություն,
- կառավարում,
- շուկայական վարքագծի վերահսկողություն,
- այլ ոլորտներ (հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրականացում, համակարգչային և տեղեկատվական համակարգեր, ներքին և արտաքին աուդիտ, Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում և այլն),
- բանկի ընդհանուր գնահատում:

Ստուգման արդյունքների հիման վրա կազմվում է բանկի ստուգման հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են իրականացված ստուգման ուղղությունները, շրջանակը, բանկում բացահայտված խնդիրները, ռիսկերը, բանկի ֆինանսական վիճակը, հիմնական տնտեսական նորմատիվները, բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը (ՔԱՄԵԼՍ), ինչպես նաև ստուգման վերաբերյալ ներկայացվում են եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ:

Ապահովագրական գործունեություն իրականացնող ընկերությունների (ապահովագրական ընկերություններ և ապահովագրական բրոքերային ընկերություններ) հեռակա վերահսկողությունն իրականացվում է «Ապահովագրական գործունեություն իրականացնողների մոտ հեռակա վերահսկողության իրականացման ձեռնարկի» համաձայն՝ հիմնական շեշտադրումներն անելով տվյալների ճշգրտության, համադրելիության և արժանահավատության սկզբունքների վրա: Ձեռնարկում սահմանվում են հեռակա վերահսկողության իրականացման սկզբունքներն ու մեթոդները, կանոնակարգվում հեռակա վերահսկողության գործընթացները, դրանց հաջորդականությունն ու ժամկետները, ինչպես նաև հեռակա վերահսկողության մեջ ներգրավված անձանց շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Հեռակա վերահսկողության արդյունքներն ամփոփվում են ամսական պարբերականությամբ կազմվող վերահսկողական ամփոփ հաշվետվություններում և դրանց արդյունքներով ընկերություններին ուղարկվող առաջարկություններում: Ամփոփ հաշվետվություններում բացահայտվում են ընկերության գործունեությունը բնութագրող ցուցանիշների էական փոփոխությունները, ներկայացվում են գործունեության հիմնական միտումներն ու դրանց փոփոխությունները, գնահատվում է ընկերության ներկա և սպասվող ֆինանսական վիճակը, նշվում են հիմնախնդիրները, գործունեության ռիսկային բնագավառները: Հեռակա վերահսկողության տարրերից են ներկայացվող տեղեկությունների հիման վրա ընկերությունների ռիսկերի վերլուծությունները, որոնք իրենց հերթին ուղղորդում են վերահսկողներին տեղերում ստուգումների կիզակետերի և ուղղությունների ընտրության խնդրում, ինչն իր հերթին առավել օպտիմալ և նպատակային է դարձնում տեղերում ստուգումների իրականացման գործընթացները:

Ապահովագրական ընկերությունների հեռակա վերահսկողության հիմնական նպատակը ընկերությունների հնարավոր ռիսկերը կանխատեսելու, վաղ բացահայտելու և նվազեցնելու համար դրանց ֆինանսական վիճակի վերլուծությունների միջոցով ռիսկերի բացահայտումն ու գնահատումն է:

Ապահովագրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների՝ տեղերում ստուգումներն իրականացվում են համաձայն «ՀՀ տարածքում ապահովագրական գործունեություն իրականացնողների մոտ (տեղերում) ստուգումների իրականացման ձեռնարկի»: Տեղերում վերահսկողությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով՝

- բուն ապահովագրություն (անդերրայթինգ),
- ակտիվների որակ,
- կապիտալ և եկամտաբերություն,
- կառավարում,

- վերաապահովագրություն,
- ապահովագրական միջնորդների հետ հարաբերություններ,
- շուկայական վարքագծի վերահսկողությունը (ապահովադիրների շահերի պաշտպանություն, շուկայական վարվելակերպի կանոնների պահպանում)
- այլ ոլորտներ (հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրականացում, համակարգչային և տեղեկատվական համակարգեր և այլն):

Ստուգման արդյունքների հիման վրա կազմվում է ընկերության ստուգման հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են իրականացված ստուգման ուղղությունները, շրջանակը, ընկերության բացահայտված խնդիրները, ռիսկերը, ֆինանսական վիճակը, հիմնական տնտեսական նորմատիվները, ինչպես նաև ստուգման վերաբերյալ ներկայացվում են եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ:

Ներդրումային ընկերությունների տեղերում և հեռակա վերահսկողության հիմնական նպատակն է կանխատեսել և նվազեցնել ներդրումային ընկերությունների կողմից հնարավոր չարաշահումները, բացահայտել բոլոր այն խնդիրները, որոնք կարող են ապագայում ազդել ներդրումային ընկերության ֆինանսական կայունության, ինչպես նաև ներդրումային ընկերության հաճախորդների նկատմամբ ընկերության ունեցած պարտավորությունները կատարելու ունակության վրա: Նշված նպատակը իրականացվում է վերջիններիս գործունեության հեռակա վերահսկողության (օրական, շաբաթական, ամսական, եռամսյակային,տարեկան հաշվետվություններ) և տեղերում ստուգումների միջոցով:

Ներդրումային ընկերությունների տեղերում ստուգումներն իրականացվում են «Ներդրումային ընկերություններում ստուգումների իրականացման ձեռնարկի», «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի ստուգումների իրականացման ձեռնարկի» համաձայն, որոնցով սահմանվում են տեղերում ստուգումներին նախապատրաստվելու, բուն ստուգման գործընթացները (ստուգման ուղղությունները), ինչպես նաև ստուգման արդյունքների ամփոփումը:

Տեղերում վերահսկողությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- ակտիվներ,
- պարտավորություններ,
- կապիտալ և եկամտաբերություն,
- կառավարում,
- գործարար վարվելակերպ,
- այլ ոլորտներ (հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրականացում, Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում և այլն):

Ստուգման արդյունքների հիման վրա կազմվում է ներդրումային ընկերության ստուգման հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են իրականացված ստուգման ուղղությունները, շրջանակը, բացահայտված խնդիրները, ռիսկերը, ներդրումային ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև ստուգման վերաբերյալ ներկայացվում են եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ: Հաշվետվության մեջ ներառվում է նաև ներդրումային ընկերության գործունեության առանձին ուղղություններին տրված գնահատականների ամփոփ մատրիցը:

Կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի նկատմամբ տեղերում և հեռակա վերահսկողության հիմնական նպատակը օրենքով այս անձանց վերապահված գործառույթների արդյունավետ իրականացման, այդ գործառույթների իրականացման ընթացքում օրենքի և դրան համապատասխան ընդունված իրավական ակտերով սահմանված պահանջների խախտումների բացահայտումը և հետագայում կանխարգելումն է: Արժեթղթերի շուկայի այս մասնակիցների նկատմամբ վերահսկողությունն ուղղված է նաև նրանց գործունեության և ֆինանսական վիճակի վեր-

լուծությանը՝ շուկայում նրանց մատուցած ծառայությունների հուսալիության և պատշաճ իրականացման հնարավորության ապահովման նպատակով:

Կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի տեղերում վերահսկողությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- Կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեությունը կարգավորող օրենքների, կանոնների և իրավական այլ ակտերի պահանջներին դրանց գործունեության համապատասխանության ստուգում:
- Կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի (այդ թվում՝ վերահսկող ծառայության) կողմից Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվություններում և այլ տեղեկություններում (անկախ կրիչի ձևից) արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում:
- Կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի ֆինանսական վիճակի վերլուծություն:
- Կենտրոնական բանկի կողմից Կարգավորվող շուկայի օպերատորին և Կենտրոնական դեպոզիտարիային տրված հանձնարարականների ու առաջարկությունների կատարման ընթացքի և արդյունքների ստուգում:
- Կարգավորվող շուկայի օպերատորին և Կենտրոնական դեպոզիտարիային թույլատրված այլ գործունեության շրջանակներում իրականացրած գործունեությունը կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի պահանջներին այս մասնակիցների գործունեության համապատասխանության ստուգում:

Ստուգման արդյունքների հիման վրա կազմվում է կարգավորվող շուկայի օպերատորի (Կենտրոնական դեպոզիտարիայի) ստուգման հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են իրականացված ստուգման ուղղությունները, շրջանակը, բացահայտված խնդիրները, ռիսկերը, ֆինանսական վիճակը, ինչպես նաև ստուգման վերաբերյալ ներկայացվում են եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ:

Արժեթղթերի հրապարակային վաճառքի առաջարկությամբ հանդես եկող ընկերությունների և հաշվետու թողարկողների նկատմամբ (այսուհետ՝ թողարկող) ստուգումների անցկացման հիմնական նպատակն է ապահովել արժեթղթերում ներդրողների համար այդ արժեթղթերի և դրանց թողարկողների վերաբերյալ ժամանակին, արժանահավատ և օրենսդրությամբ սահմանված շրջանակներում ամբողջական տեղեկատվություն, բացահայտել և կանխարգելել ինսայդերների կողմից ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումը, բացահայտել և կանխարգելել բոլոր այն խնդիրները, որոնք կարող են ապագայում ազդել թողարկողի՝ արժեթղթերի արդար գնագոյացման և ներդրողների նկատմամբ ընկերության ունեցած պարտավորությունները կատարելու հնարավորության վրա:

Թողարկող ընկերություններում հեռակա վերահսկողությունն իրականացվում է ընթացիկ վերահսկողության միջոցով, որը ենթադրում է ազդագրերի և առևտրի ազդագրերի, միջանկյալ հաշվետվությունների, էական փաստերի, ներքին տեղեկատվության ուսումնասիրություն և հնարավոր խնդիրների բացահայտում և կանխարգելում:

Թողարկող ընկերություններում տեղերում վերահսկողությունն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի և արժեթղթերի շուկայի օրենսդրության պահանջների հիման վրա, որոնցով սահմանվում է տեղերում ստուգումների նախապատրաստման, իրականացման և արդյունքների ամփոփման գործընթացը:

Թողարկող ընկերություններում տեղերում ստուգումներն իրականացվում են հետևյալ հիմնական ուղղություններով.

- Թողարկողի կողմից ներկայացված ազդագրերում և առևտրի ազդագրերում, միջանկյալ հաշվետվություններում էական փաստերի, ներքին տեղեկատվությունների վերաբերյալ կազմված հաշվետվությունների, ինչպես նաև թողարկողի կողմից հրապարակված այլ տեղեկատվությունների ամբողջականության և արժանահավատության ստուգում:
- Կենտրոնական բանկի կողմից թողարկողին տրված հանձնարարականների ու առաջարկությունների կատարման ընթացքի և արդյունքների ստուգում:

Ստուգման արդյունքների հիման վրա կազմվում է թողարկող ընկերության ստուգման հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են իրականացված ստուգման ուղղությունները, շրջանակը, բացահայտված խնդիրները, թողարկողի ֆինանսական վիճակը, ինչպես նաև ստուգման վերաբերյալ ներկայացվում են եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ:

Վարկային կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, գրավատների, արտարժույթի փոխանակման կետերի հեռակա վերահսկողությունն իրականացվում է բանկերի հեռակա վերահսկողության տրամաբանությամբ: Նշված կազմակերպությունների հեռակա վերահսկողության իրականացման համար հիմք են հանդիսանում այս կազմակերպությունների կողմից ԿԲ ներկայացված հաշվետվությունները:

Գրավատներում, փոխանակման կետերում տեղերում վերստուգումներն իրականացվում են հիմնականում օրենսդրության պահանջներին այս կազմակերպությունների գործունեության համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Շուկայական վարվելակերպի կանոնների պահպանման վերահսկողության նպատակով ստուգվում է բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների կողմից հրապարակվող տեղեկատվությունը: Մասնավորապես՝ պարբերաբար ուսումնասիրվում է վերոնշյալ կազմակերպությունների ինտերնետային կայքերում հրապարակվող տեղեկատվության և թերթերում հրապարակվող հաշվետվությունների համապատասխանությունը «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ով սահմանված պահանջներին:

Ընդհանուր առմամբ, ֆինանսական կազմակերպություններում ստուգումների ծրագիրը հաստատում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը: Յուրաքանչյուր ստուգման ավարտից հետո վերստուգող խմբի կողմից պատրաստվում է ստուգման հաշվետվություն և ներկայացվում է Կենտրոնական բանկի խորհրդին:

Հավելված 2. ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը դրանց մասնաճյուղերը

	Առևտրային բանկեր	Մասնաճյուղեր	
		31.12.2009	31.12.2010
1	ՎՏԲ - Հայաստան բանկ	68	68
2	Արդշինինվեստբանկ	55	55
3	ԱԿԲԱ - Կրեդիտ Ագրիկոլ բանկ	40	40
4	Հայէկոնոմբանկ	36	36
5	Յունիբանկ	34	34
6	Արարատ բանկ	33	33
7	Կոնվերս բանկ	28	28
8	Հայբիզնեսբանկ	25	25
9	Արցախ բանկ	17	17
10	Առէկսիմբանկ - Գազպրոմբանկի խումբ	15	15
11	Ինեկո բանկ	11	11
12	Անելիք բանկ	10	10
13	ՊրոԿրեդիտ բանկ	9	9
14	Ամերիա բանկ*	6	6
15	Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	6	6
16	ԲՏԱ բանկ	5	5
17	Պրոմեթեյ բանկ	4	4
18	Զարգացման հայկական բանկ	3	3
19	Բիբլոս Բանկ Արմենիա	3	3
20	Մելլաթ բանկ		
21	Արմսվիսբանկ		
	Ընդամենը	**391**	**408**

** 2009թ. Ամերիա բանկի մասնաճյուղերի մեջ ներառված են նաև Կասկադ բանկի մասնաճյուղերը:*

Հավելված 3. ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշներ

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշներ	Արժույթ	31.12.08	31.12.09	Փոփոխությունը 31.12.10-31.12.09	31.03.10	Փոփոխությունը 31.03.10-31.12.09	30.06.10	Փոփոխությունը 30.06.10-31.03.10
Կանխիկ դրամական միջոցներ	Դ	28450288	37996090	14.8%	28887863	-24.0%	30325937	5.0%
	Ա	13176321	26677242	17.2%	37680230	41.2%	33835415	-10.2%
Թղթակցային հաշիվներ ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ	Դ	38086828	44128365	57.7%	27436710	-37.8%	40849173	48.9%
	Ա	65913580	148624060	-40.6%	157342374	5.9%	97108424	-38.3%
Թղթակցային հաշիվներ բանկերում և այլ պահանջներ բանկերի նկատմամբ	Դ	8656500	7917917	235.2%	12413774	56.8%	13096850	5.5%
	Ա	86581202	141790353	-25.5%	148422295	4.7%	114774650	-22.7%
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Դ	6587006	14513224	9.5%	13111075	-9.7%	13069110	-0.3%
	Ա	1527217	2085087	123.8%	2428453	16.5%	2619672	7.9%
Պետական արժեթղթեր		81107632	109191067	38.6%	106748060	-2.2%	112437756	5.3%
Պարտավորություններ ռեպո համաձ. ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոպով ձեռք բերված արտարժույթի գծով	Դ	-5073975	-33429477	35.0%	-33307234	-0.4%	-38353208	15.1%
	Ա	-2336293	-12586654	-2.5%	-13243056	5.2%	-15981427	20.7%
Ռեպո համաձայնագրեր (առանց միջբանկային ռեպոների)	Դ	713847	11494620	11.9%	12412652	8.0%	15674368	26.3%
	Ա	318411	9485661	-9.4%	10042766	5.9%	9053030	-9.9%
Վարկեր իրավաբանական անձանց	Դ	120666055	123864354	12.0%	128792981	4.0%	127072994	-1.3%
	Ա	168984403	272064880	40.6%	298582781	9.7%	305369933	2.3%
Վարկեր ֆիզիկական անձանց	Դ	240194442	194193234	11.0%	198156751	2.0%	198166653	0.0%
	Ա	68169327	91713712	20.6%	99716016	8.7%	99901814	0.2%
Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին	Դ	14138116	13222181	6.6%	14208410	7.5%	13324127	-6.2%
	Ա	4637469	8307450	225.8%	8001619	-3.7%	15088759	88.6%
Ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստներ		-11932425	-18406948	-3.2%	-17585261	-4.5%	-17299849	-1.6%
Հաշվարկված ստացվելիք տոկոսներ		6094732	9032156	71.6%	11316431	25.3%	12490527	10.4%
Հիմնական միջոցներ		51773338	61279249	9.4%	60742426	-0.9%	64398231	6.0%
Այլ արժեթղթեր		3393287	4330676	31.5%	6267425	44.7%	5128388	-18.2%
Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկային լիզինգի և ֆակտորինգի)		9785213	7239913	346.8%	8077728	11.6%	13735457	70.0%
Այլ ակտիվներ		24084979	51235076	33.4%	56938781	11.1%	63352619	11.3%
Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ		**1023697500**	**1325963488**	**17.7%**	**1383592050**	**4.3%**	**1329239403**	**-3.9%**

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշներ	Արժույթ	30.09.10	Փոփոխությունը 30.09.10-30.06.10	31.12.10	Փոփոխությունը 31.12.10-30.09.10	2010 տարեվերջ	Փոփոխությունը 31.12.10-31.12.09	
Կանխիկ դրամական միջոցներ	Դ	31836175	5.0%	43621525	37.0%	43621525	5625435	14.8%
	Ա	36890483	9.0%	31278419	-15.2%	31278419	4601177	17.2%
Թղթակցային հաշիվներ ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ	Դ	57335950	40.4%	69592104	21.4%	69592104	25463739	57.7%
	Ա	79341089	-18.3%	88236486	11.2%	88236486	-60387574	-40.6%
Թղթակցային հաշիվներ բանկերում և այլ պահանջներ բանկերի նկատմամբ	Դ	21227525	62.1%	26538429	25.0%	26538429	18620512	235.2%
	Ա	113214174	-1.4%	105607753	-6.7%	105607759	-36182594	-25.5%
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Դ	15264766	16.8%	15895880	4.1%	15895880	1382656	9.5%
	Ա	2590170	-1.1%	4665502	80.1%	4665502	2580415	123.8%
Պետական արժեթղթեր		128331317	14.1%	151297921	17.9%	151297921	42106854	38.6%
Պարտավորություններ ռեպո համաձ. ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոպով ձեռք բերված արտարժույթի գծով	Դ	-39619817	3.3%	-45139332	13.9%	-45139332	-11709855	35.0%
	Ա	-22563406	41.2%	-12273346	-45.6%	-12273346	313308	-2.5%
Ռեպո համաձայնագրեր (առանց միջբանկային ռեպոների)	Դ	15272612	-2.6%	12856911	-15.8%	12856911	1362291	11.9%
	Ա	8552478	-5.5%	8595881	0.5%	8595881	-889780	-9.4%
Վարկեր իրավաբանական անձանց	Դ	129847077	2.2%	138671019	6.8%	138671019	14806665	12.0%
	Ա	340227907	11.4%	382486163	12.4%	382486163	110421283	40.6%
Վարկեր ֆիզիկական անձանց	Դ	200435590	1.1%	215641862	7.6%	215641862	21448628	11.0%
	Ա	101650432	1.8%	110647012	8.9%	110647012	18933300	20.6%
Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին	Դ	13773193	3.4%	14098871	2.4%	14098871	876690	6.6%
	Ա	24475211	62.2%	27067035	10.6%	27067035	18759585	225.8%
Ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստներ		-17507196	1.2%	-17819227	1.8%	-17818829	588119	-3.2%
Հաշվարկված ստացվելիք տոկոսներ		12807293	2.5%	15495994	21.0%	15495994	6463838	71.6%
Հիմնական միջոցներ		64546005	0.2%	67031371	3.9%	67072179	5792930	9.5%
Այլ արժեթղթեր		6037704	17.7%	5695316	-5.7%	5695316	1364640	31.5%
Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկային լիզինգի և ֆակտորինգի)		20697788	50.7%	32347103	56.3%	32347103	25107190	346.8%
Այլ ակտիվներ		73170482	15.5%	68335815	-6.6%	68309291	17074215	33.3%
Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ		**1417835002**	**6.7%**	**1560472467**	**10.1%**	**1560487155**	**234523667**	**17.7%**

Հավելված 3 *(շարունակություն)*

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշներ		Արժույթ	31.12.08	31.12.09	Փոփոխությունը 31.12.10-31.12.09	31.03.10	Փոփոխությունը 31.03.10-31.12.09	30.06.10	Փոփոխությունը 30.06.10-31.03.10
Բանկերի թղթակցային հաշիվները		Դ	1777354	2175587	4.8%	1070479	-50.8%	946659	-11.6%
		Ա	3645044	4355481	112.6%	9401317	115.9%	8874115	-5.6%
Այլ պարտավորություններ բանկերի (ներառյալ ԿԲ) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		Դ	101174369	97314211	21.7%	85393297	-12.2%	83660962	-2.0%
		Ա	170590537	201302878	42.9%	203437311	1.1%	205177988	0.9%
Ցպահանջ պարտավորություններ իրավաբանական անձանց նկատմամբ		Դ	70036918	72248369	18.5%	66537878	-7.9%	69269490	4.1%
		Ա	54907210	89710479	-15.8%	116163011	29.5%	83445697	-28.2%
Ցպահանջ պարտավորություններ ֆիզիկական անձանց նկատմամբ		Դ	31074703	30945052	29.4%	27784091	-10.2%	32573856	17.2%
		Ա	30797457	59575814	7.3%	64409499	8.1%	56677097	-12.0%
Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ		Դ	45796099	20397548	0.4%	14389393	-29.5%	12564737	-12.7%
		Ա	43045053	106068383	-20.5%	103842377	-2.1%	86612582	-16.6%
Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ		Դ	71561027	40426112	43.9%	41724051	3.2%	44742098	7.2%
		Ա	102242248	207420550	18.1%	227146700	9.5%	210218626	-7.5%
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ			16222730	67583103	19.7%	81783743	21.0%	89767210	9.8%
Հաշվարկված վճարվելիք տոկոսներ			6621563	10184797	14.4%	11143379	9.4%	10092748	-9.4%
Այլ պարտավորություններ			38783344	37871602	53.9%	43952249	16.1%	40921590	-6.9%
Հաշվեկշռային ընդհանուր պարտավորություններ			**788275656**	**1047579966**	**18.5%**	**1098178775**	**4.8%**	**1035545455**	**-5.7%**
Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ			152490167	188640844	8.0%	192791844	2.2%	195211878	1.3%
Գլխավոր պահուստ			6458310	8208307	83.7%	8230579	0.3%	14768955	79.4%
Բանկի կողմից հետգնված սեփական բաժնետոմսեր			0	0					
Չբաշխված շահույթ (վնաս)	Ընթացիկ ժամանակաշրջանի		27743274	8969666	239.7%	4316755	-51.9%	12167827	181.9%
	Նախորդ ժամանակաշրջանի		37191188	55768602	-7.7%	64551631	15.7%	56281227	-12.8%
Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ			**235421844**	**278383522**	**14.6%**	**285413275**	**2.5%**	**293693948**	**2.9%**
Ստացված գրավ			1489089838	1771046028	29.2%	1765332148	-0.3%	1980447189	12.2%
այդ թվում՝ պետ.արժեթղթեր			1160216	828696	235.9%	626631	-24.4%	4308650	587.6%
Ստացված երաշխավորություն			419398584	709258935	54.9%	781683203	10.2%	848474513	8.5%
Հաշվեկշռից դուրս գրված	վարկեր		7678839	22666741	39.3%	28781925	27.0%	28535198	-0.9%
	դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ		2488080	3495283	-12.3%	3531956	1.0%	3435883	-2.7%
	տոկոսներ		3206455	6114772	46.3%	7443082	21.7%	7857518	5.6%
Տրամադրված երաշխավորություններ			26349471	32485326	59.1%	34289966	5.6%	36950253	7.8%
Տրամադրված գրավներ	ընդամենը		2975955	4770903	-14.1%	4872335	2.1%	8201737	68.3%
	այդ թվում՝ պետական արժեթղթեր		114495	429000	255.2%	225000	-47.6%	4016850	1685.3%

Դ - ՀՀ դրամ *Ա – Արտարժույթ*

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշներ		Արժույթ	30.09.10	Փոփոխությունը 30.09.10-30.06.10	31.12.10	Փոփոխությունը 31.12.10-30.09.10	2010 տարեվերջ	Փոփոխությունը 31.12.10-31.12.09	
Բանկերի թղթակցային հաշիվները		Դ	600080	-36.6%	2279773	279.9%	2279773	104186	4.8%
		Ա	7031934	-20.8%	9259253	31.7%	9259253	4903772	112.6%
Այլ պարտավորություններ բանկերի (ներառյալ ԿԲ) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		Դ	101698123	21.6%	118448941	16.5%	118448697	21134486	21.7%
		Ա	240716287	17.3%	287640560	19.5%	287640560	86337682	42.9%
Ցպահանջ պարտավորություններ իրավաբանական անձանց նկատմամբ		Դ	77256253	11.5%	85607927	10.8%	85607927	13359558	18.5%
		Ա	86784196	4.0%	75491551	-13.0%	75491551	-14218928	-15.8%
Ցպահանջ պարտավորություններ ֆիզիկական անձանց նկատմամբ		Դ	34995661	7.4%	40050189	14.4%	40050189	9105137	29.4%
		Ա	61882228	9.2%	63895196	3.3%	63895196	4319382	7.3%
Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ		Դ	16628185	32.3%	20471440	23.1%	20471440	73892	0.4%
		Ա	71186093	-17.8%	84367236	18.5%	84367236	-21701147	-20.5%
Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ		Դ	49784482	11.3%	58166076	16.8%	58166076	17739964	43.9%
		Ա	219844560	4.6%	245012246	11.4%	245012246	37591696	18.1%
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ			86727974	-3.4%	80880885	-6.7%	80880885	13297782	19.7%
Հաշվարկված վճարվելիք տոկոսներ			11238633	11.4%	11654088	3.7%	11654913	1470116	14.4%
Այլ պարտավորություններ			44809890	9.5%	58295645	30.1%	58305970	20434368	54.0%
Հաշվեկշռային ընդհանուր պարտավորություններ			**1111184579**	**7.3%**	**1241521006**	**11.7%**	**1241531912**	**193951946**	**18.5%**
Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ			203799176	4.4%	203799175	0.0%	203799175	15158331	8.0%
Գլխավոր պահուստ			15079172	2.1%	15079172	0.0%	15279711	7071404	86.1%
Բանկի կողմից հետգնված սեփական բաժնետոմսեր							-	0	
Հաշվեկշռից դուրս գրված	Ընթացիկ ժամանակաշրջանի		20978391	72.4%	30468438	45.2%	30275257	21305591	237.5%
	Նախորդ ժամանակաշրջանի		51498566	-8.5%	51481736	0.0%	51481736	-4286866	-7.7%
Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ			**306650423**	**4.4%**	**318951461**	**4.0%**	**318955243**	**40571721**	**14.6%**
Ստացված գրավ			2095805747	5.8%	2288094433	9.2%	2288094433	517048405	29.2%
այդ թվում՝ պետ.արժեթղթեր			164110	-96.2%	2783363	1596.0%	2783363	1954667	235.9%
Ստացված երաշխավորություն			949868407	12.0%	1098535975	15.7%	1098535975	389277040	54.9%
Հաշվեկշռից դուրս գրված	վարկեր		30571801	7.1%	31564198	3.2%	31564198	8897457	39.3%
	դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ		3382008	-1.6%	3064447	-9.4%	3064447	-430836	-12.3%
	տոկոսներ		8621936	9.7%	8943497	3.7%	8943497	2828725	46.3%
Տրամադրված երաշխավորություններ			47879677	29.6%	51683666	7.9%	51683666	19198340	59.1%
Տրամադրված գրավներ	ընդամենը		3986820	-51.4%	4096549	2.8%	4096549	-674354	-14.1%
	այդ թվում՝ պետական արժեթղթեր			-100.0%	1523906		1523906	1094906	255.2%

Հավելված 4. ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների կառուցվածքի միտումները *(%)*

Ցուցանիշներ	Արժույթ	31.12.08	31.12.09	Փոփոխությունը 31.12.10-31.12.09	31.03.10	Փոփոխությունը 31.03.10-31.12.09	30.06.10	Փոփոխությունը 30.06.10-31.03.10	30.09.10	Փոփոխությունը 30.09.10-30.06.10	31.12.10	Փոփոխությունը 31.12.10-30.09.10	2010 տարեվաճ	Փոփոխությունը 31.12.10-31.12.09
Կանխիկ դրամական միջոցներ	Դ	2.8	2.9	0.1	2.1	-0.8	2.3	0.2	2.2	0.0	2.8	0.5	2.8	-0.1
	Ա	1.3	2.0	0.7	2.7	0.7	2.5	-0.2	2.6	0.1	2.0	-0.6	2.0	0.0
Թղթակցային հաշիվներ ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ	Դ	3.7	3.3	-0.4	2.0	-1.3	3.1	1.1	4.0	1.0	4.5	0.4	4.5	1.1
	Ա	6.4	11.2	4.8	11.4	0.2	7.3	-4.1	5.6	-1.7	5.7	0.1	5.7	-5.6
Թղթակցային հաշիվներ բանկերում և այլ պահանջներ բանկերի նկատմամբ	Դ	0.8	0.6	-0.2	0.9	0.3	1.0	0.1	1.5	0.5	1.7	0.2	1.7	1.1
	Ա	8.5	10.7	2.2	10.7	0.0	8.6	-2.1	8.0	-0.6	6.8	-1.2	6.8	-3.9
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Դ	0.6	1.1	0.5	0.9	-0.1	1.0	0.0	1.1	0.1	1.0	-0.1	1.0	-0.1
	Ա	0.1	0.2	0.0	0.2	0.0	0.2	0.0	0.2	0.0	0.3	0.1	0.3	0.1
Պետական արժեթղթեր		7.9	8.2	0.3	7.7	-0.5	8.5	0.7	9.1	0.6	9.7	0.6	9.7	1.5
Պարտավորություններ ռեպո համաձ. ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոփով ձեռք բերված արտարժույթի գծով	Դ	-0.5	-2.5	-2.0	-2.4	0.1	-2.9	-0.5	-2.8	0.1	-2.9	-0.1	-2.9	-0.4
	Ա	-0.2	-0.9	-0.7	-1.0	0.0	-1.2	-0.2	-1.6	-0.4	-0.8	0.8	-0.8	0.2
Ռեպո համաձայնագրեր (առանց միջբանկային ռեպոների)	Դ	0.1	0.9	0.8	0.9	0.0	1.2	0.3	1.1	-0.1	0.8	-0.3	0.8	0.0
	Ա	0.0	0.7	0.7	0.7	0.0	0.7	0.0	0.6	-0.1	0.6	-0.1	0.6	-0.2
Վարկեր իրավաբանական անձանց	Դ	11.8	9.3	-2.4	9.3	0.0	9.6	0.3	9.2	-0.4	8.9	-0.3	8.9	-0.5
	Ա	16.5	20.5	4.0	21.6	1.1	23.0	1.4	24.0	1.0	24.5	0.5	24.5	4.0
Վարկեր ֆիզիկական անձանց	Դ	23.5	14.6	-8.8	14.3	-0.3	14.9	0.6	14.1	-0.8	13.8	-0.3	13.8	-0.8
	Ա	6.7	6.9	0.3	7.2	0.3	7.5	0.3	7.2	-0.3	7.1	-0.1	7.1	0.2
Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին	Դ	1.4	1.0	-0.4	1.0	0.0	1.0	0.0	1.0	0.0	0.9	-0.1	0.9	-0.1
	Ա	0.5	0.6	0.2	0.6	0.0	1.1	0.6	1.7	0.6	1.7	0.0	1.7	1.1
Ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստներ		-1.2	-1.4	-0.2	-1.3	0.1	-1.3	0.0	-1.2	0.1	-1.1	0.1	-1.1	0.2
Հաշվարկված ստացվելիք տոկոսներ		0.6	0.7	0.1	0.8	0.1	0.9	0.1	0.9	0.0	1.0	0.1	1.0	0.3
Հիմնական միջոցներ		5.1	4.6	-0.4	4.4	-0.2	4.8	0.5	4.6	-0.3	4.3	-0.3	4.3	-0.3
Այլ արժեթղթեր		0.3	0.3	0.0	0.5	0.1	0.4	-0.1	0.4	0.0	0.4	-0.1	0.4	0.0
Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկային լիզինգի և ֆակտորինգի)		1.0	0.5	-0.4	0.6	0.0	1.0	0.4	1.5	0.4	2.1	0.6	2.1	1.5
Այլ ակտիվներ		2.4	3.9	1.5	4.1	0.3	4.8	0.7	5.2	0.4	4.4	-0.8	4.4	0.5
Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ		**100.0**	**100.0**		**100.0**		**100.0**		**100.0**		**100.0**		**100.0**	

Ցուցանիշներ		Արժույթ	31.12.08	31.12.09	Փոփոխությունը 31.12.10-31.12.09	31.03.10	Փոփոխությունը 31.03.10-31.12.09	30.06.10	Փոփոխությունը 30.06.10-31.03.10	30.09.10	Փոփոխությունը 30.09.10-30.06.10	31.12.10	Փոփոխությունը 31.12.10-30.09.10	2010 տարեվերջ	Փոփոխությունը 31.12.10-31.12.09
Բանկերի թղթակցային հաշիվները		Դ	0.2	0.2	0.0	0.1	-0.1	0.1	0.0	0.1	0.0	0.2	0.1	0.2	0.0
		Ա	0.5	0.4	0.0	0.9	0.4	0.9	0.0	0.6	-0.2	0.7	0.1	0.7	0.3
Այլ պարտավորություններ բանկերի (ներառյալ ԿԲ) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		Դ	12.8	9.3	-3.5	7.8	-1.5	8.1	0.3	9.2	1.1	9.5	0.4	9.5	0.3
		Ա	21.6	19.2	-2.4	18.5	-0.7	19.8	1.3	21.7	1.8	23.2	1.5	23.2	4.0
Ցպահանջ պարտավորություններ իրավաբանական անձանց նկատմամբ		Դ	8.9	6.9	-2.0	6.1	-0.8	6.7	0.6	7.0	0.3	6.9	-0.1	6.9	0.0
		Ա	7.0	8.6	1.6	10.6	2.0	8.1	-2.5	7.8	-0.2	6.1	-1.7	6.1	-2.5
Ցպահանջ պարտավորություններ ֆիզիկական անձանց նկատմամբ		Դ	3.9	3.0	-1.0	2.5	-0.4	3.1	0.6	3.1	0.0	3.2	0.1	3.2	0.3
		Ա	3.9	5.7	1.8	5.9	0.2	5.5	-0.4	5.6	0.1	5.1	-0.4	5.1	-0.5
Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ		Դ	5.8	1.9	-3.9	1.3	-0.6	1.2	-0.1	1.5	0.3	1.6	0.2	1.6	-0.3
		Ա	5.5	10.1	4.7	9.5	-0.7	8.4	-1.1	6.4	-2.0	6.8	0.4	6.8	-3.3
Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ		Դ	9.1	3.9	-5.2	3.8	-0.1	4.3	0.5	4.5	0.2	4.7	0.2	4.7	0.8
		Ա	13.0	19.8	6.8	20.7	0.9	20.3	-0.4	19.8	-0.5	19.7	0.0	19.7	-0.1
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ			2.1	6.5	4.4	7.4	1.0	8.7	1.2	7.8	-0.9	6.5	-1.3	6.5	0.1
Հաշվարկված վճարվելիք տոկոսներ			0.8	1.0	0.1	1.0	0.0	1.0	0.0	1.0	0.0	0.9	-0.1	0.9	0.0
Այլ պարտավորություններ			4.9	3.6	-1.3	4.0	0.4	4.0	-0.1	4.0	0.1	4.7	0.7	4.7	1.1
Հաշվեկշռային ընդհանուր պարտավորություններ			**100.0**	**100.0**		**100.0**		**100.0**		**100.0**		**100.0**		**100.0**	
Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ			64.8	67.8	3.0	67.5	-0.2	66.5	-1.1	66.5	0.0	63.9	-2.6	63.9	-3.9
Գլխավոր պահուստ			2.7	2.9	0.2	2.9	-0.1	5.0	2.1	4.9	-0.1	4.7	-0.2	4.8	1.8
Բանկի կողմից հետգնված սեփական բաժնետոմսեր			0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Չբաշխված շահույթ (վնաս)	Ընթացիկ ժամանակաշրջանի		11.8	3.2	-8.6	1.5	-1.7	4.1	2.6	6.8	2.7	9.6	2.7	9.5	6.3
	Նախորդ ժամանակաշրջանի		15.8	20.0	4.2	22.6	2.6	19.2	-3.5	16.8	-2.4	16.1	-0.7	16.1	-3.9
